ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ
սովորող ուսանողների համար

ԻՋԵՎԱՆ–2015

# ՆԱԽԱԲԱՆ

*Սիրելի՛ ուսանողներ*

*Հիմնադրման օրվանից ի վեր Երևանի պետական համալսարանի գործունեության ուղեգիծը եղել ու մնում է համալսարանական կրթության բովանդակության և ուսման բարձր որակի ապահովումը: Այսօր ԵՊՀ-ն համազգային և տարածաշրջանային դերակատարությամբ կրթական և գիտամշակութային ինքնավար հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, զարգացումը և փոխանցումն է: Գլոբալացման արդի ժամանակաշրջանում քաղաքակրթության մարտահրավերները պահանջում են միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական պատրաստվածություն՝ կրթության որակի և բովանդակության անընդհատ կատարելագործում, բարձրագույն կրթության միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցում:*

*ԵՊՀ-ում 2007/08 ուստարվանից բոլոր մասնագիտությունների գծով մագիստրոսական ծրագրերը, իսկ 2008/09 ուստարվանից նաև բակալավրի ծրագրերն իրականացվում են կրեդիտային համակարգով: Ուսուցման նոր համակարգին անցնելը բխում է Բոլոնիայի գործընթացի պահանջներից և նպատակ ունի աստիճանական անցում կատարելու ուսման կազմակերպման ուսանողամետ համակարգին, որտեղ ուսման գործընթացի կենտրոնում ուսանողն է՝ իր անհատական կրթական կարիքներով, նախասիրություններով և ունակություններով, ապահովելով ուսումնառության ճկուն ձևերի և անհատական կրթական հետագծերի իրականացման լայն հնարավորություն:*

*Կրեդիտային համակարգի ներդրմամբ զգալիորեն բարելավվել է ձեզ առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքը և աշխատածավալը, հիմնավորված կերպով թեթևացվել լսարանային բեռնվածությունը, կրճատվել դասավանդվող առարկաների քանակը՝ իրատեսական նախադրյալներ ստեղծելով ձեր ինքնուրույն ուսումնական աշխատանքի հնարավորությունները մեծացնելու, ուսումնական ծրագրերը լավագույնս յուրացնելու և դրանցով սահմանված կրթական արդյունքները ձեռք բերելու համար:*

*Համալսարանում ներդրված կրեդիտային համակարգն ամբողջությամբ համատեղելի է Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) հետ, ինչը նորաստեղծ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ձեր ակադեմիական շարժունության (ուսանողական փոխանակումներ, ուսումնառության ժամանակահատվածներ օտարերկրյա բուհերում, կրթության շարունակում ավելի բարձր աստիճանում և այլն) ընդլայնման և որակավորումների ճանաչման դյուրացման գրավականն է: Իսկ դա կընդլայնի ձեր ապագա կարիերայի և մասնագիտական աշխատուժի զլոբալ շուկայում աշխատանք գտնելու հնարավորությունները:*

*Կրեդիտային համակարգի ներդրումը համալսարանում մեկնարկած լայնամասշտաբ կրթական բարեփոխումների սկիզբն է միայն, բարեփոխումներ, որոնք պայմանավորված են ոչ միայն Բոլոնիայի գործընթացի պահանջների ձևական կատարմամբ, այլև համալսարանում ծրագրային բարձր չափորոշիչների պահպանման և ուսման որակի բարձրացման նպատակադրությամբ, ինչի հիմնական չափանիշը մեր շրջանավարտների մասնագիտական աշխատանքով ապահովվածությունն է: Համալսարանը տարեցտարի խորացնելու և ընդլայնելու է կրեդիտային համակարգի գործառույթները՝ ձեզ համար կրթական ընտրության առավել ընդլայնված հնարավորություններ ապահովելու նպատակով:*

*Կրեդիտային համակարգով ուսումնառության ներկա ուղեցույցը պարունակում է ձեզ համար օգտակար տեղեկատվություն կրեդիտային համակարգի հիմնադրույթների, ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների ստուգման ու գնահատման նոր կարգի, ձեզ առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության և աշխատածավալների, ծրագրի բաղկացուցիչ դասընթացների և դրանցով նախանշված կրթական արդյունքների վերաբերյալ:*

*Հաջողություն և ամենայն բարիք եմ մաղթում ձեզ:*

ՌԵԿՏՈՐ՝  Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

# I ԲԱԺԻՆ

## ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է Երևանի պետական համալսարանում բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի կրեդիտային հենքով ուսումնական գործընթացի կազմակերպման միասնական կանոնները։

1.2. Կարգը ներառում է ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները, ինչպես նաև եզրափակիչ ատեստավորման կազմակերպման ընթացակարգը։

1.3. Կարգում տրված են նաև կրեդիտային համակարգում գործածվող առանձին տերմիններ, նկարագրված են համակարգի բնութագրիչները, բնորոշ գործառույթները և ընթացակարգերը։

## 2. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

### 2.1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները

Համաեվրոպական ECTS[1] կրեդիտային համակարգի հետևյալ սահմանումները և դրույթները ընդունված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում և գործում են ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում։

1. ***Կարողությունը*** գիտելիքի, իմացության և ունակությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է։ Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահատուկ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր։
2. ***Կրթական արդյունքն*** այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողն ուսումնառության ավարտին։ Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը հնարավորություն է տալիս դատելու դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման վերաբերյալ։ Կրթական արդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները։
3. ***Կրթական (ուսումնական) մոդուլը*** ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն միավորն է, որի համար կրեդիտ է տրվում։ Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ։ Կրթական մոդուլին հատկացված կրեդիտներն ուսանողին շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով։
4. ***ECTS կրեդիտը*** դասընթացն (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր է, որը տրվում է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո։
5. ***ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են.***

– ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր

---

[1] Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ։

տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,
- կրեդիտը չափում է ուսանողի միայն ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, կարևորությունը և մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),
- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ գնահատման միավորների) հետ միասին,
- ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով (գնահատման միավորներով),
- կրեդիտը չի արտահայտում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

6. ***Կրեդիտային համակարգը*** ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:
7. ***Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը*** միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:
8. ***ECTS համակարգի կարևորագույն հատկանիշներն են.***

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների ելքային կրթական արդյունքները և հատկացված կրեդիտները, ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են նախապես և հասանելի են դրանցից օգտվողներին (ուսանողներին և դասախոսներին):

## 2.2. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները

*2.2.1. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները երկուսն են՝*

*ա) կրեդիտների փոխանցում.*

այս գործառույթը ենթադրում է ուսումնական ծրագրի (պլանի) բոլոր դասընթացների և կրթական մոդուլների աշխատածավալների արտահայտում կրեդիտների օգնությամբ, ինչը հնարավոր է դարձնում կրեդիտներով չափված կրթական արդյունքի փոխանցումը ծրագրերի և բուհերի միջև,

*բ) կրեդիտների կուտակում.*

այս գործառույթի իրականացումը ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն, ինչն իրականացվում է ուսանողի անհատական ուսումնական ծրագրի օգնությամբ[2]:

Նշված գործառույթները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով:

*2.2.2. Կրեդիտների փոխանցման գործառույթի հիմնական հատկանիշներն են.*

- գործում են մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալները տրված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով,
- կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի պահանջներին համապատասխան:

*2.2.3. Կրեդիտների կուտակման գործառույթի հիմնական հատկանիշներն են.*

- պարտադիր և ընտրովի դասընթացներից բաղկացած ուսումնական ծրագրեր, որոնցից յուրաքանչյուրի յուրացման հաջորդականությունը սահմանվում է դասընթացների նախապայմաններով,
- ուսանողի կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,
- ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն,
- դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ ելնելով դասընթացի կայացման ժամանակացույցից և (կամ) դասախոսի նախապատվությունից,
- ուսանողի կողմից ուսումնառության ինտենսիվության, հետևաբար նաև ուսումնառության ծրագրի տևողության կարգավորման հնարավորություն:

---

[2] Այս գործառույթի ներդրումը ԵՊՀ- ԻՄ իրականացվնել 2010/11 ուստարվանից:

## 2.3. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը

1. ԵՊՀ-ում բակալավրի կրթական աստիճաններում ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:
2. 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:
3. Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից 32-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային: Ըստ այդմ, կիսամյակի ուսումնական պարապմունքների տևողությունը սահմանվում է 16 շաբաթ, բացառությամբ բակալավրի կրթական ծրագրի 8-րդ կիսամյակի, որի տևողությունը 8 շաբաթ է:
4. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:
5. Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է 24-30 ժամ[3]:
6. Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:
7. Որոշ դեպքերում, ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողը սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ ուսումնական բեռնվածություն:
8. Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 240 կրեդիտ է, իսկ մագիստրոսի ծրագրինը՝ 120 կրեդիտ:

# 3. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐԸ

1. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:
2. Մեծածավալ դասընթացներն անհրաժեշտության դեպքում բաժանվում են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:
3. Դասընթացները (կրթական մոդուլները) ըստ յուրացման բնույթի բաժանվում են 2 հիմնական խմբի՝

   ա) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացումն ամրագրված է որոշակի կիսամյակներում,

   բ) կամընտրական դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

---

[3] Առանց ֆիզդաստիարակության պարապմունքների:

## 4. ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

1. Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը ելնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար ուսանողից պահանջվող միջին աշխատաժամանակի (լրիվ ուսումնական բեռնվածության) իրատեսական կանխատեսումից:
2. Հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև միարժեք կապ չկա: Կրեդիտների թիվը, ինչպես արդեն նշվել է[4], կախված է նաև պարապմունքի ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդներից և այլն:
3. Դասընթացի ծրագիրը մշակող ուսումնական կառույցը (ամբիոնը) այնպես է պլանավորում ուսանողի ուսումնական աշխատանքը, որպեսզի դրա կատարման համար պահանջվող ժամաքանակը համապատասխանի դասընթացին հատկացված կրեդիտների ժամային համարժեքին:
4. Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները պետք է ներկայացվեն ամբողջական թվերով:

## 5. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

### 5.1. Բակալավրի ծրագիր

1. Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ԵՊՀ ուսանողը պետք է ծրագրի կատարման արդյունքում հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն, որի համար հաշվարկված հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ)[5] պետք է կազմի առնվազն 9,00:
2. Մինչև ծրագրի ամփոփիչ ատեստավորումն (ամփոփիչ քննություն, ավարտական աշխատանքի պաշտպանություն) ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 9,00: Հակառակ պարագայում, որակավորում ստանալու համար ուսանողը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև սահմանված նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ:
3. Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն մինչև 36 կրեդիտ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում՝ 4 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), 10 կրեդիտ՝ մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթամասից (ներառյալ 2 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների ցանկից) և առնվազն 20 կրեդիտ՝ պրակտիկայից և եզրափակիչ ատեստավորման ձևերից:
4. Մնացած առնվազն 174 կրեդիտների բովանդակային կազմը սահմանվում է՝ ելնելով տվյալ մասնագիտությամբ բակալավրի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական կարո-

---

[4] Տե՛ս, մասնավորապես, դասընթացների կրեդիտատարության հաշվարկի սխեմաները 2007 թ. ԵՊՀ «Կրեդիտային համակարգով բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» փաստաթղթում:

[5] ՄՈԳ–ի վերաբերյալ տե՛ս սույն կարգի 6.5. կետը:

դությունների և հմտությունների ձեռքբերման պայմանից, և յուրաքանչյուր մասնագիտության համար տրվում է առանձին (ընդ որում, մինչև 24 կրեդիտ կարող է հատկացվել տվյալ մասնագիտության շրջանակներում որոշակի ուղղություններով մասնագիտացում իրականացնելու համար):

**5.2** Մագիստրոսի ծրագիրը

1. Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար ԵՊՀ ուսանողը ծրագրի կատարման արդյունքում պետք է հաջողությամբ լրացնի 120 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն, որի համար հաշվարկված հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պետք է կազմի առնվազն 12,00:
2. Մինչև ծրագրի ամփոփիչ ատեստավորման (մագիստրոսական ատենախոսության պաշտպանություն) ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 12,00:Հակառակ պարագայում որակավորում ստանալու համար ուսանողը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև սահմանված նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ:
3. Բոլոր ուսանողները մասնագիտականից անկախ, պետք է կուտակեն առնվազը 6 կրեդիտ՝ ընդհանուր դասընթացների կրթամասից և 48 կրեդիտ՝ հետազոտական կառուցամասից:
4. Մնացած կրեդիտների (մինչև 66) բովանդակային կազմը սահմանվում է մասնագիտական պարտադիր կրթամասով և կամընտրական դասընթացներով՝ելնելով տվյալ մասնագիտությամբ մագիստրոսի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման պայմանից և յուրաքանչյուր ծրագրի համար տրվում է առանձին (ընդ որում, մինչև 18 կրեդիտ հատկացվում է կամընտրական դասընթացների ձևով որոշակի ուղղությամբ անհատական ուսուցում իրականացնելու համար):

# 6. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

## 6.1. Համակարգի հիմնադրույթները

1. ԵՊՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր և բարելավել դասահաճախումները,

բ) ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ ներմուծել դիագնոստիկ գնահատման տարրեր՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման և

կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունարար գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝ գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները:

2. Գիտելիքների գնահատումը (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները.

ա) դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում դասահաճախումների հաշվառման օգնությամբ,

բ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ և ստուգումներ),

գ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում, ինչը ենթադրում է դասընթացի կամ կրթական մոդուլի սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում,

դ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

3. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝

*ա) եզրափակիչ գնահատումով դասընթացներ,*

*բ) առանց եզրափակիչ գնահատման դասընթացներ:*

## 6.2. Գնահատման մեթոդաբանությունը

### *6.2.1. Բակալավրի կրթական ծրագիր*

Բակալավրի կրթական ծրագրում յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում կարող է ներառվել եզրափակիչ գնահատումով առավելագույնը 4 մասնագիտական դասընթաց, բացառությամբ առաջին կիսամյակի, որտեղ այդ դասընթացների քանակը սահմանափակվում է 3-ով:

1. *Եզրափակիչ գնահատումով դասընթացը* քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն: ա/ Ընթացիկ քննությունները հիմնականում անցկացվում են գրավոր, իսկ որոշ դեպքերում նաև բանավոր՝ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից: Քննության բանավոր անցկացումը պահանջում է համապատասխան հիմնավորում և թույլատրվում է ֆակուլտետի խորհրդի որոշմամբ: բ/ Եզրափակիչ քննությունը հիմնականում անցկացվում է բանավոր, իսկ որոշ դեպքերում նաև գրավոր՝ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական

վերջնարդյունքների բնույթից: Քննության գրավոր անցկացումը պահանջում է համապատասխան հիմնավորում և թույլատրվում է ֆակուլտետի խորհրդի որոշմամբ:

2. *Եզրափակիչ գնահատումով դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը /միավորը ($Գ_{արդ.}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 2 միավոր: Դասընթացին ուսանողի մասնակցության $Գ_{մաս.}$ միավորը որոշվում է *աղյուսակ 1-ում* բերված սանդղակի չափանիշներին համապատասխան.

*Աղյուսակ 1.*

| Մասնակցության աստիճանը(%) | Հատկացվող միավորը |
|---|---|
| 71-100 | 2 |
| 61-70 | 1 |
| ≤60 | 0 |

*Օրինակ 1. Եթե 32 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի 15 ժամ բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝*

$\left(1-\frac{15}{32}\right)$ *x 100% = (1–0,47) x 100% = 53 %: Համաձայն աղյուսակի՝ $Գ_{մաս.}$= 0 միավոր:*

*Օրինակ 2. Եթե 64 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի 12 ժամ անհարգելի և 4 ժամ հարգելի բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝* $\left(1-\frac{12}{64-4}\right)$ *x 100%* = (1–0,2) x 100% = 80%: *Համաձայն աղյուսակի՝ $Գ_{մաս.}$= 2 միավոր:*

բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ (միջանկյալ) քննությունների արդյունքներից ($\sum Ք_{ընթ.}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 4 միավոր,

գ) եզրափակիչ քննության արդյունքից ($Ք_{եզր.}$), որը կարող է գնահատվել մինչև 10 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը /միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գ_{արդ.} = Գ_{մաս.} + \sum Ք_{ընթ.} + Ք_{եզր.} :$$

Ըստ այդմ, եզրափակիչ գնահատումով դասընթացն ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով[6]).

[6] Ընթացիկ քննության մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր, իսկ գնահատման քայլը՝ առնվազն 0,5 է:

*Աղյուսակ 2.*

| Գնահատման բաղադրամասը | $Գ_{մաս.}$ | $Ք_{ընթ.1}$ | $Ք_{ընթ.2}$ | $Ք_{եզր.}$ | $Գ_{արդ.}$ |
|---|---|---|---|---|---|
| Միավորը | 2 | 4 | 4 | 10 | 20 |

*Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից նա վաստակել է համապատասխանաբար 3 և 4 միավորներ, իսկ եզրափակիչ քննությունից՝ 6 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝ $Գ_{արդ.}= 2 + 3 + 4 + 6 = 15$ :*

3. Լաբորատոր աշխատանքի ձևեր ունեցող *եզրափակիչ գնահատումով դասընթացի* ընթացիկ քննությանը ուսանողի մասնակցությունը թույլատրվում է նախորդող ժամանակահատվածում նախատեսված լաբորատոր աշխատանքների առնվազն 60% կատարողականի (փորձերի կատարում և հանձնում) դեպքում: Հակառակ պարագայում ուսանողին չի թույլատրվում մասնակցել ընթացիկ քննությանը, իսկ քննական ամփոփագրում նրա անվան դիմաց դրվում է «0» միավոր:
4. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացը* գնահատվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների (գնահատումների) արդյունքներով: Ընթացիկ ստուգման ձևն ընտրում է դասընթացը կազմակերպող ամբիոնը:
5. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը-/միավորը ($Գ_{արդ.}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ $Գ_{մաս.}$, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը կարող է վաստակել 2 միավոր: Մասնակցության աստիճանը գնահատվում է համաձայն *աղյուսակ 1*-ում բերված սանդղակի,

բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ ստուգումների արդյունքներից ($\sum Ս_{ընթ.}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 9 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը /միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գ_{արդ.}= Գ_{մաս.} + \sum Ս_{ընթ.} :$$

Ըստ այդմ, *առանց եզրափակիչ գնահատման դասընթացն* ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադ-րամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով[7]).

[7] Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր, իսկ գնահատման քայլն առնվազն 0,5 է:

*Աղյուսակ 3.*

| Գնահատման բաղադրամասը | $Գ_{մաս.}$ | $Ս_{ընթ1}$ | $Ս_{ընթ2}$ | $Գ_{արդ.}$ |
|---|---|---|---|---|
| Միավորը | 2 | 9 | 9 | 20 |

*Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից նա վաստակել է համապատասխանաբար 5 և 7 միավորներ, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝* $Գ_{արդ.}$ *= 2 + 5 + 7 = 14 :*

6. Գնահատման՝ վերը նկարագրված եղանակները կիրառվում են միայն *մասնագիտական կրթամասի* բաղկացուցիչ դասընթացների (ուսումնական մոդուլների) գնահատման համար: *Հումանիտար ու սոցիալ-տնտեսագիտական* և *մաթեմատիկական ու բնագիտական կրթամասերի* բաղկացուցիչ դասընթացների գնահատումն իրականացվում է ավանդական եղանակով (ստուգարք կամ 20 միավորանոց սանդղակով գնահատվող եզրափակիչ քննություն): Պրակտիկաները գնահատվում են ստուգարքի ձևով: Ավարտական աշխատանքը գնահատվում է 20 միավորանոց սանդղակով և գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանվում են գնահատման միավորների հետևյալ չափաքանակները.

*Աղյուսակ 5.*

| Թիվ | Չափանիշ | Առավելագույն միավորը |
|---|---|---|
| 1 | Ներկայացման որակը | 6 |
| 2 | Ձևակերպման որակը | 6 |
| 3 | Կատարման ինքնուրույնության աստիճանը | 6 |
| 4 | Արդիականությունը /նորույթը | 2 |
| | ***Ընդամենը՝*** | ***20*** |

### *6.2.2. Մագիստրոսի կրթական ծրագիր*

Մագիստրոսի կրթական ծրագրում ներառված բոլոր դասընթացները եզրափակիչ գնահատումով դասընթացներ են, որոնց գնահատման կառուցվածքը, սակայն, մի փոքր տարբերվում է բակալավրի կրթական ծրագրի դասընթացների գնահատման՝ վերը նկարագրված եղանակից:

1. Դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն: Ընթացիկ և եզրափակիչ քննությունների անցկացման ձևը դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատում է ֆակուլտետի դեկանը:
2. Դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը / միավորը ( $Գ_{արդ.}$ ) ձևավորվում է կիսամյակի ընթացքում ՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 2 միավոր: Դասընթացին ուսանողի մասնակցության $Գ_{մաս.}$ միավորն

որոշվում է 6.2.1. կետում բակալավրի կրթական ծրագրի համար նկարագրված եղանակով (ուսումնառության անհատական ժամանակացույցով սովորող ուսանողի՝ դասընթացի մասնակցության համար տրվող միավորների քանակը հաշվարկվում է նրա ինքնուրույն աշխատանքի կատարողականի հիման վրա),

բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ (միջանկյալ) քննությունների արդյունքներից՝($\sum Ք_{ընթ}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 4 միավոր,

գ) եզրափակիչ քննության արդյունքից՝($Ք_{եզր.}$), որը կարող է գնահատվել մինչև 10 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի), արդյունարար գնահատականը/ միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գ_{արդ.} = Գ_{մաս.} + \sum Ք_{ընթ} + Ք_{եզր} :$$

Ըստ այդմ, մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված դասընթացն ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով).

*Աղյուսակ 4.*

| Գնահատման բաղադրամասը | $Գ_{մաս.}$ | $Ք_{ընթ.1}$ | $Ք_{ընթ.2}$ | $Ք_{եզր.}$ | $Գ_{արդ.}$ |
|---|---|---|---|---|---|
| Միավորը | 2 | 4 | 4 | 10 | 20 |

**3.** Գնահատման վերը նկարագրված եղանակը կիրառվում է միայն ուսումնական կառուցամասի բաղկացուցիչ դասընթացների (բացի լրացական դասընթացներից), գնահատման համար: Հետազոտական կառուցամասի մոդուլները, այդ թվում նաև պրակտիկաները, գնահատվում են ստուգարքի ձևով: Մագիստրոսական ատենախոսությունը գնահատվում է 20 միավորանոց սանդղակով՝ 9.2. կետում բերված գնահատման չափանիշներին համապատասխան:

## 6.3. Ընթացիկ և եզրափակիչ գնահատման կազմակերպումը

1. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների/ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշները տրամադրվում են ուսանողներին նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):

2. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցները կազմում են ֆակուլտետները, և հաստատվում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից: Քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնամեթոդական վարչություն:

3. Ընթացիկ ստուգումները և քննությունններն անց են կացվում ուսումնառության կիսամյակի 7÷8-րդ և 15÷16-րդ շաբաթներում (8-րդ կիսամյակում՝ 4-րդ և 8-րդ շաբաթներում): Ընթացիկ ստուգումները անց են կացվում առարկայի դասացուցակով հատկացված ժամերին կամ դասերից հետո ֆակուլտետի դեկանի որոշմամբ:

4. Եզրափակիչ քննություններն անց են կացվում կիսամյակային քննաշրջաններում՝ 17÷20-րդ շաբաթներում (8-րդ կիսամյակում՝ 9÷10-րդ շաբաթներում):

5. Քննության/ստուգման ավարտից հետո քննությունն ընդունած դասախոսը քննական ամփոփագիրը նույն օրը ներկայացնում է դեկանատ:

6. Բոլոր գրավոր քննությունները և ստուգումները գրանցվում են ուսանողներին տրամադրված սահմանված նմուշի տետրերում, իսկ գրավոր աշխատանքի ավարտը վավերացվում է դեկանատի կնիքով:

7. Քննությունները և ստուգարքները ընթացիկ և եզրափակիչ գնահատականը հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի այն զանգատարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, այնուհետև նաև ֆակուլտետի դեկանին:

## 6.4. Գնահատման սանդղակը և նշագրումը

1. ԵՊՀ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 20 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

*Աղյուսակ 4.*

| Գնահատման արդյունարար միավորը | Գնահատականը |
|---|---|
| 18-20 | «Գերազանց» |
| 13-17 | «Լավ» |
| 8-12 | «Բավարար» |
| 0-7 | «Անբավարար» |
| 0 | «Չներկայացած» |
| - | «Ստուգված» /«Չստուգված» |

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում գնահատման արդյունարար միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ 18 (գերազ.)):

2. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 8-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել *է «Չստուգված»*, կրեդիտներ չեն տրվում: *«Ստուգված»* գնահատման դեպքում ուսանողի օգտին *վարկանիշային միավորներ*[8] չեն

[8] Վարկանիշային միավորի վերաբերյալ տե՛ս սույն կարգի 6.5. կետը:

գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի *միջին որակական գնահատականի (ՄՈԳ)* վրա:

### 6.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ԵՊՀ ԻՄ-ի ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են *ակադեմիական տեղեկագիր*[9], որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

2. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները[10]՝

– *գումարային կրեդիտների քանակը,*
– *գնահատված կրեդիտների քանակը,*
– *վարկանիշային միավորները,*
– *միջին որակական գնահատականը:*

4. *Գումարային կրեդիտը (Կ)* կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

5. *Գնահատված կրեդիտը (ԳԿ)* գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով.

$$\textbf{ԳԿ} = \sum \textbf{Կրեդիտ}_i :$$

6. *Վարկանիշային միավորը (ՎՄ)* յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

$$\textbf{ՎՄ} = \sum \textbf{Կրեդիտ}_i \times \textbf{Գ}_i ,$$

որտեղ $Գ_{արդi}$-ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է:

> *Օրինակ, եթե ուսանողը 5, 4 և 6 կրեդիտանոց դասընթացներից գնահատվել է (վաստակել է) համապատասխանաբար 12, 16 և 19 միավոր, ապա դասընթացների այդ խմբից ուսանողի վաստակած վարկանիշային*

---

[9] Ակադեմիական տեղեկագրի օրինակները բակալավրի կրթական ծրագրերի համար կցված են սույն կարգին (հավելվածներ 1 և 2):
[10] Տե՛ս ակադեմիական տեղեկագրին կից օրինակը:

*միավորը հավասար է՝*
*ՎՄ = 5 x 12 + 4 x 16 + 6 x 19 = 238՝ 300 հնարավորից(5 x 20 + 4 x 20 + 6 x 20):*

7. *Միջին որակական գնահատականը (ՄՈԳ)* կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ԳԿ}} :$$

*Օրինակ, նախորդ դեպքում դիտարկված դասընթացների խմբի համար հաշվարկված միջին որակական գնահատականը կլինի՝*

$$\text{ՄՈԳ} = \frac{238}{15} = 15.87\text{՝ 20 հնարավորից:}$$

8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են *կիսամյակային* (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

## 6.6. Ուսման առաջադիմությունը

1. Ըստ ուսման առաջադիմության՝ ուսանողները դասակարգվում են՝ *առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա* :

2. Ուսանողը համարվում է *առաջադիմող*, եթե՝

ա) կիսամյակում ունի 30 կրեդիտ ուսումնական միջին բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով),

բ) հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների[11] կրեդիտները:

3. Ուսանողը համարվում է *փորձաշրջանի կարգավիճակում*, եթե չի բավարարել նախորդ կետում նշված պայմաններից որևէ մեկը, և տնօրինության կողմից նրան թույլատրվել է մասնակցել ակադեմիական պարտքերի մարմանը (լուծարքին):

4. Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և բարձրացնելու ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան:

5. Բակալավրի կրթական ծրագրի համար փորձաշրջանի տևողությունը համընկնում է ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանի հետ, իսկ մագիստրոսի ծրագրում ուսանողին կարող է տրվել նաև լրացուցիչ ժամանակ՝ դասընթացը կրկնելու համար:

6. Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը համարվում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում դուրս չի գալիս այդ կարգավիճակից: Հեռացված ուսանողի վերականգնումը կատարվում է նույն կիսամյակում՝ ուսումնառության նախորդ ընթացքում վաստակած բոլոր կրեդիտների պահպանմամբ:

---

[11] Տե՛ս դասընթացների ա) խումբը, բաժին 3, 3-րդ կետ:

7. Նույն ուսումնական բեռնվածությամբ ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են (ուսանողական նպաստներ, պետական, ներբուհական և այլ տեսակի կրթաթոշակներ հատկացնելիս) նրանց միջին որակական գնահատականներով, իսկ միևնույն կրթական ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողներինը՝ վարկանիշային միավորներով:

## 7. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԿՆՈՒՄԸ

1. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացի* գնահատման արդյունարար միավորի նվազագույն 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում պետք է վերահանձնի ամբողջ դասընթացը, սակայն նրա արդյունարար միավորը չի կարող գերազանցել անցողիկ 8-ը:

*Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից նա վաստակել է համապատասխանաբար 1 և 2 միավորներ, ապա այդ դասընթացի արդյունարար միավորը կլինի՝ Գ$_{\text{արդ.}}$= 2 + 1 + 2 = 5, որը ցածր է նվազագույն շեմային պահանջից (8 միավոր): Այս դեպքում ուսանողը պարտքերի մարման շրջանում վերահանձնում է դասընթացը(2 ընթացիկ ստուգումներով գնահատվող ուսումնական նյութը) ամբողջությամբ, սակայն նրա արդյունարար միավորն այս դեպքում չի կարող գերազանցել անցողիկ 8-ը՝ Գ$_{\text{արդ.}}$ <= **8:***

2. *Եզրափակիչ գնահատումով դասընթացի* գնահատման արդյունարար միավորի նվազագույն 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը՝ վերջինիս համար սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ:

*Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից նա վաստակել է համապատասխանաբար 1 և 2 միավորներ, իսկ եզրափակիչ քննությունից՝ 2 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝ Գ$_{\text{արդ.}}$= 2 + 1 + 2 + 2 = 7, որը ցածր է նվազագույն շեմային պահանջից (8 միավոր): Այս դեպքում ուսանողը պարտքերի մարման շրջանում վերահանձնում է միայն եզրափակիչ քննությունը՝ սահմանված 8 միավորի ձեռքբերման հնարավորությամբ, իսկ արդյունարար գնահատականը փոխվում է եզրափակիչ քննության միավորների տարբերությամբ: Օրինակ, եթե եզրափակիչ քննության 2 միավորը լուծարքում բարձրացվել է մինչև 5, ապա՝*

***Գ$_{\text{արդ.}}$ = 7 + (5-2) = 10:***

3. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

4. Կրեդիտների կուտակման գործառույթի շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակն ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

**5. Մագիստրոսի ծրագրի ուսումնական կառուցամասի կազմակերպման ընթացակարգը:**

1. Ուսումնառության առաջին կիսամյակի սկզբում մագիստրոսական ծրագրում ընդգրկված ուսանողը ծրագրի ղեկավարից ստանում է ուսումնառության իր անհատական ծրագրի ձևաթղթերը, որտեղ նախապես լրացված են ուսումնական և հետազոտական կառուցամասերի բաղկացուցիչ դասընթացները և գիտակրթական մոդուլները՝ բացառությամբ կամընտրական դասընթացների:
2. Անհատական ծրագրում տրվում է դասընթացների ընտրացանկն ըստ ուսումնական տարիների և կիսամյակների՝ դրանց հատկացված կրեդիտների հետ միասին: Մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողների ուսումնառության անհատական ծրագրի ձևաթղթերը բերված է *հավելված* 3- ում:
3. Ուսման առաջին շաբաթում ուսանողն իր ուսումնական խորհրդատուի հետ միաին լրացնում է կամընտրական դասընթացները ուսումնառության իր անհատական ծրագրում, որն այնուհետև հաստատվում է ծրագրի ղեկավարի կողմից և ներկայացվում դեկանատ:
4. Անհատական ծրագրում ներառված տվյալ կիսամյակի կամընտրական դասընթացներին ուսանողների գրանցումն իրականացվում է համապատասխան ֆակուլտետում: Բոլոր ուսանողները պետք է գրանցված լինեն մինչև տվյալ կիսամյակի 2-րդ շաբաթվա վերջը: Սահմանված վերջնաժամկետից հետո դասընթացներին մասնակցելու բոլոր տեսակի գրանցումները դադարեցվում են:
5. Հետագա կիսամյակների ընթացքում, անհրաժեշտության դեպքում ուսանողը կարող է փոփոխություններ կատարել ուսումնառության իր անհատական ծրագրի դասընթացների ընտրացանկում՝ նախապես ստանալով ուսումնական խորհրդատուի և ծրագրի ղեկավարի համաձայնությունը: ՈՒսումնառության անհատական ծրագրի փոփոխությունների ձևաթղթերը բերված է *հավելված* 4- ում:
6. Դասընթացի փոփոխությունը կարող է կատարվել նաև մագիստրոսական ծրագիրն իրականացվող ուսումնական ստորաբաժանման նախաձեռնությամբ, եթե տվյալ դասընթացում բավարար մասնակիցներ չեն ընդգրկվել:
7. Անհատական ծրագրերի փոփոխությունը ենթադրում է դասընթացի բացթողումը, նոր դասընթացի ընտրություն (ավելացում) ընտրացանկում, որի իրականացման ընթացակարգը հետևյալն է.

- ուսանողը կարող է բաց թողնել իր ընտրած դասընթացը ուսումնական խորհրդատուի համաձայնությամբ՝ մինչև պարապմունքների 2-րդ շաբաթվա վերջը,

- տվյալ կիսամյակի 3-րդից մինչև 4-րդ շաբաթվա վերջը բացթողումը ձևակերպելու համար ուսանողը պետք է ստանա նաև դասընթացը վարող դասախոսի և ծրագրի ղեկավարի համաձայնությունը,
- ուսանողը իր ընտրացանկում նոր դասընթաց կարող է ավելացնել ուսումնական խորհրդատուի և դասընթացը վարող դասախոսի համաձայնությամբ՝ մինչև պարապմունքների 2- րդ շաբաթվա վերջը:

8. Նախորդ կրթական աստիճանի մասնագիտության փոփոխությամբ մագիստրոսական ծրագրում ընդգրկված ուսանողների համար ուսումնառության 1- ին շաբաթվա ընթացքում կարող են նշանակվել լրացական դասընթացներ: Լրացական դասընթացներ նշանակելու հարցը համապատասխան հարցազրույցից հետո առաջադրվում է մագիստրոսական ծրագրի ղեկավարի կողմից և համաձայնեցվում մասնագիտացնող ուսումնական ստորաբաժանման հետ:
9. Ուսանողը պատասխանատու է ուսումնառության իր անհատական ծրագրի ճշտության և ամբողջականության ապահովման համար:
10. Համալսարանն իրեն իրավունք է վերապահում հանել ցանկացած դասընթացի առաջադրումը տվյալ կլիսամյակում, եթե դրանում ընդգրկված չեն բավարար թվով ուսանողներ:

## 6. Մագիստրոսի ծրագրի հետազոտական կառուցամասի կազմակերպման ընթացակարգը:

1. Կիսամյակի առաջին երկու շաբաթվա ընթացքում մագիստրոսական ծրագրի ղեկավարը կազմում և ուսանողներին է տրամադրում տվյալ կիսամյակի հետազոտական աշխատանքների պլանը (ծրագրի հետազոտական կառուցամասով նախատեսվող գիտակրթական մոդուլների կազմակերպման ժամանակացույցը):
2. Ծրագրի հետազոտական կառուցամասով նախատեսված գիտակրթական մոդուլների կատարողականի ստուգման համար կիրառվում է ատեստավորում: Գիտական ղեկավարի սեմինարի, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքի և պրակտիկաների ատեստավորումը կատարում է մագիստրանտի գիտական ղեկավարը, որը լրացված ատեստավորման թերթիկը անձամբ հանձնում է ղեկանատ:
3. Ուսումնառության 1-ին կիսամյակի ավարտին ծրագրի համապատասխան հետազոտական մոդուլից ատեստավորում չստացած ուսանողին հնարավորություն է տրվում շարունակելու ուսումը 2-րդ կիսամյակում՝ այդ ընթացքում կատարելով չատեստավորված մոդուլով նախատեսված անավարտ աշխատանքը: 2-րդ և 3-րդ կիսամյակներում որևէ հետազոտական մոդուլով չատեստավորված ուսանողն ազատվում է համալսարանից:

## 8. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔԸ

1. Համալսարանը յուրաքանչյուր ուստարվա համար հրապարակում է ԵՊՀ դասընթացների տեղեկագիրք (տպագրված և/կամ կայքէջում տեղադրված էլեկտրոնային տարբերակով), որը նաև կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց է:

2. Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունն ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է.

ա) ընդհանուր տեղեկություն Համալսարանի վերաբերյալ՝ տեսակը և կարգավիճակը, ուսումնական ստորաբաժանումները, առաջարկվող կրթական ծրագրերը, ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ներբուհական հիմնական կանոնները (հատկապես կրեդիտների կուտակման, պաշտոնական ճանաչման և փոխանցման վերաբերյալ) և այլն,

բ) տեղեկություն կրթական ծրագրերի վերաբերյալ.

– ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, մուտքի շեմային պահանջները, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, կրթությունը շարունակելու հնարավորությունները, ծրագրի ընդհանուր կառուցվածքը և բովանդակությունը, քննական կանոնները և գնահատման կարգը, ավարտական ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,

– առանձին դասընթացի նկարագրությունը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի գիտելիքներով ու կարողություններով, դասընթացի համառոտագիրը (հակիրճ բովանդակությունը/թեմաները), անհրաժեշտ նախապայմանները, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները, դասավանդման լեզուն և այլն,

գ) ընդհանուր տեղեկատվություն ուսանողների համար.

– նյութական օգնության հնարավորությունները, ուսման վարձերի զեղչման և փոխհատուցման պայմաններն ու կանոնները, գործող ուսանողական ծառայությունները, ուսանողներին հասանելի ուսումնական /լաբորատոր ենթակառուցվածքները և այլն:

## 9. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ

### 9.1. Բակալավրի ծրագիր

1. Ուսանողի կողմից բակալավրի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով և պաշտպանությամբ և ծրագրի ավարտից հետո կազմակերպվող մասնագիտական ամփոփիչ ավարտական քննությամբ, որը չի կրկնում կիսամյակային քննություններով հաստատված կրթական արդյունքների գնահատումները:

2. Ավարտական աշխատանքի թեման և ղեկավարը ընտրվում և հաստատվում են ավարտական ուստարվա առաջին 2 շաբաթվա ընթացքում, իսկ աշխատանքը կատարվում է ավարտական ուստարվա ընթացքում:
3. Ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում է ուսումնառության վերջին 4 շաբաթը, որոնց ընթացքում նախատեսվում է.

ա) աշխատանքի ներկայացումը մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) քննարկմանը: Աշխատանքի հետ ներկայացվում է ղեկավարի կարծիքը, որը ներառում է կատարված աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն:

բ) ավարտական աշխատանքի նախնական քննարկում մասնագիտացնող ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ: Էական դիտողությունների առկայության դեպքում բակալավրի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և այն ներկայացնել լրացուցիչ քննարկման: Դրական եզրակացության դեպքում մասնագիտացնող ամբիոնի կողմից աշխատանքը երաշխավորվում է պաշտպանության:

գ) մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) կողմից աշխատանքը գրախոսության ուղարկելու կազմակերպում:

դ) ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և բակալավրի աստիճանի շնորհում:

4. Ավարտական աշխատանքի պաշտպանությունը և մասնագիտական ամփոփիչ ավարտական քննության անցկացումն իրականացվում են համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված կարգի:
5. Ավարտական աշխատանքի պաշտպանության և մասնագիտական ամփոփիչ ավարտական քննության գնահատումը կատարվում է աղյուսակ 4-ում ներկայացված 20 միավորանոց սանդղակով:
6. Ավարտական աշխատանքի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանվում են գնահատման միավորների հետևյալ չափաքանակները.

*Աղյուսակ 5.*

| Թիվ | Չափանիշ | Առավելագույն միավորը |
|---|---|---|
| 1 | Ներկայացման որակը | 6 |
| 2 | Ձևակերպման որակը | 6 |
| 3 | Կատարման ինքնուրույնության աստիճանը | 6 |
| 4 | Արդիականությունը/նորույթը | 2 |
| | ***Ընդամենը՝*** | ***20*** |

7. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների կողմից ավարտական աշխատանքի գնահատումները կատարվում են սահմանված նմուշի գնահատման ձևաթերթում (տե՛ս *հավելված 2*):

### 9.2 Մագիստրոսի ծրագիր

1. Ուսանողի կողմից մագիստրոսի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և

կարողությունների ձեռքբերումը հաստատվում է մագիստրոսական ատենախոսության կատարումով և պաշտպանությամբ:

2. Մագիստրոսական ատենախոսության գիտական ղեկավարի նշանակումը և թեմայի հաստատումը իրականացվում է 1-ին կիսամյակում: Համապատասխան ընթացակարգը ներառում է.

- ծրագրի ղեկավարի հետ խորհրդատվությունների անցկացում, որոնց ընթացքում ճշգրտվում են մագիստրանտի հետազոտական հետաքրքրությունները, կազմակերպվում է հանդիպում տվյալ մագիստրոսական ծրագրի ատենախոսությունների ղեկավարների հետ,
- գիտական ղեկավարի հետ թեմայի ընտրության վերաբերյալ խորհրդատվությունների անցկացում,
- մագիստրոսական ատենախոսության համաձայնեցված թեմաների և գիտական ղեկավարների թեկնածուների ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի (միջամբիոնային հանձնախմբի) հաստատմանը, գիտական ղեկավարի նշանակումը և հրամանագրումը:

3. Մագիստրանտի կողմից գիտական ղեկավարի հետ համաձայնեցված ատենախոսության առաջարկի պատրաստում և ներկայացում ամբիոնում (միջամբիոնային հանձնախմբում) քննարկման և հաստատման համար, որն իրականացվում է 2-րդ կիսամյակում: Ատենախոսական առաջարկը պետք է պարունակի թեմայի բնագավառում առկա իրադրության նկարագրությունը, աշխատանքի նպատակը, ածանցյալ խնդիրների առաջադրումն ու սահմանումը, դրանց հավանական լուծումները, հետազոտական մեթոդները և գրականության ցանկը: Ատենախոսական աշխատանքի կատարումը շարունակվում է ուսուցման 3-րդ և 4 րդ կիսամյակներում:

***Թեմա 1՝*** Պատմական համառոտ ակնարկ հայերենի զարգացման փուլերի մասին: Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում*:* Հայ հին գրականություն: ***Թեմա 2՝*** Հնչյունաբանություն*: Հայերենի* հնչյունական համակարգը: Ուղղագրություն և ուղղախոսություն: ***Թեմա 3*** Բառագիտություն: Ստուգաբանություն, իմաստաբանություն, բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն: ***Թեմա 4՝*** Ոճերի դասակարգումը: Հայ միջնադարյան գրականություն:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է նախօրոք տրվող ստուգարքային թելադրության դրական գնահատականի և եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:

**0302/B02.** *«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»-*2*(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(8 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *2–րդ, հանրագումարային քննություն*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերը, ձևաբանական և շարահյուսական ոճագիտության հիմնական հասկացությունները, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները,
2. կկարողանա ճիշտ գործածել քերականական ձևերը, գործնականում կկիրառի ձևաբանական և շարահյուսական լեզվաոճական հնարները, կկարողանա վարել երկխոսություն և բանավեճ,
3. ծանոթ կլինի հայ հեղինակների գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործություններին, կվերլուծի դրանք:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Ձևաբանություն. խոսքի մասերի դասակարգումը: Ժամանակակից հայերենի թեքվող խոսքի մասերը: ***Թեմա 2.*** Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը: Հայ նոր գրականություն: ***Թեմա 3՝*** Շարահյուսություն. Պարզ նախադասություն: Հայ նորագույն գրականություն: ***Թեմա 4՝*** Բարդ նախադասություն. փոխակերպում և դերբայական դարձված: Ուղղակի և անուղղակի խոսք: Ժամանակակից հայերենի կետադրությունը:

***Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Քննությունն անցկացվում է բանավոր՝նախաքննական թելադրության դրական արդյունքի դեպքում:Քննատոմսը կազմված է չորս հարցից,որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:Առաջին երկու հարցերը հայոց լեզվին վերաբերող տեսական հարցեր են, երրորդը՝ հայ գրականությանը վերաբերող հարց, չորրորդը՝ գործնական առաջադրանք:

**0305/B03.** ***«ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ»***-1*(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *1–ին, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել ռուսաց լեզվի համակարգին, ապահովել հաղորդակցման տարբեր ոլորտներում մասնագիտական լեզվի տիրապետումը:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի ռուսաց լեզվի քերականական կառուցվածքին,
2. կկարողանա ճիշտ կազմել իր բանավոր խոսքը,
3. կկարողանա մասնակցել երկխոսությունների,
4. կկարողանա վերլուծել, մեկնաբանել և վերարտադրել գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստ:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Լեզվի դերը հասարակության կյանքում:Ժամանակակից ռուսաց լեզուն աշխարհի լեզուների շարքում: ***Թեմա 2՝*** Հնչյունաբանություն. ձայնավորների և բաղաձայների դասակարգումը, արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: ***Թեմա 3՝*** Բառագիտություն. պատկերացում բառիմաստի մասին, մենիմաստ և բազմիմաստ բառեր, բառի ուղիղ և փոխաբերական իմաստը, հոմանիշներ և հականիշներ, համանուններ և հարանուններ: Բառային միավորների հարաբերակցության ձևերը: ***Թեմա 4՝*** Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները (բառ, ձևույթ), խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: ***Թեմա 5՝*** Շարահյուսություն. շարահյուսական միավորները (բառակապակցություն, պարզ նախադասություն), նախադասության գլխավոր անդամները, նախադասության տեսակներն ըստ կառուցվածքի և հաղորդակցման ուղղվածության:

*Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

**0303/B04.** *«ԷԹԻԿԱ ԵՎ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»*

*(0 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակները՝ *1–ին, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին համակարգված գիտելիքներ հաղորդել էթիկայի տեսության վերաբերյալ, առնչել բարոյագիտական ուսմունքների հակիրճ պատմությանն ու ներկա խնդիրներին, հաղորդակից դարձնել բարեկրթության նորմերին, հաղորդակցության ու հյուրասիրության կանոններին, խոսքի մշակույթի հիմունքներին:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա համապատասխան գիտելիքներ հայոց դիմելաձևերի և միջհաղորդակցության նորմերի վերաբերյալ,
2. ունակ կլինի հասու դարձնել հյուրընկալության և հասարակական վայրերում պահվածքի էթիկետին,
3. կկարողանա գործնական խորհուրդներով օգնել վարքի կանոնների հաստատմանը,
4. կկարողանա նպաստել նորաձևության այբուբենի յուրացմանն ու պատշաճ հագնելաձևին:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** էթիկայի առարկան և խնդիրները: ***Թեմա 2՝*** Հին Արեւելքի և անտիկ աշխարհի բարոյագիտական ուսմունքների համառոտ պատմություն: ***Թեմա 3՝*** Միջնադարի եւ նոր ժամանակների բարոյագիտական ուսմունքների համառոտ

պատմություն: ***Թեմա 4՝*** Բարոյագիտության կատեգորիաներն ու հիմնական հասկացությունները: ***Թեմա 5՝*** Վարվեցողության կուլտուրան և մարդու անհատականությունը: ***Թեմա 6՝*** Հայոց գաղափարաբանության բարոյական հիմքերը: ***Թեմա 7՝*** Հաղորդակցման կանոններ: Խոսքի կուլտուրա: ***Թեմա 8՝*** Դիվանագիտական էթիկետ: ***Թեմա 9՝*** Վարքի կանոններ: ***Թեմա 10՝*** Հյուրասիրության եւ հյուրընկալության կանոններ: ***Թեմա 11՝*** Մոդան որպես երևույթ. դրա էությունն ու զարգացման միտումները:

*Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

**0305/B08.** *«ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ »*-2*(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *2–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը՝ հաղորդակցվելու համար լեզվական տարբեր ոլորտներում:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ռուսաց լեզվի ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները,
2. կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինային համակարգին.
3. կտիրապետի մասնագիտական տեքստին հատուկ շարահյուսական կառուցվածքներին,
4. կկարողանա վերարտադրել մասնագիտական տեքստը, նաև ներկայացնել նրա բովանդակությունը սեղմ և ընդարձակ,
5. կկարողանա մասնագիտական տեքստը թարգմանել հայերենից ռուսերեն:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Բառագիտություն. դարձվածներ և դարձվածների դասակարգումը: ***Թեմա 2՝*** Ձևաբանություն. խոսքի մասերի քերականական կարգերը: Բառակազմություն. բառի ձևաբանական կազմը: ***Թեմա 3՝*** Շարահյուսություն. միակազմ նախադասություն, միակազմ նախադասության դասակարգումը: Բարդ նախադասություն, բարդ նախադասության դասակարգումը:Ուրիշի ուղղակի և անուղղակի խոսք:***Թեմա 4՝*** Ուղղագրություն. ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: ***Թեմա 5՝*** Մասնագիտական տեքստի կառուցվածքը. տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները:

*Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

**0304/B05.** ***«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ»*-1*(2 կրեդիտ)***
Շաբաթական՝ 2 ժամ *(24 դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *1–ին, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացը նպատակ ունի ուսանողին ծանոթացնել հայոց պատմության հին շրջանի և միջնադարի պատմությանը, հայկական լեռնաշխարհի աշխարհագրությանը և սեր առաջացնել մեր ժողովրդի բազմադարյան պատմության և նրա հերոսական անցյալի նկատմամբ՝ շեշտը դնելով հայոց պետականության պատմության ըստ ամենայնի լուսաբանման վրա:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը,

1. ծանոթ կլինի հայոց հին ու միջնադարյան պատմությանը,
2. կկարողանա քննադատական վերաբերմունք հանդես բերել հայոց պատմության հին ու միջին շրջանի կարևորագույն իրադարձություններին,
3. յուրացրած կլինի հայոց պետականությունների պատմությունը:

Բովանդակությունը.

***Ներածություն.*** Հայկական բնաշխարհը: Վարչական բաժանումները: ***Թեմա 1՝*** Հայաստանը հնագույն շրջանում: ***Թեմա 2՝*** Հայաստանի հին շրջանի պատմությունը. Վանի թագավորությունը (Ք.ա. IX-VIդդ.): Համահայկական պետության ստեղծումը (Երվանդունիների թագավորությունը): Մեծ Հայքի պետության վերելքը (Արտաշեսյանների թագավորությունը): Արշակունիների թագավորությունը (I-Vդդ.): ***Թեմա 3՝*** Հայաստանը վաղ միջնադարում: ***Թեմա 4՝*** Հայաստանը զարգացած միջնադարում: ***Թեմա 5՝*** Հայաստանը ուշ միջնադարում:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**0304/B09.** ***«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ»*-2*(2 կրեդիտ)***
Շաբաթական՝ 2 ժամ *(24 դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *2–րդ, հանրագումարային քննություն*

*Նպատակը.*

Դասընթացը նպատակ ունի ուսանողին մատուցել հայոց պատմության նոր և նորագույն շրջանը: Դասավանդման ընթացքում շեշտը դրվում է ազգային-ազատագրական շարժումների և Հայաստանի 1-ին, 2-րդ և 3-րդ հանրապետությունների պատմության վերլուծության վրա:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի հայ ժողովրդի նոր և նորագույն պատմությանը,
2. կկարողանա վերլուծել հայ ազգային-ազատագրական շարժման կարևորագույն իրադարձությունները, Հայաստանի 1-ին, 2-րդ և 3-րդ հանրապետությունների պատմությանը և դասեր քաղել անցյալի սխալներից,

3. կկարողանա գիտելիքները լայնորեն օգտագործել իր աշխատանքային, հատկապես կրթական գործընթացներում:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Հայ ազատագրական շարժումները 17-18-րդ դդ.: Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: ***Թեմա 2՝*** Հայկական հարցի ծագումը և բովանդակությունը: Հայ ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը (1870-ական թթ. - 20–րդ դ. սկիզբ): ***Թեմա 3՝*** Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները: Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը: Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: ***Թեմա 4՝*** Արևմտահայության Մեծ եղեռնը և ինքնապաշտպանական մարտերը: ***Թեմա 5՝*** 1917թ. փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը: 1917թ հոկտեմբերյան հեղափոխությունը և Հայաստանը: ***Թեմա 6՝*** Հայաստանի առաջին հանրապետությունը (1918 -1920 թթ.): ***Թեմա 7՝*** Խորհրդային Հայաստանը (1920-1991 թթ.): ***Թեմա 8՝*** Հայաստանի երրորդ հանրապետությունը (1991-2000 թթ.): ***Թեմա 9՝*** Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը:

***Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ 7, 7, 6 միավոր արժեքով:

**0304/B11.** ***«ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ»*** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4–րդ, հանրագումարային քննություն*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված մարդուն և մասնագետին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի մասին փիլիսոփայական հայեցակարգերի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները,
2. կհասկանա ճշմարտության և մոլորության, գիտելիքի և հավատի, ռացիոնալի և իռացիոնալի սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը,
3. կկարողանա վերլուծել և ամբողջական պատկերացում կազմել արդի քաղաքակրթական, քաղաքական-մշակութային և մարդաբանական պատկերացումների, տեխնածին քաղաքակրթության գլոբալ հիմնախնդիրների մասին:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Փիլիսոփայության առարկան: ***Թեմա 2՝*** Կեցություն և մատերիա: ***Թեմա 3՝*** Դիալեկտիկա: ***Թեմա 4՝*** Բնություն: ***Թեմա 5՝*** Մարդ և պրակտիկա: ***Թեմա 6՝*** Գիտակցություն և ճանաչողություն: ***Թեմա 7՝*** Գիտություն: ***Թեմա 8՝*** Հասարակություն*:* ***Թեմա 9՝*** Մշակույթ: Անձ: Ապագա:

***Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 4 հարց:

## 2.2. Կամընտրական դասընթացներ

**0305/B15.** ***«ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ»*** -1*(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *3–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում (ունկընդրել, կարդալ, խոսել, գրել):

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա հարուստ բառապաշար,
2. կիմանա անգլերենի քերականության հատուկ բարդություն ունեցող երևույթները,
3. կունենա անգլերեն բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Արտասանություն, ուղղախոսություն. անգլերենի հնչյունական համակարգի ընդհանուր բնութագիրը, հնչյունների և հնչույթների արտասանական առանձնահատկությունները, նախադասության հնչերանգը: ***Թեմա 2՝*** Բառապաշար, բառակազմություն. հիմնական բառակազմական միջոցներ (ածանցում, բառաբարդում, փոխակարգում): ***Թեմա 3՝*** Քերականություն. խոսքի մասերի քերականական կարգերը, նախադասության շարադասությունը (ուղիղ և շրջուն): ***Թեմա 4՝*** Առաջարկվող թեմաներ. «Ընտանիք», «Ընտանեկան հարաբերություններ և ավանդույթներ», «Իմ հետաքրքրությունները», «Ճանապարհորդություն», «Երազանքներ», «Իմ ապագա մասնագիտությունը», «Շրջակա միջավայրը և նրա պահպանումը», «Հանրամշակութային երևույթներ» և այլն:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**0305/B15.** ***«ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ»*** -1*(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *3–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է թարմացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականական և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա: Այս փուլում ստացած գիտելիքները հիմք են հանդիսանում հետագա՝ առավել խորացված ուսումնասիրության համար:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ճիշտ արտասանել ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները.
2. կկարողանա ճիշտ հնչերանգով ձևակերպել հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները՝ դադար, շեշտ, հիմնական հնչերանգ, մեղեդային եզրափակում, տեմպ.
3. կիմանա ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծել բառը և նախադասությունը:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchainement. Liaison. ***Թեմա 2՝*** Հատուկ և հասարակ գոյական: Գոյականի սեռը, թիվը: Սեռի արտահայտությունը հոդերի և ածանցների միջոցով: ***Թեմա 3՝*** Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: ***Թեմա 4՝*** Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: Ածականի համաձայնությունը գոյականի հետ: ***Թեմա 5՝*** Քանակական և դասական թվական: Քանակական թվականի գործածությունը: ***Թեմա 6՝*** Անձնական անշեշտ դերանուններ, դրանց գործածությունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտված դերանուններ:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

**0305/B17.** *«ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ»* -2*(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ընդհանուր մասնագիտական բառապաշարին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա համակարգել նախորդ փուլում յուրացրած քերականական նյութը՝ հիմնվելով հաղորդակցական սկզբունքի վրա,
2. կունենա անգլերեն բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ,
3. կկարողանա ընկալել ունկնդրված /կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից/,
4. կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինաբանական համակարգին:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Ուղղախոսություն, ուղղագրություն. անգլերենի արտասանական առանձնահատկությունները, տարբեր տիպի նախադասությունների հնչերանգն ու խոսքի առոգանությունը, ուղղագրական հիմնական կանոնները: ***Թեմա 2՝*** Բառապաշար, բառակազմություն. վերարտադրողական և ընկալողական բառապաշարի ընդլայնում: ***Թեմա 3՝*** Քերականություն. նախորդ փուլում յուրացրած քերականական նյութի (անվանական և բայական կարգերի) համակարգում հաղորդակցական սկզբունքի հիման վրա: ***Թեմա 4՝*** Հանրամշակութային գիտելիքներ անգլախոս երկրների մշակույթի և լեզվակիր ժողովուրդների հասարակական կյանքի մասին: ***Թեմա 5՝*** Մասնագիտական լեզվի տերմինաբանական համակարգ:

*Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**0305/B17.** *«ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ»* -2*(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ճիշտ արտասանել ֆրանսերեն հնչյունները, ճիշտ արտասանությամբ ձևակերպել նախադասությունը,
2. կկարողանա լսելով հասկանալ և վերաշարադրել տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անծանոթ բառ),
3. կկարողանա զրույց վարել անցած թեմաներով:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Գոյական անուն, միայն հոգնակի թվով գործածվող գոյականներ. Les funerailles, les entrailles. Բաղադրյալ գոյականների հոգնակի թվի կազմությունը (des cour- fleurs, des casse–croute և այլն): ***Թեմա 2՝*** Ածականի իմաստի փոփոխությունը կախված նրա դիրքից՝un homme grand-un grand homme. Անորոշ

դերանվանականածականներ: ***Թեմա 3՝*** Հարաբերական դերանուններ, դրանց ձևերը և գործածությունը նախադասության մեջ՝ qui, que, dont, ou, lequel և այլն (դասակարգում): ***Թեմա 4՝*** Պայմանական եղանակ, կազմությունը և գործածությունը համադաս և ստորադասական նախադասություններում: Ըղձական եղանակ: Սահմանական եղանակը ուրիշի ուղղակի խոսքում:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

**0304/B16.** ***«ԿՐՈՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»*** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *3–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների,կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դենոմինացիաների վերաբերյալ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա՝ ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնածիսական առանձնահատկություններ ունեն դրանք, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները և տոնածիսական համակարգը,
2. կիհասկանա ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները,
3. կկարողանա կատարել տարբեր կրոնների ու կրոնական ուղղությունների տարբերակում և քննական արժևորում:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** «Կրոնների պատմություն» առարկան, «Կրոն» հասկացությունը: ***Թեմա 2՝*** Կրոնի պատմական ձևերը, ազգային և համաշխարհային կրոններ: ***Թեմա 3՝*** Ժամանակակից համաշխարհային կրոններ. բուդդայականության ծագումը, դավանաբանակա և պաշտամունքային առանձնահատկությունները: ***Թեմա 4՝*** Քրիստոնեության առաջացումը, դավանաբանության և պաշտամունքի ձևավորումը: ***Թեմա 5՝*** Քրիստոնեության հիմնական ուղղությունները, ժամանակակից քրիստոնեությունը: ***Թեմա 6՝*** Իսլամ. ծագումը, զարգացումը, դավանաբանական և պաշտամունքային առանձնահատկությունները, հիմնական ուղղությունները: ***Թեմա 7՝*** Ժամանակակից կրոնական դենոմինացիաները և ներփակ հոսանքները: ***Թեմա 8՝*** Քրիստոնեությունը Հայաստանում: ***Թեմա 9՝*** Հայ Առաքելական եկեղեցու պատմության

հիմնախնդիրները: ***Թեմա 10՝*** Հայոց եկեղեցու դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկությունները:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 3 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**0202/B16.** ***«ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»*** *(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *3–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային և հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. համապարփակ գիտելիքներ կունենա գիտության մեջ «մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումների և տեսությունների մասին,
2. ծանոթ կլինի մշակույթի կառուցվածքին, բաղադրիչներին, տիպաբանությանը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափություններին,
3. ընդհանուր գիտելիքներ կունենա համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունների վերաբերյալ:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: ***Թեմա 2՝*** Մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, գործառույթները և մեխանիզմները: ***Թեմա 3՝*** Մշակութային գործընթացներ: Մշակույթը «անհատ», «բնություն», «հասարակություն», «էթնոս», «քաղաքակրթություն» կատեգորիաների համատեքստում: ***Թեմա 4՝*** Համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումները. մոտեցումներ, հարցադրումներ, օրինաչափություններ: ***Թեմա 5՝*** Ժամանակակից մշակութային գործընթացները և գլոբալացման խնդիրը:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**0201/B18.** ***«ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»*** *(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակները՝ *4–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Ուսանողների մոտ ձևավորել տնտեսագիտության մեթոդաբանության, շուկայական տնտեսության բովանդակության, սեփականատիրական հարաբերությունների, միկրոտնտեսական և մակրոտնտեսական զարգացման օրինաչափությունների, պետական բյուջեի ու պետության տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման մասին պատկերացումներ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի տնտեսագիտության հիմունքները,
2. պատկերացում կունենա շուկայական տնտեսության բնույթի, կատեգորիաների, զարգացման հիմնական օրինաչափությունների մասին:

Բովանդակությունը.

***Թեմա 1*** ՝ Պահանջարկի և առաջարկի առաձգականությունը: ***Թեմա 2***՝ Սպառողի վարքի տեսության հիմունքները: ***Թեմա 3***՝ Գործարար ձեռնարկությունները և արտադրողի վարքը:***Թեմա 4*** ՝ Արտադրության ծախքերի տեսություն: ***Թեմա 5*** ՝ Մրցակցային և ոչ մրցակցային շուկաները: ***Թեմա 6*** Մակրոտնտեսական ցուցանիշները: ***Թեմա 7***՝ Ազգային հաշիվների համակարգը: ***Թեմա 8*** ՝Մակրոտնտեսական անկայունություն, տնտեսական ցիկլեր, գործազրկություն և ինֆլյացիա: Տնտեսական աճ: ***Թեմա 9***՝ Ամբողջական պահանջարկ և ամբողջական առաջարկ: ***Թեմա 10*** ՝ Վճարային հաշվեկշիռ և արժույթային կուրսեր:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

**0304/B18.** *«ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակները՝ *4–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա համապատասխան գիտելիքներ քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերի մասին,
2. պատկերացում կունենա քաղաքագիտության առարկայական տիրույթի ու մեթոդաբանության մասին,

3. կունենա քաղաքագիտական վերլուծություններ կատարելու բավարար ունակություններ,
4. կկարողանա կողմնորոշվել գործնական քաղաքականության հիմնահարցերի մեկնաբանման հարցերում:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Քաղաքագիտության ձևավորումը որպես գիտություն: ***Թեմա 2՝*** Քաղաքագիտության օբյեկտը և առարկան: ***Թեմա 3՝*** Քաղաքականության ծագումը և էությունը: ***Թեմա 4՝*** Քաղաքական իշխանության էությունը, կառուցվածքը և լեգիտիմությունը: ***Թեմա 5՝*** Հասարակության քաղաքական համակարգը: ***Թեմա 6՝*** Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: ***Թեմա 7՝*** Քաղաքական կուսակցությունները և կուսակցական համակարգեր: ***Թեմա 8՝*** Քաղաքական գործընթացներ: ***Թեմա 9՝*** Ընտրություններ և ընտրական համակարգեր: ***Թեմա 10՝*** Քաղաքական գաղափարախոսություններ: ***Թեմա 11՝*** Քաղաքական էլիտա և լիդերություն:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

**0304/B18.** *«ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *4–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները: Նպատակներից է նաև ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների մշակումը, ինչպես նաև իրավական աշխարհայացքի ու մշակույթի ձևավորումը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1. կիմանա պետության և իրավունքի մասին հիմնական սկզբունքները, հայեցակարգերը,
2. կիմանա օրենսդրության առանձին ճյուղերի իրավական կարգավորման հիմունքները,
3. կիմանա կարևոր իրավական հասկացությունները, եզրույթները,
4. կունենա գիտելիքները գործնականում կիրառելու ունակություններ և հմտություններ:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Հասարակություն և պետություն: ***Թեմա 2՝*** Իրավունք: Իրավական կարգավորման կառուցակարգը և իրավունքի կենսագործումը: ***Թեմա 3՝*** Իրավունքի ձևերը: Իրավունքի համակարգը: ***Թեմա 4՝*** Օրինականություն, իրավաչափ վարքագիծ, իրավախախտում: ***Թեմա 5՝***

Կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմնահարցերը: ***Թեմա 6՝*** Սահմանադրական իրավունք: ***Թեմա 7՝*** Դատական իշխանություն և դատական համակարգ: ***Թեմա 8՝*** Քաղաքացիական իրավունք: ***Թեմա 10՝*** Աշխատանքային իրավունք: ***Թեմա 11՝*** Ընտանեկան իրավունք: ***Թեմա 12՝*** Էկոլոգիական իրավունք: ***Թեմա 13՝*** Քրեական իրավունք: ***Թեմա 14՝*** Դատավարական իրավունք: Միջազգային իրավունք:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց (նախապես տրամարդված հարցաշարից), որոնցից առնվազն երկուսին դրական պատասխանող ուսանողը ստանում է «ստուգված»:

## 3. ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

## Պարտադիր դասընթացներ

### 0104/B01 *«ՀԱՄԱԿԱՐԳՉԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»* *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(8ժամ դասախոսություն, 24 ժամ լաբորատոր պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *1–ին, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ համակարգիչների, դրանց տեխնիկական, ծրագրային և ինֆորմացիոն ապահովման մասին, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***

*Գիտելիք և իմացություն*

- **համակարգչի կառուցվածքի և աշխատանքի հիմնական սկըզբունքների մասին:**

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- **աշխատելու Windows օպերացիոն համակարգի և Word, Excel, PowerPoint ծրագրերի հետ,**

✓ *(ընդհանրական կարողություններ)*

**կատարելու իր թղթավարությունը (կուրսային, ավարտական աշխատանքներ, հաշվարկների կատարում, զեկուցումների համար սլայդների պատրաստում և այլն):**

***Թեմա 1՝*** Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: Օպերացիոն համակարգի հասկացություն և բազմախնդրայնության գաղափար: Windows օպերացիոն համակարգի գրաֆիկական ինտերֆեյսի հետ աշխատելու հիմնական սկզբունքները: ***Թեմա 2՝*** Microsoft Word փաստաթղթի ստեղծում և ձևավորում: ***Թեմա 3՝*** Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ: ***Թեմա 4՝*** Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:

***Գնահատման մեթոդները և չափանիշները***

Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ուսանողին տրվում են հանձնարարություններ, որոնք հիմնված են դասընթացի ընթացքում անցած թեմաների վրա:

**015/B02.** ***«ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»***
*(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *3–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պատկերացում էկոլոգիա գիտության տեսական հիմնահարցերի, բնապահպանության առկա խնդիրների և հիմնահարցերի լուծման, առաջարկվող եղանակների և կիրառվող մեթոդների ու մոդելների մասին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա էկոլոգիա գիտության հիմնական տեսական մոտեցումները, օրենքները, հարցերը,
2. կկարողանա օգտագործել այդ գիտելիքները բնապահպանական հարցերի լուծման ոլորտում,
3. կկարողանա կատարել անհրաժեշտ վերլուծություն:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** էկոլոգիայի զարգացման պատմական ուղին, տեղն ու դերը մյուս գիտությունների համակարգում: Օրգանիզմներ և էկոհամակարգ: էկոլոգիական հիմնական օրենքները և կանոնները: ***Թեմա 2՝*** էկոհամակարգի տարրերը և տրոֆիկ մակարդակները: ***Թեմա 3՝*** Օրգանիզմների և միջավայրի փոխհարաբերությունը, էկոգործոններ: ***Թեմա 4՝*** Էներգիան էկոհամակարգերում: Սննդային շղթաներ: Կենսաերկրաքիմիական ցիկլեր: ***Թեմա 5՝*** Մարդու էկոլոգիա: Շրջակա միջավայր: Մարդածին համակարգեր: ***Թեմա 6՝*** Բնական պաշարների դասակարգումը: Գլոբալ արտադրություն և քայքայում: ***Թեմա 7՝*** Շրջակա միջավայրի ոլորտների նկարագրություն: ***Թեմա 8՝*** Պոպուլյացիոն էկոլոգիա: ***Թեմա 9՝*** Շրջակա միջավայրի աղտոտվածության հիմնահարցերը: Գլոբալ էկոլոգիական պրոբլեմներ:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից:

**0001/B03.** ***«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ»*** *(0 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(32 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *5–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է

ուսանողներին ծանոթացնել արտակարգ իրավիճակներում *(երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհներ, արտադրական և տրանսպորտային վթարներ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում և այլն)* և պատերազմական պայմաններում պաշտպանվելու ձևերին և մեթոդներին, նաև փրկարարական աշխատանքների ծավալներին, բովանդակությանը և կատարմանը, ինչպես նաև էքստրեմալ պայմաններում (ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ) մինչբժշկական օգնության ցուցաբերում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ստեղծված արտակարգ իրավիճակներում և պատերազմական պայմաններում ժամանակին և ճիշտ պաշտպանվելու ձևերն ու մեթոդները:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: ***Թեմա 2՝*** Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները: ***Թեմա 3՝*** Բնակչության գործողությունները աղաբեկությունների և նրանց սպառնալիքի ժամանակ: ***Թեմա 4՝*** Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: ***Թեմա 5՝*** Բնակչության պաշտպանության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: ***Թեմա 6՝*** Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: ***Թեմա 7՝*** Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը: ***Թեմա 8՝*** Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: ***Թեմա 9՝*** Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: ***Թեմա 10՝*** Սուր հիվանդություններ և թունավորումներ: ***Թեմա 11՝*** Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: ***Թեմա 12՝*** Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքը ընթանում է բանավոր՝ հարցատոմսերով: Հարցատոմսը ներառում է երեք հարց՝ երկուսը տեսական, մեկը գործնական:

**0105/B04.** ***« ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՈՆՑԵՊՑԻԱՆԵՐ »***

*(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *3–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է հումանիտար մասնագիտություն ընտրած ուսանողներին ծանոթացնել բնական գիտությունների մեթոդոլոգիային և հայեցակարգերին,ուսանողների մոտ ձևավորել ժամանակակից պատկերացումներ բնական գիտությունների զարգացման

օրինաչափությունների և հեռանկարների շուրջ,նրանց մատուցել այն գիտելիքների պաշարը,որոնք անհրաժեշտ են զարգացած և լայն աշխարհայացքի ձևավորման համար:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բնագիտության ժամանակակից հայեցակարգերի ձևավորման պատմությունը,
2. կհասկանա բնագիտության ժամանակակից հայեցակարգերի էությունը,
3. կկարողանա ճիշտ կողմնորոշվել ինֆորմացիայի գնահատման և վերլուծության ժամանակ:

Բովանդակությունը.

***Թեմա 1*** Բնագիտության զարգացման պատմությունը: ***Թեմա 2*** Տիեզերքի ծագման և զարգացման գիտական տեսություններ և դրանց պատմական զարգացումը:***Թեմա 3*** Դասական ֆիզիկայի հայեցակարգերը: ***Թեմա 4*** Քվանտային ֆիզիկայի հայեցակարգերը:***Թեմա 5*** Նյութի կառուցվածքը: ***Թեմա 6*** Անօրգանական և օրգանական միացություններ: ***Թեմա 7*** Միջառարկայական ադապտացիայի անխուսափելիությունը:***Թեմա 8*** Կյանքի ծագումը և ժամանակակից երկրաֆիզիկական պայմանները: ***Թեմա 9*** Կյանքը որպես էվոլյուցիոն զարգացման և կենսաբանական դիսկրետ ձևերի /տեսակների/ փոխազդեցության արդյունք:Կյանքի հատկությունների ուսումնասիրման համակարգային վերլուծություն,կիբեռնետիկա,ոչ գծային մոդելավորում: ***Թեմա 10*** Մարդը, նրա կենսաբանական վերլուծությունը:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

**0105/B04.** ***« ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»*** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *3-րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մտածողության զարգացում, վերացական մտածողության ձևավորում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի հանրակրթական և հանրամատչելի բնույթի մաթեմատիկական որոշ հարցերի,
2. կկարողանա մոդելավորել առօրեական բնույթի որոշ խնդիրներ և լուծել:

Բովանդակությունը.

***Թեմա 1*** Բազմությունների տեսության տարրերը: ***Թեմա 2*** Մատրիցներ և որոշիչներ:***Թեմա 3*** Մաթեմատիկական ինդուկցիա: ***Թեմա 4*** Կոորդինատների մեթոդը: ***Թեմա 5*** Ոչ էվկլիդեսյան երկրաչափություն:***Թեմա 6*** Մաթեմատիկական մոդելավորում:***Թեմա 7*** Աքսիոմային մոտեցումը

մաթեմատիկայում:***Թեմա 8***՝ Հավանականությունների տեսության տարրերը: ***Թեմա 9***՝ Մաթեմատիկական վիճակագրության տարերրը: ***Թեմա 10*** Մաթեմատիկա առարկան և մաթեմատիկական լեզուն:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

### 3.1. «Կիրառական արվեստ» մասնագիտություն

**0403/B01.** *«ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-1 *(6 կրեդիտ)*
Շաբաթական՝ 6 ժամ *(6 ժամ դասախոսություն, 90 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *1–ին, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Գծանկարչության նպատակն է ուսանողին ծանոթացնել մատիտանկարի հնարավորություններին, նրա մոտ ձևավորել տարածական մտածելակերպ: ՈՒսումնասիրել մարդու գլխի առանձին մանրամասեր:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կծանոթանա մատիտանկարի հնարավորություններին, հարթ մակերեսի վրա ծավալներ ստանալու եռաչափ հնարքներին,
2. կուսումնասիրի մարդու գլխի առանձին մանրամասերը, համաչափությունները

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նատյուրմորտ զիպսե երկրաչափական մարմիններով,զիպսե նախշազարդով,կտորի ծալքերով/Ա1,Ա2/:***Թեմա 2***՝ Նատյուրմորտ զիպսե զարդանախշով, մրգով/Ա1,Ա2/:***Թեմա 3***՝ Գիպսե բերան/Ա2,Ա3/: ***Թեմա 4***՝ ՝ Գիպսե աչք/Ա2,Ա3/: ***Թեմա 5***՝ ՝ Գպսե քիթ/Ա2,Ա3/: ***Թեմա 6***՝ Գիպսե ականջ/Ա2,Ա3/: ***Թեմա 7***՝ Նատյուրմորտ զիպսե քիթ,բերան,աչք կտորի համադրությամբ/Ա1,Ա2/:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B02.** *«ԳՈՒՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-1 *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4ժամ *(8 ժամ դասախոսություն,56 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *1–ին, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Առարկայի նպատակն է ուսանողներին սովորեցնել օգտվել գույնի, գծի, կոմպոզիցիայի, ռիթմի, լույսի ու ստվերի ընձեռած հնարավորություններից՝ հարթության վրա իրականությունը վերակենդանացնելու, ծավալի ու տարածության պատրանք ստեղծելու համար: Սովորեցնել աշխատել ջրաներկով՝ գույների թափանցիկ հաջորդական շերտերի միջոցով տաք ու սառը գունային արտահայտիչ կոլորիտ ստանալու համար:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գեղանկարչության հիմնական պայմանները,
2. կկարողանա կատարել ճիշտ կառուցում,
3. կկարողանա առարկաներին տալ ճիշտ գունային լուծումներ:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նկարել նատյուրմորտ՝երկու կավե սափորներով (մեկը՝ ջնարակած), բանջարեղենով, մրգերով, կտորի ծալքերով (գրիզալ, Ա2, գուաշ, ջրաներկ): ***Թեմա 2***՝Պլեներ:***Թեմա 3***՝ Նկարել նատյուրմորտ կարմիր կտորով, նռներով, ջնարակված սափորով (Ա2, գուաշ, ջրաներկ): ***Թեմա 4***՝ Պլեներ: ***Թեմա 5***՝ Նկարել նատյուրմորտ կարպետով, ծղոտե ափսեով, ցորենով, չորացրած բույսերով (շագանակագույն կոլորիտ), (Ա2, գուաշ, ջրաներկ): ***Թեմա 6***՝Կատարել կոմպոզիցիոն աշխատանք (Ա2, Ա3, ջրաներկ):

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0303/B03.** *«ՊԼԱՍՏԻԿ ԱՆԱՏՈՄԻԱ»* -1*(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *1-ին, առանց եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Պլաստիկ անատոմիան ուսումնասիրում է մարդու մարմնի ձևերը, նրա համաչափություններն ինչպես հանգիստ վիճակում, այնպես էլ՝ շարժումների ժամանակ: Առարկայի նպատակն է ստեղծել մարդու ռեալիստական պատկեր,

այսինքն՝ նրան ճշգրիտ պատկերել: Սովորեցնել ուսանողներին մարմինը նկարել կամ քանդակել առանց մոդելի՝ հիշողության վրա հիմնվելով:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մարդու մարմնի ձևերը և կառուցվածքը,
2. կհասկանա մարդու շարժումների ժամանակ պլաստիկ փոփոխությունների մեխանիզմը և արդյունքները,
3. կկարողանա առանց մոդելի՝ միայն հիշողությամբ քանդակել կամ նկարել մարդու մարմինը:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ «Պլաստիկ անատոմիա» առարկան: ***Թեմա 2***՝ Ոսկրային համակարգ: Կմախք: ***Թեմա 3***՝ Կմախքի առանձին մասերի պլաստիկ նշանակությունը (գանգ, ողնաշար, կրծքավանդակ, ուսագոտի, կոնք, վերին և ստորին ազատ վերջույթներ): ***Թեմա 4***՝ Մարմնի ընդհանուր և տարբեր մասերի համաչափությունները: ***Թեմա 5***՝ Մարմնի ձևերի փոփոխությունները շարժումների ժամանակ:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 9 միավոր արժեքով:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 2,25 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 2,25 է:

**0404/B04.** *«ԳԾԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(8 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *1-ին, առանց եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Ուսանողին սովորեցնել գծագրական երկրաչափության խնդիրների լուծման հնարավորություններին,և ձևավորել տարածական և մտավոր մտածելակերպ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1.կիմանա գծագրական երկրաչափություն առարկայի օգնությամբ էպյուրային հարթությունների միջոցով գտնել կետերի,ուղիղների և հարթությունների հատման գծերը և հարթությունների հետքերի դիրքերը

2.կկարողանա գծագրական երկրաչափության խնդիրները լուծել տարածության մեջ,որից հետո անցկացնել թղթի վրա

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Կետերի պատկերումը տարբեր օկտավաններում:Ուղիղ գծի դիրքերը պրոյեկտների հարթությունների նկատմամբ:***Թեմա 2***՝ Երկու ուղիների փոխադարձ դիրքերը:***Թեմա 3***՝Հարթություն: ***Թեմա 4***՝Ողղի և հարթության

փոխադարձ դիրքը: ***Թեմա*** **5**՝ Երկրաչափական մարմինների հատումը հարթությամբ:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 9 միավոր արժեքով:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 2,25 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 2,25 է:

**0404/B06.** *«ԿՈՄՊՈԶԻՑԻԱ»*-1(3 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ *(4 ժամ դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *1–ին, եզրափակիչ գնահատմամբ*

***Տեքստիլ***

*Նպատակը.*

Պատրաստել կիրառական արվեստի նկարիչ-մասնագետներ, որոնք կարող են արագ և նպատակասլաց կատարել գեղարվեստական բարձր մակարդակի գորգի, կարպետի, գոբելենի էսքիզներ: Հատուկ ուշադրություն դարձնել գեղագիտական, գեղարվեստական գիտելիքների ուսուցմանը և կոմպոզիցիոն ձևաստեղծմանը՝ մակերեսի վրա ստեղծելով ռիթմիկա, շարժում, դասավորություն, հավասարակշռություն, չհավասարակշռած հավասարակշռություն, գունա–գծային ռիթմիկաներ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի կոմպոզիցիոն ձևաստեղծման հնարքներին,
2. կհասկանա գույնի երևույթը,
3. կկարողանա ստեղծել տարբեր տեսակի ռապպորտներ և դրանք օգտագործել հիմնական էսքիզներում:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Ծանոթություն առարկայի, նրա նպատակների ու խնդիրների, ինչպես նաև տեխնիկական միջոցների հետ: ***Թեմա 2***՝ Ռիթմիկա, շարժում, հավասարակշռություն, չհավասարակշռված հավասարակշռություն: Ստեղծել պարզ երկրաչափական պատկերների դասավորություններ (եռանկյուն, քառակուսի, շրջան), գծերի միջոցով: ***Թեմա 3***՝ Գույն: Գունային հարաբերություններ: Կոլորիտ: Կոնտրաստ: Ստեղծել դասավորություններ գունային ծավալների, գունային կոնտրաստների և տոնային անցումների միջոցով: ***Թեմա 4***՝ Ռապպորտ: Ռապպորտի տեսակները: Ստեղծել կրկնվող էլեմենտով կարպետների էսքիզներ: ***Թեմա 5***՝ Ստեղծել երկրաչափական, բուսական և կենդանական էլեմենտներով ֆրիզներ՝ օգտագործելով մանրանկարչությունից, գորգարվեստից մեզ հասած եզրագոտիների զարդամոտիվները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

***Կերամիկա***

*Նպատակը.*

Պատրաստել կիրառական արվեստի նկարիչ-մասնագետներ, որոնք կարող են արագ և նպատակասլաց կատարել կենցաղում օգտագործվող փայտե իրերի գեղարվեստական բարձր մակարդակի էսքիզներ: Ցուցաբերել հոգատար վերաբերմունք ազգային–մշակութային ժառանգության նկատմամբ և դրանց հիմքի վրա հասնել ժամանակակից խնդիրների և պահանջների մեկնության ու կատարմանը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի կոմպոզիցիոն ձևաստեղծման հնարքներին,
2. կկարողանա պարզ զարդանախշերի համադրությամբ ճաշակով ձևավորել հարթությունը,
3. կկարողանա նախագծել կենցաղում օգտագործելի իրեր:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Բուսական զարդանախշերով եզրագոտիներով և վարդյակներով խոհանոցային տախտակների փորագրում: ***Թեմա 2***՝ Սափոր շերտերով բարձրանալու եղանակով:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0404/B40.** *«ԱՇԽԱՏԱՆՔ ՆՅՈՒԹԻ ՎՐԱ»*-1 *(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(2ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *1–ին, հանրագումարային քննություն*

***Տեքստիլ***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել կարպետի տեխնիկան՝ հինել, գործել մեկ կամ երկու զարդանախշ՝պարզ էլեմենտներ հին հայկական օրինակներից:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա օգտվել կարպետի դազգահից, կարպետի հաշվարկային էսքիզից, սխեմաներից,
2. կկարողանա գործել տարբեր զարդանախշեր, կարպետի տեխնիկայով և գունային համադրությամբ և հակադրությամբ ֆոնի հետ,
3. կկարողանա ինքնուրույն պարապմունքների ժամանակ գործել հելյունային ծածկոցների դրվագներ՝ մեկ կամ երկու զարդանախշով:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Գործել կարպետ՝ երկու կրկնվող զարդանախշով: և ասեղնագործ ծածկոցների դրվագներ:

***Թեմա 2***՝ Գործել հելյունային ծածկոցների դրվագ՝ մեկ կամ երկու զարդանախշով:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում–քննություն:

***Կերամիկա***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել խեցեգործության՝ որպես դեկորատիվ-կիրառական արվեստի ճյուղի, մշակութային երևույթի, ինչպես նաև խեցեգործական իրերի պատրաստման ասպարեզում անհրաժեշտ գիտելիքներին և հմտություններին՝ խեցեգործական իրերի պատրաստման ասպարեզում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1 կծանոթանա և կկարողանա կավից պատրաստել կենցաղայի իրեր՝ շերտերով բարձրացման եղանակով:

Բովանդակությունը

***Թեմա 1***՝ Սափոր շերտերով բարձրանալու եղանակով:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում–քննություն:

**0105/B05.** *«ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»*-1 *(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *1–ին, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մետաղների ֆիզիկական, մեխանիկական և տեխնոլոգիական հատկություններին, նրանց համաձուլվածքների ստացման տեխնոլոգիային, մշակման եղանակներին և օգտագործման բնագավառներին, կոռոզիայի դեմ պայքարի տեխնոլոգիական մեթոդներին, սովորեցնել ուսանողներին իրենց աշխատանքների համար ընտրել համապատասխան նյութեր:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կծանոթանա մետաղների ֆիզիկական, մեխանիկական, տեխնոլոգիական հատկություններին,
2. կհասկանա կոռոզիայի երևույթը և կծանոթանա նրա դեմ պայքարի միջոցներին,
3. կծանոթանա մետաղների համաձուլվածքներին, նրանց հատկություններին և կիրառման բնագավառին:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նյութերի տեխնոլոգիա առարկան և նրա նշանակությունը: Մետաղների և նրանց համաձուլվածքների օգտագործումը դեկորատիվ արվեստում: ***Թեմա 2***՝ Մետաղների ֆիզիկական հատկությունները (գույն, փայլ, խտություն, կարծրություն, էլեկտրական և մագնիսական հատկությունները): ***Թեմա 3***՝ Մետաղների մեխանիկական հատկությունները (ամրություն, առաձգականություն, պլաստիկություն, դիմացկունություն): ***Թեմա 4***՝ Մետաղների տեխնոլոգիական հատկությունները (հեղուկահոսություն, ձուլման կծկում, կռելիություն, եռակցություն, մշակելիություն): ***Թեմա 5***՝ Մետաղների և մետաղյա գեղարվեստական իրերի կոռոզիան, կոռոզիայի էությունը և տեսակները, կոռոզիայի դեմ պայքարի տեխնոլոգիական մեթոդները: ***Թեմա 6***՝ Մետաղների ջերմային մշակում (շիկացում, նորմալացում, մխում, միամեղմում): ***Թեմա 7***՝ Մետաղների ջերմաքիմիական մշակում (ցեմենտացում, ազոտացում, ցիանացում, ալյումինավորում, սիլիկավորում): ***Թեմա 8***՝ Սև մետաղներ: Երկաթի ստացման տեխնոլոգիան: ***Թեմա 9***՝ Երկաթի համաձուլվածքների (հալույթների) ստացումը: ***Թեմա 10***՝ Երկաթ-ածխածնային համաձուլվածք: ***Թեմա 11***՝ Ածխածնային պողպատներ, նրանց տեսակները և կիրառությունը: ***Թեմա 12***՝ Չուգունի ստացումը, նրա տեսակները (քրոմային, ալյումինային, բարձրմանգանային, քրոմնիկելային, գորշ, տիտանային, պղնձային, բարձրսիլիցիումային): ***Թեմա 13***՝ Լեգիրացված պողպատ, նրա տեսակները (կոնստրուկտորական և գործիքային պողպատներ): ***Թեմա 14***՝ Ֆերրոհալույթներ, նրանց տեսակները և կիրառությունը:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 9 միավոր արժեքով:

*Ստուգման ձևերն են.*

*1-ին ստուգում.* Բանավոր հարցում: Միավորների քայլը 2,25 է:

*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում: Միավորների քայլը 2,25 է:

**0404/B41.** *«ԱՇԽԱՏԱՆՔ ՆՅՈՒԹԻ ՎՐԱ»*-2 *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(4 ժամ դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *2–րդ, հանրագումարային քննություն*

***Տեքստիլ***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է տիրապետել կարպետի հաշվարկային սխեմային: Գործել հայկական այբուբենի տառերը՝որոշակի ոճավորված: Կարողանալ ցանկացած պարզագույն նկար ոճավորել և սխեմատիկ դարձնել:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա սխեմայի վրա ձևավորել հայկական տառատեսակներից մեկը,
2. կկարողանա տառազարդը գործել բուսական օրնամենտով և թռչնազարդով՝ գունային համադրությամբ ֆոնի և եզրագոտու հետ,
3. կկարողանա գործել հայկական ասեղնագործության հիմնական կարատեսակներից՝ մեկ անձեռոցիկ:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Գործել ոճավորված տառատեսակ կարպետի տեխնիկայով:

***Թեմա 2***՝ Գործել մեկ ասեղնագործ անձեռոցիկ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում–քննություն:

***Կերամիկա***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել խեցեգործական իրերի կիրառությունից ելնելով կատարել նյութի ճիշտ ընտրություն՝ պարզ կառուցվածքով և կոմպոզիցիայիով իր պատրաստելու համար:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1.կկարողանա կոնկրետ առարկա պատրաստելու համար ճիշտ ընտրել նյութը,

2.կծանոթանա կավանյութի հետ աշխատելու մեթոդներին և տեխնիկական միջոցներին:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Սկուտեղ հայկական զարդանախշերով:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում–քննություն:

**0403/B07.** *«ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-2 *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(6 ժամ դասախոսություն, 58 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *2–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ծանոթանալ մարդու գանգին և անատոմիական գլխին՝ մկանային համակարգի վերլուծական մոտեցմամբ, ուսումնասիրել նրա կառուցվածքը և համաչափությունները, ինչպես նաև մարդու մարմնի վերջույթների կառուցվածքը, ոսկրաբանությունը, տարբեր շարժումների ժամանակ՝ մկանների պլաստիկան:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կծանոթանա մարդու գլխի ոսկրաբանությանը,
2. կկարողանա վերլուծական մոտեցմամբ ուսումնասիրել գանգը, Դյուրերի երկրաչափական և անատոմիական գլուխները,
3. կուսումնասիրի լույսը և ստվերը որպես ծավալի վերարտադրման արտահայտչամիջոց:

Բովանդակությունը

***Թեմա 1***՝ Մարդկային գանգ կտորի համադրությամբ/Ա2/: ***Թեմա 2***՝ Մարդու գանգ զիպսե երկրաչափական դետալներով /խորանարդ,գունդ/ կտորի համադրությամբ/Ա1,Ա2/: ***Թեմա 3***՝ Տաշվածքով գիպսե գլուխ/Ա2/: ***Թեմա 4*** Մարդու գիպսե նատոմիական գլուխ/Ա2/:***Թեմա5***՝ Պլեներ,բնապատկերի ուսումնասիրում, մարդու ֆիգուրայի համատեղությամբ/Ա2,Ա3,Ա4/: ***Թեմա 6***՝ Գպսե գլուխ /Հերա,Վեներա, Ա2/:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B08.** *«ԳՈՒՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-2 *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 5 ժամ *(6 դասախոսություն, 74 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *2–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

ՈՒսանողներին սովորեցնել կոմպոզիցիան ճիշտ տեղադրել թղթի հարթության մեջ, զգալ նյութը, առարկաների՝ մեկը մյուսի վրա ունեցած փոխազդեցության խնդիրների վերարտադրությունը: Սովորեցնել աշխատել ջրաներկով ու գուաշով և դրանց խառնուրդներով ստանալ գունային անհրաժեշտ գամմա:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կծանոթանա մի քանի առարկաներից բաղկացած նատյուրմորտի ճիշտ կառուցման ձևերին,
2. կիմանա ջրաներկի և գուաշի տեխնիկայի առանձնահատկությունները,
3. կկարողանա ճիշտ ընտրություն կատարել գունային գամմայի անսահմանության մեջ:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նկարել նատյուրմորտ՝ գիպսե երկրաչափական մարմնով, երաժըշտական գործիքով, կտորի ծալքով (Ա2, գուաշ, ջրաներկ): ***Թեմա 2***՝ Նկարել նատյուրմորտ՝ կարպետով, նռներով, չոր բույսերով, կենցաղային, մետաղյա ու կավե առարկաներով (Ա2, գուաշ, ջրաներկ): ***Թեմա 3***՝ Նկարել նատյուրմորտ տարբեր նյութերից պատրաստված առարկաներով, ինչպես նաև ապակյա անոթով կտորների համադրությամբ: (Ա2, գուաշ, ջրաներկ): ***Թեմա 4***՝ Կատարել կոմպոզիցիոն աշխատանք, (Ա2, գուաշ, ջրաներկ): ***Թեմա 5***՝ Պլեներ: ***Թեմա 6***՝ Բարդ նատյուրմորտ/Ա1,Ա2/: ***Թեմա 7***՝՝ Պլեներ/Ա2,Ա3,Ա4/:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0303/B09.** *«ՊԼԱՍՏԻԿ ԱՆԱՏՈՄԻԱ»* -2*(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *2-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Պլաստիկ անատոմիան ուսումնասիրում է մարդու մարմնի ձևերը, նրա համաչափություններն ինչպես հանգիստ վիճակում, այնպես էլ՝ շարժումների ժամանակ: Առարկայի նպատակն է ստեղծել մարդու ռեալիստական պատկեր, այսինքն՝ նրան ճշգրիտ պատկերել: Սովորեցնել ուսանողներին մարմինը նկարել կամ քանդակել առանց մոդելի՝ հիշողության վրա հիմնվելով:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. կիմանա մարդու մարմնի ձևերը և կառուցվածքը,
5. կհասկանա մարդու շարժումների ժամանակ պլաստիկ փոփոխությունների մեխանիզմը և արդյունքները,
6. կկարողանա առանց մոդելի՝ միայն հիշողությամբ քանդակել կամ նկարել մարդու մարմինը:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Մկանային համակարգի պլաստիկ նշանակությունը ***Թեմա 2***՝ Միմիկայի մկաններ:Նրանց դերը հոգեվիճակների արտահայտման և դեմքի արտահայտությունների ձևավորման մեջ: ***Թեմա 3***՝ Պարանոցի մկանների պլաստիկ նշանակությունը:***Թեմա 4***՝ Իրանի և վերջույթների մկանների պլաստիկ նշանակությունը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0105/B10.** *«ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»*-2 *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *2–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ազնիվ և գունավոր մետաղների տեսակներին և հատկություններին, հանքանյութերից նրանց ստացման տեխնոլոգիային, նրանց օգտագործման բնագավառներին, սովորեցնել ուսանողներին իրենց աշխատանքների համար ընտրել համապատասխան նյութեր:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ազնիվ մետաղների ստացման տեխնոլոգիան,
2. կիմանա գունավոր մետաղների ստացման տեխնոլոգիան,
3. կկարողանա ազնիվ և գունավոր մետաղները կիրառել իր աշխատանքներում:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Ազնիվ մետաղներ: Պալլադիումի ստացման տեխնոլոգիան: Պալլադիումի անալիտիկ որոշումը, օգտագործման բնագավառները: ***Թեմա 2***՝ Պլատինի ստացման տեխնոլոգիան, նրա կիրառությունը գեղարվեստական գործերում: Պլատինի անալիտիկ հայտնաբերումը: ***Թեմա 3***՝ Ոսկու ստացման տեխնոլոգիան: Ոսկու անալիտիկ որոշումը, քանակական ստացումը՝ խառնուրդներից և համաձուլվածքներից վերականգնման եղանակով: Ոսկու կիրառության բնագավառները: ***Թեմա 4***՝ Արծաթի մաքրումը հալույթներից, լաբորատոր-նկարչական մնացորդներից: Արծաթի օգտագործման բնագավառները: Արծաթապատում: ***Թեմա 5***՝ Գունավոր մետաղների ստացման տեխնոլոգիան: Պղնձի ստացումը հանքանյութից: Պղնձի համաձուլվածքները, լեգիրացում: Լատունի ստացումը, տեսակները և կիրառությունը: Բրոնզի ստացումը, տեսակները և օգտագործման բնագավառները: ***Թեմա 6***՝ Պղինձ-նիկելային համաձուլվածքների ստա-

ցումը, նրանց տեսակները և կիրառությունը գեղարվեստական գործերում: ***Թեմա 7***՝ Այլումինի ստացումը հանքանյութերից, նրա քիմիական հատկությունները և կիրառությունը: ***Թեմա 8***՝ Ցինկի ստացման տեխնոլոգիան, նրա հատկությունները, օգտագործման բնագավառները: ***Թեմա 9***՝ Նիկելի ստացումն իր աղերից և խառնուրդներից: Նրա կիրառությունը գեղարվեստական գործերի պատրաստման ասպարեզում: Նիկելապատում: ***Թեմա 10***՝ Անագի ստացման տեխնոլոգիան: Անագապատումը գեղարվեստական գործերում: Անագի կիրառման բնագավառները: ***Թեմա 11***՝ Քրոմի ստացումը խառնուրդներից: Քրոմապատումը գեղարվեստական գործերում: Քրոմի օգտագործման բնագավառները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույնը արժեքով: Միավորների քայլը 1 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը գնահատվում է 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը՝ 2,5 է:

**0404/B11.** *«ԿՈՄՊՈԶԻՑԻԱ»-2* *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(4 ժամ դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *2–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

***Տեքստիլ***

*Նպատակը.*

Ցուցաբերել հոգատար վերաբերմունք ազգային–մշակութային ժառանգությանը և դրանց հիմքի վրա հասնել ժամանակակից խնդիրների ու պահանջների մեկնությանը և կատարմանը: Սովորեցնել պարզագույն խնդիրներից ստանալ համեմատաբար բարդ կոմպոզիցիաների գրաֆիկական և գունային լուծումներ: Մի շարք կոմպոզիցիոն վարժություններ կատարելով՝ ուսանողն իմանա տարբեր տեխնիկաներով ու նյութերով աշխատելու հնարքները և կատարել կոլաժներ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա հարթության վրա ստեղծել գունա–գծային ռիթմիկա, գունա–գծային շարժում, չհավասարակշռված հավասարակշռություն,
2. կկարողանա զարդանախշերի քիչ քանակությամբ ստեղծել իմաստալից և բարձրաճաշակ գործեր,
3. կկարողանա ստեղծել ներդաշնակ միջնազարդեր և եզրագոտիներ,
4. կկարողանա քիչ միջոցներով հասնել մեծ արտահայտչականության:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Ստեղծել դեկորատիվ նատյուրմորտներ: Կոմպոզիցիա հասկացողության վերլուծությունը:***Թեմա 2***՝ Ստեղծել պարզ, դեկորատիվ զարդամոտիվներով կազմված կոմպոզիցիաներ:Կոմպոզիցիայի կանոնները: ***Թեմա 3***՝ Կատարել կարպետի, գորգի թեմատիկ էսքիզներ: Կարպետանախշերի ծագումն ու բովանդակային վերլուծությունը:***Թեմա 4***՝ Կենդանիների, թռչունների

և մարդկային ֆիգուրների ոճավորում: Հայկական կարպետի զարդանախշերը և կոմպոզիցիոն պատկերի կառուցում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

***Կերամիկա***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել զարդանախշերի իմաստաբանությանն ու ծագումնաբանությանը, կոմպոզիցիոն ձևաստեղծման հնարքներին՝ կենցաղում օգտագործվող փայտե իրերը խորհրդանշական զարդանախշերով զարդարելու համար: Սովորեցնել պարզ զարդանախշերը գեղարվեստական բարձր ճաշակով համադրել իրար հետ, ճիշտ մասնատել դետալներն ու կատարել տեխնիկական հաշվարկները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա նախագծել կենցաղում օգտագործելի իրեր,
2. կկարողանա կատարել դետալների մասնատում և տեխնիկական հաշվարկներ,
3. կկատարի բուսական զարդանախշերով հարուստ թեմատիկ էսքիզ:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Նախագծել դեկորատիվ ծաղկաման:

***Թեմա՝ 2*** Նախագծել բուսական զարդանխշերով դեկորատիվ սկուտեղ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0202/B12. *«ԳԵՂԱԳՐՏՈՒԹՅՈՒՆ»*** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *2–րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ իրականության գեղագիտական յուրացման և արվեստի՝որպես այդյուրացման բարձրագույն ձևի ծագման ու զարգացման օրինաչափությունների մասին:

***Կրթական արդյունքները.***
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կիմանա արվեստի տարբեր տեսակների(գրականություն, ճարտարապետություն, թատրոն, կերպարվեստ, կինո և այլն)գեղագիտական առանձնահատկությունները,
2. Կկարողանա միմյանցից զատել և բնութագրել գեղեցիկն ու վեհը, ողբերգականն ու կատակերգականը:

Բովանդակությունը.
***Թեմա 1.*** Գեղագիտության առարկան և խնդիրները: ***Թեմա 2.***Գեղագիտական մտքի զարգացման հիմնական էտապները /Հին արևելք, Անտիկ դարաշրջան, Միջնադար, Վերածնունդ, Նոր ժամանակներ, Արդի դարաշրջան/: ***Թեմա 3.***Գեղագիտական գիտակցությունը եւ նրա կառուցվածքը: ***Թեմա4.***Գեղագիտության հիմնական կատեգորիաները /գեղեցիկ, վեհ, ողբերգական, կատակերգական/: ***Թեմա 5.***Արվեստը որպես իրականության արտացոլման և իմացության միջոց: Գեղարվեստական կերպար: ***Թեմա 6.***Արվեստի տեսակների դասակարգման սկզբունքները: ***Թեմա7.***Արվեստի տեսակների գեղագիտակ անառանձնահատկությունները:***Թեմա8.***Արվեստը որպես հասարակական գիտակցության ձև: Գեղագիտական դաստիարակություն:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***
*Ընթացիկ քննություններ*
Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B15.** *«ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-3 *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(6 դասախոսություն , 58 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *3–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*
Դասընթացի նպատակն է ուսումնասիրել մարդու գլխի կառուցվածքը, համամասնությունները: Անհրաժեշտ է զարգացնել տարածական ընկալում, տարբերակել լուսաստվերի առանձնահատկությունները՝ ընկնող և սեփական ստվերներ, փայլ, արտացոլում և այլն: Ուսումնասիրի մարդու իրանի կառուցվածքը: Նկարել գիպսե տորս՝ ըմբռնելու համար մարդու իրանի համաչափությունները:

***Կրթական արդյունքները***
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ուսումնասիրել լուսաստվերի առանձնահատկությունները,
2. կկարողանա ձեռք բերել գծի, տոնի արագ ընկալման ունակություն և տարածական մտածելակերպ:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Գիպսե գլուխ /Վեներա,Անահիտ,Ա2/: ***Թեմա 2***՝ Գիպսե գլուխ շարժումով /ստրուկի գլուխ, Հերմես,Ա2/: ***Թեմա 3***՝ Գիպսե գլուխ տարբեր նյութերի կիրառմամբ /սանգինա,պաստել,սեպիա,Ա2/: ***Թեմա 4***՝ Մարդու մարմնի գիպսե մասեր /ձեռք,ոտք,Ա2/:***Թեմա 5*** ՝ Մարդու գիպսե իրան, տարբեր նյութերի կիրառմամբ /սանգինա,պաստել,սեպիա,Ա1,Ա2/: ***Թեմա 6***՝ Պլեներ/Ա2,Ա3,Ա4/:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B16.** *«ԳՈՒՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-3 *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(6 դասախոսություն, 58 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Առարկայի նպատակն է կատարելագործել գուաշով աշխատելու տեխնիկան՝ անհրաժեշտ համադիր, հակադիր գունային կոլորիտներ ստանալու համար: Ուսանողների մոտ ձևավորել ուրույն և կազմակերպված վերաբերմունք բնության երևույթների վերաբերյալ, կոմպոզիցիայի ծավալային և տարածական խնդիրների հանդեպ՝ վերլուծական մոտեցում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա հասնել վրձնահարվածների վարպետության,
2. կհասկանա գունային համադրությունների համատեղելիության խնդիրները,
3. կկարողանա ստեղծել սեփական ոճ:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նկարել նատյուրմորտ՝ մրգերով, սկուտեղով, սափորով, դդումով, սեխով կամ ձմերուկով (լուսավոր, նարնջագույն, դեղին ֆոնի վրա), (Ա2, ջրաներկ,գուաշ, ակրիլ յուղաներկ 50X60): ***Թեմա 2***՝ Պլեներ/Ա2,Ա3,Ա4/: ***Թեմա 3***՝ Նկարել նատյուրմորտ՝ սենյակային բույսերով, մրգերով, սպիտակ կտորի ծալքերով (Ա2, ջրաներկ, գուաշ, ակրիլ, յուղաներկ 50X60): ***Թեմա 4***՝ Պլեներ/Ա2,Ա3,Ա4/: ***Թեմա 5***՝ Նկարել նատյուրմորտ՝ զիպսե զարդանախշով, մուգ կտորի ծալքերով, նարնջով, լիմոնով, սափորով, սկուտեղով կամ ափսեով, փայտե գդալով (Ա2, ջրաներկ,գուաշ,ակրիլ, յուղաներկ): ***Թեմա 6***՝ Կատարել

ստեղծագործական կոմպոզիցիոն աշխատանք(Ա2, ջրաներկ,գուաշ,ակրիլ, յուղաներկ 50X60)):

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B17.** *«ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ»*-1 *(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(4 ժամ դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Առարկայի նպատակն է ուսանողներին սովորեցնել ստեղծել ծավալների շոշափելի ու իրականակերպ դրսևորումներ, որոնք դիտողին հնարավորություն կտան պատկերներն ընկալել տարբեր դիտակետերից: Տիրապետել կավի ծեփվածքի հետ աշխատելու նրբություններին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կուսումնասիրի երկրաչափական մարմինները:
2. Ընկալել ծավալները տարածության մեջ:
3. Կատարել բնորոշող վերլուծություններ:

Բովանդակությունը.

***Թեմա1***՝ Երկրաչափական մարմինների ուսումնասիրում,ընդօրինակում:***Թեմա 2***՝Երկրաչափական ձևերով հարթաքանդակի ստացում:***Թեմա3***՝ Ստեղծագործական մոտեցմամբ երկրաչափական առարկաների համադրում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0404/B14.** *«ԿՈՄՊՈԶԻՑԻԱ»*-3 *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 5 ժամ *(4 դասախոսություն, 76 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *3–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

***Տեքստիլ***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել հասկանալ և գիտակցել գորգադաշտը երիզող գոտիների, նրանցում կիրառվող զարդամոտիվների նշանակությունը՝ գորգի գոտիներ ստեղծելու համար: Սովորեցնել ոչ համաչափ և համաչափ կոմպոզիցիաներում, հայտնի խորհրդանշական զարդամոտիվներ կիրառելով, բացահայտել մտահղացման ասոցիատիվ տպավորություն:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գորգադաշտը երիզող գոտիների նշանակությունը, նրանցում օգտագործված զարդամոտիվների կիրառությունը,
2. կկարողանա ստեղծել գունային ռիթմիկայով տրամադրություն, զգացողություն՝ պահպանելով կոմպոզիցիայի կառուցման բոլոր հնարքները,
3. կկարողանա ուսումնասիրել կիրառական արվեստում գոյություն ունեցող նմուշները:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Ստեղծել երկրաչափական, բուսական և կենդանական էլեմենտներով գորգի գոտիներ՝օգտագործելով գորգարվեստից մեզ հասած եզրագոտիների զարդամոտիվները: ***Թեմա 2***՝ Ստեղծել խորհրդանշական էլեմենտներով կոմպոզիցիաներ (կարպետ, գորգ): ***Թեմա 3***՝ Ստեղծել կոմպոզիցիաներ սփռոցների, ծածկոցների, բարձիկների, սրբիչների համար՝ օգտագործելով ազգային ժառանգության նմուշներ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

***Կերամիկա, փայտ***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել նախագծել կտրվածքով և աքսիոնոմետրիայով առարկաներ, ստեղծել զարդանախշային կոմպոզիցիաներ՝ հաշվի առնելով առարկայի համաչափություններն ու օգտագործման բնագավառը:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա նախագծվող առարկայի և զարդանախշերի համաչափությունները,
2. կկարողանա կտրվածքով աքսիոնոմետրիային տալ գունային լուծում,
3. կիմանա նախագծվող առարկաների չափադրման տեխնիկան:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նախագծել բուսական ոճավորումով դեկորատիվ մրգաման:Գծել երկու պրոյեկցիաները և աքսիոնոմետրիան: ***Թեմա 2***:Նախագծել գեղարվեստական ծաղկաման: Գծել երկու պրոյեկցիաները և աքսիոնոմետրիան:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0404/B42.** *«ԱՇԽԱՏԱՆՔ ՆՅՈՒԹԻ ՎՐԱ»*-3 *(5 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(4 ժամ դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3–րդ, հանրագումարային քննություն*

***Տեքստիլ***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել կարպետի տեխնիկայի առանձնահատկություններին:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա իր ստեղծած էսքիզներն իրականացնել,
2. կիմանա կարպետի տեխնիկայի առանձնահատկությունները,
3. կկարողանա կարպետներից պատրաստել կենցաղում օգտագործվող իրեր (ուսապարկ, պայուսակ, գոտի, բարձիկ, գլխարկ և այլն):

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Հենքի նախապատրաստում: ***Թեմա 2***՝ Գործել կարպետ եզրագոտիով և միջնազարդով:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում–քննություն:

***Փայտ***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել կոր մակերեսի վրա փորագրել բուսական և կենդանական բարդ զարդանախշեր՝ պահպանելով էսքիզներում նախատեսված համաչափություններն ու պլաստիկան:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կծանոթանա փայտամշակման հաստոցների աշխատանքի անվտանգության տեխնիկային,
2. կկարողանա աշխատել խառատային հաստոցի վրա:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Փորագրել բուսական զարդանախշերով դեկորատիվ մոմակալ:

***Կերամիկա***

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Դեկորատիվ ծաղկաման ՝ շերտերով բարձրանալու եղանակով:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված է հանրագումարային քննություն՝ առավելագույնը 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում–քննություն:

**0105/B13.** *«ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»*-3 *(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն,8 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *3–րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել բնական և արհեստական թելերի տեսակներին և հատկություններին, դրանց ստացման եղանակներին, օգտագործման բնագավառներին, սովորեցնել ուսանողներին իրենց աշխատանքների համար ընտրել համապատասխան նյութեր:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կծանոթանա բնական և արհեստական թելերի տեսակներին,
2. կծանոթանա սինթետիկ թելերի ստացման պրոցեսին,
3. կկարողանա իր աշխատանքների համար ընտրել համապատասխան որակի թելեր:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Թելերի ստացման տեխնոլոգիան: Բնական թելեր, նրանց տեսակները և ստացման եղանակները: ***Թեմա 2***՝ Արհեստական թելեր, ստացման եղանակները և կիրառությունը: ***Թեմա 3***՝ Սինթետիկ թելեր, նրանց տեսակները և ստացման եղանակները: Պոլիամիդային թելեր, նրանց տեսակները, ստացման եղանակները և կիրառությունը: ***Թեմա 4***՝ Պոլիհեքսամեթիլեն ադիպամիդային թելեր, նրանց ստացումը և կիրառությունը: ***Թեմա 5***՝ Պոլի-էնանտռամիդային թելեր: ***Թեմա 6***՝ Պոլի-Σ-կապրոնաամիդային թելեր: ***Թեմա 7***՝ Պոլի-ունդեկանամիդային թելեր, նրանց ստացումը և կիրառությունը: ***Թեմա 8***՝ Պոլիվինիլսպիրտա-

յին թելեր, նրանց ստացումը և կիրառությունը: ***Թեմա 9***՝ Պոլիվինիլքլորիդային թելեր, նրանց ստացումը և կիրառությունը: ***Թեմա 10***՝ Պոլիպրոպիլենային թելեր, նրանց ստացումը և կիրառությունը: ***Թեմա 11***՝ Պոլիակրիլային թելեր, նրանց ստացումը և կիրառությունը:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 9 միավոր արժեքով:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 2,25 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 2,25 է:

**0403/B18.** *«ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-4 *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(8 ժամ դասախոսություն, 56 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Հատուկ ուշադրություն դարձնել տարբեր դիրքերում գտնվող մարդու մարմնի պատկերումներին՝ առանձնակիորեն շեշտադրելով գլխի և իրանի, ձեռքերի և ոտքերի ներդաշնակ փոխհամաձայնեցվածությունը ընդհանուր շարժման մեջ: Դասական օրինակների տեխնիկական հնարքների հետևողական ուսումնասիրություն:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա քննարկել կառուցման տեղադրման հարցերը,
2. կուսումնասիրի և կիմատեղի տարբեր նյութերով աշխատելու տեխնիկաները, ձեռք կբերի տարածական մտածելակերպ:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նկարել գիպսե գլուխ դետալների վերլուծական աշխատանքով(Ա2,Ա3,Սոկրատ,Սենեկա,Գատամելատ):***Թեմա2***՝ Գիպսե տղամարդու /կնոջ/ իրան /Ա2/: ***Թեմա 3***՝ Մարդու գիպսե իրան տարբեր նյութերի ուսումնասիրում՝ պաստել, սանգինա, ածուխ,սեպիա/Ա1,Ա2/:***Թեմա 4***՝ Պլեներ,բնության ձևերի ուսումնասիրում/Ա2 Ա3,Ա4/:***Թեմա 5***՝ Բնորդ՝ դիմանկար կարճատև, ուսումնասիրությամբ /տարբեր նյութերի ուսումնասիրում՝ սանգինա,պաստել. ածուխ, սեպիա, Ա1,Ա2/: ***Թեմա 6*** ՝ Պլեներ,բնության ձևերի ուսումնասիրում/Ա2,Ա3,Ա4/:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B20.** *«ԳՈՒՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-4 *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(8 ժամ դասախոսություն, 56 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *4–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Ուսանողին սովորեցնել յուղաներկով աշխատելու տեխնիկան և ստատիկ ու դինամիկ կոմպոզիցիաներ պատկերելով՝ կատարել ինքնուրույն էտյուդներ: Ուսումնասիրել առարկաների գունավորման վրա լույսի ունեցած ազդեցությունը, ձևավորել անհատական մոտեցում՝ տարբեր արտահայտչականություն ստանալու համար, կատարել մեկ գույնի երանգներով (գրիզալ) առաջադրանքներ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա գույները գեղեցիկ համադրել,
2. կկարողանա տիրապետել դասական արվեստի ավանդույթներին:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նկարել նատյուրմորտ՝ կարպետով, ծղոտե ափսեով, մրգերով, գունեղ կտորի ծալքերով (Ա1,Ա2, ջրաներկ,գուաշ,ակրիլ,յուղաներկ 50X60): ***Թեմա 2***՝ Նկարել նատյուրմորտ գիպսե գլուխ,գեղարվեստական իրերով /երաժշտական գործիք,փոքր կճուճ մեջը դրված վրձիններ,բացված գիրք,տարբեր տոնայնության կտորի ծալքեր/:(Ա1,Ա2, ջրաներկ,գուաշ, ակրիլ, յուղաներկ 50X60):***Թեմա 3*** Նատյուրմորտ գիպսե դիմակով,թղթե գլանակ,ցանկացած գրենական պիտույք դրված տարայի մեջ, գունային բարդ և հակադիր կտորի ծալքերով(Ա1,Ա2, ջրաներկ,գուաշ,ակրիլ,յուղաներկ 50X60):***Թեմա 4***՝ Պլեներ, քաղաքային բնանկար (Ա2, ջրաներկ,գուաշ,ակրիլ,յուղաներկ 50X60): ***Թեմա 5***՝ Նատյուրմորտ՝ մրգերով, մետաղյա և թափանցիկ ապակյա առարկաներով, մուգ և լուսավոր կտորի ծալքերով: (Ա2 ջրաներկ,ակրիլ,յուղաներկ 50X60): ***Թեմա 6***՝Կատարել կոմպոզիցիոն աշխատանք,դեկորատիվ մոտեցմամբ: (Ա2, ջրաներկ, գուաշ, ակրիլ, յուղաներկ 50X60):

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B21.** *«ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ»*-2 *(3 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(4 ժամ դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *4–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Ուսանողներին սովորեցնել ստեղծել ծավալների շոշափելի և իրականակերպ դրսևորումներ, որոնք հնարավորություն կտան դիտողին ծավալներն ընկալել տարբեր դիտակետերից: Հիմք ընդունելով հայկական զարդանախշային արվեստի ավանդույթները կատարել ուսումնասիրական աշխատանքներ:

.

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Ուսումնասիրել խաչքարային զարդանախշերի տեսակները:
2. Տարբերակել խորաքանդակը, հարթաքանդակը և բարձրաքանդակը խաչքարային արվեստում:
3. Դասական խաչքարերի ուսումնասիրություն / Ճարտարապետ Մոմիկ, վարպետ Պողոս /

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Բուսական և կենդանական մոտիվների արծարծումը դեկորատիվ կիրառական արվեստում / բարձրաքանդակ /: ***Թեմա 2՝*** Խաչքար՝ ճակտոնի և կենտրոնական հատվածի ձևավորում: ***Թեմա 3*** Խաչքար՝կողային զարդաժապավեններ:

՝

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

0202/B22. *«ՀՆԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԻՆ ՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *5–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել նախնադարյան արվեստին, Հին Եգիպտոսի, Միջագետքի, Իրանի, Հին Հռոմի և Հունաստանի մշակույթների պատմության, կրոնա–դիցաբանության, արվեստի առաջացման, զարգացման օրինաչափությունների հետ: Իլյուստրատիվ նյութի և տեսաֆիլմերի հիման վրա ներկայացնել հին քաղաքակրթությունների ճարտարապետությունը, քանդակագործությունը և գեղանկարչությունը: Ձևավորել հուշարձանների գիտական վերլուծությունների մասին պատկերացում:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա արվեստի պատմության օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները,
2. կճանաչի հին աշխարհի արվեստի կարևոր հուշարձանները,
3. կկարողանա ծանոթանալ համաշխարհային հռչակ վայելող արվեստի ստեղծագործություններին:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Ներածություն: Նախնադարյան արվեստ: ***Թեմա 2***՝ Հին Եգիպտոսի արվեստը: ***Թեմա 3***՝ Միջագետքի արվեստը: ***Թեմա 4***՝ Աքեմենյան Իրանի արվեստը: ***Թեմա 5***՝ Էգեյան արվեստը: ***Թեմա 6***՝ Հին Հունաստանի արվեստը. ա/ Հոմերոսյան շրջան; բ/ Արխայիկ շրջան; գ/ Դասական շրջան; դ/ Հելլենիզմ: ***Թեմա 7***՝ Հին Հռոմի արվեստը. ա/ Հանրապետական շրջան; բ/ Կայսերական շրջան; գ/ ՈՒշ հռոմեական շրջան:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննություններն անց են կացվում թեստերով, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 8 հարց, յուրաքանչյուրը՝ 0,5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գրավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3,3,2,2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

**0404/B19.** *«ԿՈՄՊՈԶԻՑԻԱ»*-**4***(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 5 ժամ *(4 դասախոսություն ,76 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4–րդ, եզրափակիչ գնահատմամբ՝*

***Տեքստիլ, փայտ և կերամիկա***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել էսքիզներում ճիշտ ոճավորել կենդանական և բուսական մոտիվները, կոնկրետ թեմայի ճիշտ դեկորատիվ մեկնաբանությունը: Սովորեցնել կոմպոզիցիաների տեխնիկական հաշվարկների կատարումը և տեխնիկական թղթի վրա կառուցելու ու գունազարդման խնդիրները:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ոճավորել կենդանական և բուսական մոտիվները,
2. կկարողանա բացահայտել մտահղացման ասոցիատիվ տպավորությունը,
3. կիմանա դասական զարդանախշերի իմաստը և կոմպոզիցիոն կառուցման ելակետերը:

Բովանդակությունը.

***Թեմա 1*** Կենդանական և բուսական մոտիվների ոճավորմամբ թեմատիկ ասիմետրիկ կոմպոզիցիա՝ դեկորատիվ մեկնաբանությամբ գորգերի էսքիզներ: ***Թեմա 2*** Նախագծել կենդանական և բուսական զարդանախշերի համադրություններով դեկորատիվ տակդիր:Գծել երկու պրոյեկցիաները և աքսիոնոմետրիան: ***Թեմա 3*** Ստեղծել զարդանախշերի և խորհրդանիշների ռիթմիկ դասավորվածությամբ դեկորատիվ հարթային կոմպոզիցիա՝ ազգային ավանդույթների շրջանակներում: ***Թեմա 4*** Նախագծել դեկորատիվ արձանիկ:Գծել երկու պրոյեկցիաները և աքսիոնոմետրիան: ***Թեմա 5*** Ստեղծել միջնազարդով և եզրագոտիներով փոքրաչափ գորգերի էսքիզներ /աթոռի ծածկոց/:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0404/B43.** ***«ԱՇԽԱՏԱՆՔ ՆՅՈՒԹԻ ՎՐԱ»***-4 *(5 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(4 ժամ դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4-րդ, հանրագումարային քննություն*

***Տեքստիլ***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել հաշվարկային գոբելենի տեխնիկան, հնարավորություն տալ «Կոմպոզիցիա» առարկայի դասավանդման ընթացքում իրենց ստեղծած էսքիզները կիրառել նյութի մեջ: Հաշվարկային գոբելենի տեխնիկայով գործել զարդանախշային ասիմետրիկ կոմպոզիցիաներ, դեկորատիվ նատյուրմորտներ, թեմատիկ, երկրաչափորեն ոճավորված էսքիզներ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա իր ստեղծած էսքիզները կիրառել նյութի մեջ,
2. կտիրապետի հաշվարկային գոբելենի տեխնիկայի նրբություններին,
3. կկարողանա պահպանել գործվածքի տեխնիկական նկարով նախատեսված չափերը:

Բովանդակությունը.

***Թեմա 1*** Հենքի և էսքիզի նախապատրաստում: ***Թեմա 2*** Գործել գոբելեն պարզ գունային ծավալով և հարմոնիկ անցումներով:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված է հանրագումարային  քննություն, գնահատվում է առավելագույնը՝ 20  միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում–քննություն:

***Փայտ***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել նյութի վրա ,մի քանի հարթություններով, փորագրել բարդ թեմատիկ էսքիզներ՝ պահպանելով համաչափությունները և բուսական ու երկրաչափական զարդանախշերի համադրման նրբությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա բուսական և երկրաչափական զարդանախշերի համադրման նրբությունները,
2. կկարողանա պատրաստել դեկորատիվ-կիրառական առարկաներ:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Փորագրել բարդ թեմատիկ կոմպոզիցիայով դեկորատիվ մրցաման:

***Կերամիկա***

Բովանդակությունը

***Թեմա 1***՝ Գինու սափոր թասերով:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում–քննություն:

**0202/B25.** ***«ՀԻՆ ՇՐՋԱՆԻ ԵՎ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»*** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *5–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել Վանի թագավորության, հին հայկական վաղ միջնադարյան քաղաքաշինությանը, ճարտարապետությանը, որմնանկարչությանը, կիրառական արվեստին, պատկերացում ձևավորել հայկական վաղ միջնադարյան պաշտամունքային շինությունների տիպերի, միջնադարյան ճարտարապետական դպրոցների և վանքային համալիրների մասին:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա արվեստի պատմության օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները,
2. կճանաչի հին շրջանի և վաղ միջնադարյան Հայաստանի արվեստների հուշարձանները:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Հայկական լեռնաշխարհի հնագույն արվեստը /սկզբնավորումից մինչև մ.թ.ա. 10-րդ դար/: ***Թեմա 2***՝ Ուրարտուի արվեստը մ.թ.ա. 9-6-րդ դդ.: ***Թեմա 3***՝ Հետուրարտական շրջանի արվեստը մ.թ.ա. 5-3-րդ դդ.: ***Թեմա 4***՝ Հելլենիստական Հայաստանի արվեստը: ***Թեմա 5***՝ Հայաստանի արվեստը վաղ միջնադարում /4-7-րդ դդ. ճարտարապետություն, քանդակագործություն, գեղանկարչություն/: ***Թեմա 6***՝ Հայաստանի արվեստը 9-12-րդ դդ. /ճարտարապետական դպրոցներ, վանքային համալիրներ, Տրդատ ճարտարապետ, Մանուել ճարտարապետ, Ախթամարի Ս. Խաչ եկեղեցի, դեկորատիվ-կիրառական արվեստներ/:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անց են կացվում թեստերով, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 8 հարց, յուրաքանչյուրը՝ 0,5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գրավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3,3,2,2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

**0403/B23.** *«ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-5 *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(4 ժամ դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *5–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Առարկայի նպատակն է ուսանողին ծանոթացնել մարդու և շրջապատող առարկաների փոխհամակցված կապը համադրել տարածական վերլուծությամբ և իմաստավորվածությամբ: Կողմնորոշում խնդրին համապատասխան ատրիբուտիկայի ընտրության հարցում: Տիրապետել դիմանկարի արվեստին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1.Ուսումնասիրել լուսաստվերի առանձնահատկությունները/ընկնող և սեփական ստվերներ,բլիկ,ռեֆլեքս և այլն/:

2. Վարժվել ճեպանկարների կատարման մեջ,որի համար կիանձնարարվեն և լսարանային, և ինքնուրույն անհատական առաջադրանքներ:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նատյուրմորտ՝ գիպսե գլուխ, ժանրային ատրիբուտների տարատեսակ կտորների ծալքերի համադրությամբ /Ա1,Ա2 ֆորմատ/:***Թեմա 2***՝ Պլեներ, բնության ձևերի ուսումնասիրում/Ա2,Ա3,Ա4/: ***Թեմա 3***՝ Գիպսե տորս՝/ինտերիերում, Ա1,Ա2 ֆորմատ/: ***Թեմա 4***՝Պլեներ, բնության ձևերի ուսումնասիրում/Ա2,Ա3,Ա4/: ***Թեմա 5***՝ Բնորդ դիմանկար կերպարային առանձնահատկություններով /գիպսե գլուխ Ա1,Ա2/:***Թեմա 6***՝Բնորդ շարժման մեջ /գիպսե գլուխ՝ Վոլտեր, Սենեկա,

Գատամելատ տարբեր նյութերի ուսումնասիրում սանգինա, պաստել, ածուխ,սեպիա Ա1,Ա2/:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B24.** *«ԳՈՒՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-5 *(5 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(4 ժամ դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *5–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Ուսանողների մոտ հիմնավորել ծավալային մտածողությունը, գծի ու գույնի միջոցով պատկերներին դինամիկ արտահայտչականություն տալու ունակություն: Սովորեցնել խառը տեխնիկայի միջոցով արտահայտել տարբեր օբյեկտների տեքստուրան և ֆակտուրան, գունային փոխհարաբերությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա պատկերվող օբյեկտի դիրքի, գծի և գույնի փոխհարաբերության մասին,
2. կնկալի տարածությունն իր շրջապատով ու գույներով:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նկարել նատյուրմորտ՝ կարպետով, մեծածավալ կենցաղային իրերով, դդումով, մրգերով (Ա2, ջրաներկ, գուաշ,ակրիլ, յուղաներկ 50X 60): ***Թեմա 2***՝ Պլեներ,բնության ձևերի ուսումնասիրում /ճարտարապետական կառույցների համադրությամբ Ա2,Ա3,Ա4 ջրաներկ, գուաշ,ակրիլ, յուղաներկ 50X 60/ : ***Թեմա 3***՝ Նկարել նատյուրմորտ՝ գիպսե կիսանդրիով, չորացրած փշերով, սափորով (Ա2, գուաշ, ջրաներկ, ակրիլ, յուղաներկ 50X 60): ***Թեմա 4***՝ Պլեներ, բնապատկերի ուսումնասիրում /մարդու ֆիգուրայի համադրությամբ Ա2,Ա3,Ա4 ջրաներկ, գուաշ,ակրիլ, յուղաներկ 50X 60/ : ***Թեմա 5***՝ Նկարել նատյուրմորտ՝ մի քանի հարթությամբ դրված կենցաղային իրերով (փոքր աթոռ, մրգեր, հակադարձ տոնի կտորներ), (Ա1,Ա2, ջրաներկ,գուաշ,ակրիլ,յուղաներկ 50X 60): ***Թեմա 6***՝ Կատարել կոմպոզիցիոն աշխատանք,դեկորատիվ մոտեցմամբ: (Ա2, ջրաներկ, գուաշ, ակրիլ, յուղաներկ 50X 60):

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B26.** *«ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ»*-3 *(3 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(4 ժամ դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *5–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Ուսանողներին սովորեցնել ստեղծել ծավալների շոշափելի և իրականակերպ դրսևորումներ, որոնք հնարավորություն կտան դիտողին ծավալներն ընկալել տարբեր դիտակետերից:Ընկալել մարդու գլխի վերջույթների կառուցվածքը: Ընկալել ուսումնասիրվող ծվալների պլաստիկան և կերպարային առանձնահատկությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Ուսումնասիրել մարդու գլխի մանրամասերի առանձին – առանձին և ամբողջական կառուցվածքը :
2. Կծանոթանա մարդու /կենդանիների/ մարմնի կառուցվածքային վերջույթների հետ:
3. Կյուրացնի մարդու ձեռքերի,ոտքերի պլաստիկան:

Բովանդակությունը.
***Թեմա 1*** Մարդու իրանը շարժման մեջ /առանց գլխի և ձեռքերի /:
***Թեմա 2***՝ Վերջույթների ուսումնասիրություն,պատճենաքանդակում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0202/B27.** *«ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *6–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել բյուզանդական արվեստի պատմությունը, ուսուցանել քրիստոնեական արվեստի սիմվոլիկ և կանոնիկ բնույթից բխող պատկերագրության հիմունքները, ներկայացնել արև-

մըտաքրիստոնեական արվեստի պատմությունը, ոճերը, իսլամական արվեստը, ինչպես նաև գիտելիքներ հաղորդել արևմտաեվրոպական երկրների վերածնության դարաշրջանի /XIII–XIV դդ./ արվեստի վերաբերյալ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա արվեստի պատմության օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները,
2. կճանաչի միջնադարյան արվեստի կարևոր հուշարձանները,
3. կծանոթանա տարբեր երկրների արվեստներին:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Բյուզանդիայի արվեստը: ***Թեմա 2՝*** Կիևյան Ռուսիայի արվեստը: ***Թեմա 3՝*** Ռոմանական արվեստ: ***Թեմա 4՝*** Գոթական արվեստ: ***Թեմա 5՝*** Իսլամական արվեստը:***Թեմա 6՝*** Չինաստանի արվեստը: ***Թեմա 7՝*** Ճապոնիայի արվեստը: ***Թեմա 8՝*** Հնդկաստանի արվեստը: ***Թեմա 9՝*** Վերածննդի արվեստը Իտալիայում: Պրոտոռենեսանս:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննություններն անց են կացվում թեստերով, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 8 հարց, յուրաքանչյուրը՝ 0,5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գրավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3,3,2,2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

**0404/B45.** ***«ԿՈՄՊՈԶԻՑԻԱ»*-5** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(4 ժամ դասախոսություն, 60 ժամ զործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *5–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

***Տեքստից***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել դասական զարդանախշերը օգտագործել կարպետի էսքիզներում, ընկալել նրանց օգտագործման դասական կառուցվածքն ու կոմպոզիցիոն կառուցման ելակետերը: Սովորեցնել զոբելենի էսքիզներում ստեղծել գունային ռիթմիկայով տրամադրություն, զգացողություն՝ կոմպոզիցիայի կառուցման բոլոր հնարքները պահպանելով:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա կարպետի ազգային–ավանդական կառուցվածքը,
2. կկարողանա կատարել կոմպոզիցիաների տեխնիկական հաշվարկները,

3. կկարողանա ստեղծել գունա–ոճային ամբողջականություն:

Բովանդակությունը.

***Թեմա 1*** Կարպետի կոմպոզիցիոն պատկերի կառուցում՝ դասական-ազգային ավանդույթների շրջանակներում: ***Թեմա 2*** Կարպետի, էսքիզների տեխնիկական նկարների ստեղծում: ***Թեմա 3*** Ֆիգուրատիվ բարդ կոմպոզիցիայով թեմատիկ գոբելենի էսքիզների ստեղծում: ***Թեմա 4*** Գորգի էսքիզ, տեխնիկական նկարի ստեղծում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

***Փայտ***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել առարկաների բոլոր դետալները պատկերել մասնատված, չափագրված՝ պահպանելով համաչափությունները և ֆունկցիոնալ առանձնահատկությունները: Կատարել նպատակային դեկորատիվ–թեմատիկ լուծումներ՝ հաշվի առնելով առարկաների օգտագործման բնագավառները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ստանալ առարկայի տեսքը՝ կտրվածքով, աքսիոնոմետրիան, դետալավորել և չափադրել բոլոր դետալները,
2. կիմանա նախագծվող առարկայի ճիշտ չափադրման տեխնիկան,
3. կկարողանա առարկաներին տալ ճշգրիտ դեկորատիվ լուծումներ:

Բովանդակությունը.

***Թեմա 1*** Նախագծել մանկական մահճակալ, գծել պրոյեկցիաները, աքսիոնոմետրիան և մասնազատել: ***Թեմա 2*** Նախագծել աթոռ, կատարել ճշգրիտ չափումներ և իրական տեսքը: ***Թեմա 3*** Նախագծել սպորտային գավաթ՝ կարևորելով զարդանախշերը և կառուցվածքը:

***Կերամիկա***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել առարկաների բոլոր դետալները պատկերել մասնատված, չափագրված՝ պահպանելով համաչափությունները և ֆունկցիոնալ առանձնահատկությունները: Կատարել նպատակային դեկորատիվ–թեմատիկ լուծումներ՝ հաշվի առնելով առարկաների օգտագործման բնագավառները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1 . կկարողանա ստանալ առարկայի տեսքը՝ կտրվածքով, աքսիոնոմետրիան, դետալավորել և չափադրել բոլոր դետալները,
2. կիմանա նախագծվող առարկայի ճիշտ չափադրման տեխնիկան,
3 . կկարողանա առարկաներին տալ ճշգրիտ դեկորատիվ լուծումներ:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նախագծել զինու գավաթ իր թասերով, գծել պրոյեկցիաները, աքսիոնոմետրիան և մասնազատել: ***Թեմա 2***՝ Նախագծել դեկորատիվ ափսեներ, կատարել ճշգրիտ չափադրումներ և կառուցել պրոյեկցիաները և աքսիոնոմետրիան:***Թեմա 3***՝ Նախագծել դեկորատիվ մրգաման հայկական զարդանախշերով:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0404/B02.** *«ԳԾԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(16 ժամ դասախոսություն, 48 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *1-ին, առանց եզրափակիչ գնահատմամբ*

***Նպատակը.***

Ուսանողին սովորեցնել գծագրական երկրաչափության մասնագիտության համար,կիրառական խնդիրների լուծման հնարավորություններին և ձևավորել տարածական և վերացական մտածելակերպ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1.կիմանա գծագրական երկրաչափության առարկայի մեթոդների օգնությամբ հարթության վրա լուծել տարածաչափական կիրառական խնդիրներ՝ դիրքային և մետրական բնույթների,

2. կկարողանա կազմածո մարմինների օգնությամբ մոդելավորել տարածության ձևերը և արվեստի նմուշները,

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Գծավոր և պտտման մարմինների միջոցով մոդելավորվող գեղարվեստական իրերի և առարկաների համալիր գծագրերի, փռվածքների կազմավորում և աքսոնոմետրիայի կառուցում:

***Թեմա 2***՝ Էսքիզավորման և կոնստրուկտավորման առանձնահատկությունները:

***Թեմա 3***՝ Խեցեգործական իրերի նախագծերի կազմում: ***Թեմա 4***՝ ՝ Դեկորատիվ կիրառական արվեստի նմուշների գծագրերի և նախագծային պլանշետների ձևակազմավորում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 9 միավոր արժեքով:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 2.25 է:

***2-րդ ստուգում*** : Գրավոր հարցում: Միավորների քայլը 2.25 է:

**0404/B04.** *«ԿՈՄՊՈԶԻՑԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»*-1 *(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 3 ժամ *(16 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *1–ին, եզրափակիչ գնահատմամբ*

*Տեքստիլ*

*Նպատակը.*

Պատրաստել կիրառական արվեստի նկարիչ-մասնագետներ, որոնք կարող են արագ և նպատակասլաց կատարել գեղարվեստական բարձր մակարդակի գորգի, կարպետի, գոբելենի էսքիզներ: Հատուկ ուշադրություն դարձնել գեղագիտական, գեղարվեստական գիտելիքների ուսուցմանը և կոմպոզիցիոն ձևաստեղծմանը՝ մակերեսի վրա ստեղծելով ռիթմիկա, շարժում, դասավորություն, հավասարակշռություն, չհավասարակշռած հավասարակշռություն, գունա–գծային ռիթմիկաներ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. կտիրապետի կոմպոզիցիոն ձևաստեղծման հնարքներին,
5. կիասկանա գույնի երևույթը,
6. կկարողանա ստեղծել տարբեր տեսակի ռապպորտներ և դրանք օգտագործել հիմնական էսքիզներում:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Ծանոթություն առարկայի, նրա նպատակների ու խնդիրների, ինչպես նաև տեխնիկական միջոցների հետ: ***Թեմա 2***՝ Ռիթմիկա, շարժում, հավասարակշռություն, չհավասարակշռված հավասարակշռություն: Ստեղծել պարզ երկրաչափական պատկերների դասավորություններ (եռանկյուն, քառակուսի, շրջան), գծերի միջոցով: ***Թեմա 3***՝ Գույն: Գունային հարաբերություններ: Կոլորիտ: Կոնտրաստ: Ստեղծել դասավորություններ գունային ծավալների, գունային կոնտրաստների և տոնային անցումների միջոցով: ***Թեմա 4***՝ Ռապպորտ: Ռապպորտի տեսակները: Ստեղծել կրկնվող էլեմենտով կարպետների էսքիզներ: ***Թեմա 5***՝ Ստեղծել երկրաչափական, բուսական և կենդանական էլեմենտներով ֆրիզներ՝ օգտագործելով մանրանկարչությունից, գորգարվեստից մեզ հասած եզրագոտիների զարդամոտիվները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

***Կերամիկա***

*Նպատակը.*

Պատրաստել կիրառական արվեստի նկարիչ-մասնագետներ, որոնք կարող են արագ և նպատակասլաց կատարել կենցաղում օգտագործվող փայտե իրերի գեղարվեստական բարձր մակարդակի էսքիզներ: Ցուցաբերել հոգատար վերաբերմունք ազգային–մշակութային ժառանգության նկատմամբ և դրանց հիմ-

քի վրա հասնել ժամանակակից խնդիրների և պահանջների մեկնության ու կատարմանը:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. կտիրապետի կոմպոզիցիոն ձևաստեղծման հնարքներին,
5. կկարողանա պարզ զարդանախշերի համադրությամբ ճաշակով ձևավորել հարթությունը,
6. կկարողանա նախագծել կենցաղում օգտագործելի իրեր:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Բուսական զարդանախշերով եզրագոտիներով և վարդյակներով խոհանոցային տախտակների փորագրում: ***Թեմա 2***՝ Սափոր շերտերով բարձրանալու եղանակով:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0404/B05.** *«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *1–ին, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Ծանոթանալ դիզայն մասնագիտության ներածությանը, կիրառման հնարավորություններին, տեսակներին, չափագրմանն ու գունային և տարածածավալական տարրերի ուսումնասիրմանը

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի դիզայնի տեսությանը
2. կիասկանագույնի և ձևի կիրառման հնարավորությունները
3. կկարողանա ստեղծել տարբեր տեսակի կոմպոզիցիաներ և դրանք օգտագործել հիմնական էսքիզներում կամ հետագա կենցաղային իրերի նախագծերում, ինչպես նաև կկիրառի շրջակա միջավայրում հակաէսթետիկական երևույթների ուսումնասիրման ձևերը:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Ծանոթություն առարկայի, նրա նպատակների ու խնդիրների, ինչպես նաև տեխնիկական միջոցների հետ: ***Թեմա 2***՝ Դիզայն-նախագծերի տեսակներն ու կիրառման ձևերը: ***Թեմա 3***՝ Հատակագծի կառուցման մեթոդիկան ***Թեմա 4***՝ Չափագրման մեթոդիկան: ***Թեմա 5***՝ Կուրսային և դիպլոմային աշխատանքների օրինակների քննարկում, թերությունների բացատրություն

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B06.** ***«ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»***-2 *(5 կրեդիտ)*

Շաբաթական՝ 5 ժամ *(8 ժամ դասախոսություն, 72 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *2–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ծանոթանալ մարդու գանգին և անատոմիական գլխին՝ մկանային համակարգի վերլուծական մոտեցմամբ, ուսումնասիրել նրա կառուցվածքը և համաչափությունները, ինչպես նաև մարդու մարմնի վերջույթների կառուցվածքը, ոսկրաբանությունը, տարբեր շարժումների ժամանակ՝ մկանների պլաստիկան:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կծանոթանա մարդու գլխի ոսկրաբանությանը,
2. կկարողանա վերլուծական մոտեցմամբ ուսումնասիրել գանգը, Դյուրերի երկրաչափական և անատոմիական գլուխները,
3. կուսումնասիրի լույսը և ստվերը որպես ծավալի վերարտադրման արտահայտչամիջոց:

Բովանդակությունը

***Թեմա 1***՝ Մարդկային գանգ կտորի համադրությամբ/Ա1,Ա2/: ***Թեմա 2***՝ Մարդու գանգ գիպսե երկրաչափական դետալներով /խորանարդ,գունդ/ կտորի համադրությամբ/Ա1,Ա2/: ***Թեմա 3***՝ Տաշվածքով գիպսե գլուխ: ***Թեմա 4*** Մարդու գիպսե նատոմիական գլուխ: ***Թեմա5***՝ Պլեներ,բնապատկերի ուսումնասիրում,մարդու ֆիգուրայի համատեղությամբ: ***Թեմա 6***՝ Գպսե գլուխ /Հերա,Վեներա/:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B07.** ***«ԳՈՒՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»***-2 *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(6 դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *2–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

ՈՒսանողներին սովորեցնել կոմպոզիցիան ճիշտ տեղադրել թղթի հարթության մեջ, զգալ նյութը, առարկաների՝ մեկը մյուսի վրա ունեցած փոխազդեցության խնդիրների վերարտադրությունը: Սովորեցնել աշխատել ջրաներկով ու գուաշով և դրանց խառնուրդներով ստանալ գունային անհրաժեշտ գամմա:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. կծանոթանա մի քանի առարկաներից բաղկացած նատյուրմորտի ճիշտ կառուցման ձևերին,
5. կիմանա ջրաներկի և գուաշի տեխնիկայի առանձնահատկությունները,
6. կկարողանա ճիշտ ընտրություն կատարել գունային գամմայի անսահմանության մեջ:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նկարել նատյուրմորտ՝ գիպսե երկրաչափական մարմնով, երաժըշտական գործիքով, կտորի ծալքով (Ա2, գուաշ, ջրաներկ): ***Թեմա 2***՝ Նկարել նատյուրմորտ՝ կարպետով, նռներով, չոր բույսերով, կենցաղային, մետաղյա ու կավե առարկաներով (Ա2, գուաշ, ջրաներկ): ***Թեմա 3***՝ Նկարել նատյուրմորտ տարբեր նյութերից պատրաստված առարկաներով, ինչպես նաև ապակյա անոթով կտորների համադրությամբ: (Ա2, գուաշ, ջրաներկ): ***Թեմա 4***՝ Կատարել կոմպոզիցիոն աշխատանք, (Ա2, գուաշ, ջրաներկ): ***Թեմա 5***՝ Պլեներ: ***Թեմա 6***՝ Բարդ նատյուրմորտ/Ա1,Ա2/: ***Թեմա 7***՝՝ Պլեներ/Ա2,Ա3,Ա4/:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0404/B08.** *«ԱՇԽԱՏԱՆՔ ՆՅՈՒԹԻ ՎՐԱ»*-1 *(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *( 64 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *2–րդ, համրագումարային քննություն*

***Տեքստիլ***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել կարպետի տեխնիկան՝ հինել, գործել մեկ կամ երկու զարդանախշ՝պարզ էլեմենտներ հին հայկական օրինակներից:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. կկարողանա օգտվել կարպետի դազգահից, կարպետի հաշվարկային էսքիզից, սխեմաներից,
5. կկարողանա գործել տարբեր զարդանախշեր, կարպետի տեխնիկայով և գունային համադրությամբ և հակադրությամբ ֆոնի հետ,
6. կկարողանա ինքնուրույն պարապմունքների ժամանակ գործել հեյունային ծածկոցների դրվագներ՝ մեկ կամ երկու զարդանախշով:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Գործել կարպետ՝ երկու կրկնվող զարդանախշով: և ասեղնագործ ծածկոցների դրվագներ:

***Թեմա 2***՝ Գործել հեյունային ծածկոցների դրվագ՝ մեկ կամ երկու զարդանախշով:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում–քննություն:

***Կերամիկա***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել խեցեգործության՝ որպես դեկորատիվ-կիրառական արվեստի ճյուղի, մշակութային երևույթի, ինչպես նաև խեցեգործական իրերի պատրաստման ասպարեզում անհրաժեշտ գիտելիքներին և հմտություններին՝ խեցեգործական իրերի պատրաստման ասպարեզում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1 կծանոթանա և կկարողանա կավից պատրաստել կենցաղայի իրեր՝ շերտերով բարձրացման եղանակով:

Բովանդակությունը

***Թեմա 1***՝ Սափոր շերտերով բարձրանալու եղանակով:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում–քննություն:

**0404/B09.** ***«ԿՈՄՊՈԶԻՑԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»-2*** *(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(8 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *2–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

***Տեքստիլ***

*Նպատակը.*

Ցուցաբերել հոգատար վերաբերմունք ազգային–մշակութային ժառանգությանը և դրանց հիմքի վրա հասնել ժամանակակից խնդիրների ու պահանջների

մեկնությանը և կատարմանը: Սովորեցնել պարզագույն խնդիրներից ստանալ համեմատաբար բարդ կոմպոզիցիաների գրաֆիկական և գունային լուծումներ: Մի շարք կոմպոզիցիոն վարժություններ կատարելով՝ ուսանողն իմանա տարբեր տեխնիկաներով ու նյութերով աշխատելու հնարքները և կատարել կոլաժներ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

5. կկարողանա հարթության վրա ստեղծել գունա–գծային ռիթմիկա, գունա–գծային շարժում, չհավասարակշռված հավասարակշռություն,
6. կկարողանա զարդանախշերի քիչ քանակությամբ ստեղծել իմաստալից և բարձրաճաշակ գործեր,
7. կկարողանա ստեղծել ներդաշնակ միջնազարդեր և եզրագոտիներ,
8. կկարողանա քիչ միջոցներով հասնել մեծ արտահայտչականության:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Ստեղծել դեկորատիվ նատյուրմորտներ: Կոմպոզիցիա հասկացողության վերլուծությունը:***Թեմա 2***՝ Ստեղծել պարզ, դեկորատիվ զարդամոտիվներով կազմված կոմպոզիցիաներ:Կոմպոզիցիայի կանոնները: ***Թեմա 3***՝ Կատարել կարպետի, գորգի թեմատիկ էսքիզներ: Կարպետանախշերի ծագումն ու բովանդակային վերլուծությունը:***Թեմա 4***՝ Կենդանիների, թռչունների և մարդկային ֆիգուրների ոճավորում: Հայկական կարպետի զարդանախշերը և կոմպոզիցիոն պատկերի կառուցում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

***Կերամիկա***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել զարդանախշերի իմաստաբանությանն ու ծագումնաբանությանը, կոմպոզիցիոն ձևաստեղծման հնարքներին՝ կենցաղում օգտագործվող փայտե իրերը խորհրդանշական զարդանախշերով զարդարելու համար: Սովորեցնել պարզ զարդանախշերը գեղարվեստական բարձր ճաշակով համադրել իրար հետ, ճիշտ մասնատել դետալներն ու կատարել տեխնիկական հաշվարկները:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. կկարողանա նախագծել կենցաղում օգտագործելի իրեր,
5. կկարողանա կատարել դետալների մասնատում և տեխնիկական հաշվարկներ,
6. կկատարի բուսական զարդանախշերով հարուստ թեմատիկ էսքիզ:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Նախագծել դեկորատիվ ծաղկաման:

***Թեմա՝ 2*** Նախագծել բուսական զարդանախշերով դեկորատիվ սկուտեղ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0104/B10.** *«ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԱ»*-1 *(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 3 ժամ *(8 ժամ դասախոսություն, 40 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *2–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Ծանոթանալ համակարգչային գրաֆիկական ծրագրերին ու դրանց գունային կողերով աշխատելու նրբություններին: Պատրաստել համակարգչային գրաֆիկական ծրագրերով աշխատող և ստեղծագործող մասնագետներ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի համակարգչային գրաֆիկական ծրագրերով /Adobe Photoshop և Corel Draw/ աշխատելու հմտությունների
2. կիմանա երկչափ գրաֆիկական կոմպոզիցիաներ և նյութեր ստեղծելու հմտույունները
3. կկարողանա ստեղծել տարբեր տեսակի կոմպոզիցիաներ և դրանք օգտագործել հիմնական էսքիզներում: Կկարողանա գրաֆիկական ծրագրերի կիրառմամբ ստեղծել կոմպոզիցիոն հետաքրքիր լուծումներով այցեքարտեր, անվանաքարտեր, բուկլետներ, բրոշյուրներ և տարատեսակ այլ թերթոններ:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Ներածություն՝ համակարգչային գրաֆիկա: ***Թեմա 2***՝ Գույների հետ աշխատելու հմտություններ՝ տպագրություն և էլեկտրոնային: ***Թեմա 3***՝ Corel Draw ծրագիր: ***Թեմա 4***՝ Adobe Photoshop ծրագիր: ***Թեմա 5***՝ Այցեքարտերի դիզայն: ***Թեմա 5***՝ Անվանաքարտերի դիզայն: ***Թեմա 5***՝ Լոգոտիպի մշակում և ռեստավրացիա: ***Թեմա 5***՝ Բուկլետ/բրոշյուր

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ-դիտում քննություններ, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0202/B11.** ***«ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»*** *(2կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *2–րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ իրականության գեղագիտական յուրացման և արվեստի՝որպես այդյուրացման բարձրագույն ձևի ծագման ու զարգացման օրինաչափությունների մասին:

***Կրթական արդյունքները.***
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
3. Կիմանա արվեստի տարբեր տեսակների(գրականություն, ճարտարապետություն, թատրոն, կերպարվեստ, կինո և այլն)գեղագիտական առանձնահատկությունները,
4. Կկարողանա միմյանցից զատել և բնութագրել գեղեցիկն ու վեհը, ողբերգականն ու կատակերգականը:

Բովանդակությունը.
***Թեմա 1.*** Գեղագիտության առարկան և խնդիրները: ***Թեմա 2.***Գեղագիտական մտքի զարգացման հիմնական էտապները /Հին արևելք, Անտիկ դարաշրջան, Միջնադար, Վերածնունդ, Նոր ժամանակներ, Արդի դարաշրջան/: ***Թեմա 3.***Գեղագիտական գիտակցությունը եւ նրա կառուցվածքը: ***Թեմա4.***Գեղագիտության հիմնական կատեգորիաները /գեղեցիկ, վեհ, ողբերգական, կատակերգական/: ***Թեմա 5.***Արվեստը որպես իրականության արտացոլման և իմացության միջոց: Գեղարվեստական կերպար: ***Թեմա 6.***Արվեստի տեսակների դասակարգման սկզբունքները: ***Թեմա7.***Արվեստի տեսակների գեղագիտակ անառանձնահատկությունները:***Թեմա8.***Արվեստը որպես հասարակական գիտակցության ձև: Գեղագիտական դաստիարակություն:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***
*Ընթացիկ քննություններ*
Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B12.** ***«ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ»***-1 *(3 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(8 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *2–րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*
Առարկայի նպատակն է ուսանողներին սովորեցնել ստեղծել ծավալների շոշափելի ու իրականակերպ դրսևորումներ, որոնք դիտողին հնարավորություն

կտան պատկերներն ընկալել տարբեր դիտակետերից: Տիրապետել կավի ծեփվածքաի հետ աշխատելու նրբություններին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. Կուսումնասիրի երկրաչափական մարմինները:
5. Ընկալել ծավալները տարածության մեջ:
6. Կատարել բնորոշող վերլուծություններ:

Բովանդակությունը.

***Թեմա1***՝ Երկրաչափական մարմինների ուսումնասիրում,ընդօրինակում:***Թեմա 2***՝ Երկրաչափական ձևերով հարթաքանդակի ստացում:***Թեմա3***՝ Ստեղծագործական մոտեցմամբ երկրաչափական առարկաների համադրում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0404/B13.** *«ԱՇԽԱՏԱՆՔ ՆՅՈՒԹԻ ՎՐԱ»*-2 *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *( 64 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3–րդ, հանրագումարային քննություն*

***Տեքստիլ***

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է տիրապետել կարպետի հաշվարկային սխեմային: Գործել հայկական այբուբենի տառերը՝որոշակի ոճավորված: Կարողանալ ցանկացած պարզագույն նկար ոճավորել և սխեմատիկ դարձնել:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. կկարողանա սխեմայի վրա ձևավորել հայկական տառատեսակներից մեկը,
5. կկարողանա տառազարդը գործել բուսական օրնամենտով և թռչնազարդով՝ գունային համադրությամբ ֆոնի և եզրագոտու հետ,
6. կկարողանա գործել հայկական ասեղնագործության հիմնական կարատեսակներից՝ մեկ անձեռոցիկ:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Գործել ոճավորված տառատեսակ կարպետի տեխնիկայով:

***Թեմա 2***՝ Գործել մեկ ասեղնագործ անձեռոցիկ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում–քննություն:

*Կերամիկա*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել խեցեգործական իրերի կիրառությունից ելնելով կատարել նյութի ճիշտ ընտրություն՝ պարզ կառուցվածքով և կոմպոզիցիայիով իր պատրաստելու համար:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1.կկարողանա կոնկրետ առարկա պատրաստելու համար ճիշտ ընտրել նյութը,

2.կծանոթանա կավանյութի հետ աշխատելու մեթոդներին և տեխնիկական միջոցներին:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Սկուտեղ հայկական զարդանախշերով:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում–քննություն:

**0403/B14.** *«ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-3 *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(4 դասախոսություն , 60 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել մարդու գլխի կառուցվածքը, համամասնությունները: Անհրաժեշտ է զարգացնել տարածական ընկալում, տարբերակել լուսաստվերի առանձնահատկությունները՝ ընկնող և սեփական ստվերներ, փայլ, արտացոլում և այլն: Ուսումնասիրի մարդու իրանի կառուցվածքը: Նկարել գիպսե տորս՝ ըմբռնելու համար մարդու իրանի համաչափությունները:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

3. կկարողանա ուսումնասիրել լուսաստվերի առանձնահատկությունները,
4. կկարողանա ձեռք բերել գծի, տոնի արագ ընկալման ունակություն և տարածական մտածելակերպ:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Գիպսե գլուխ /Վեներա,Անաhիտ,Ա2/: ***Թեմա 2***՝ Գիպսե գլուխ շարժումով /ստրուկի գլուխ, Հերմես,Ա2/: ***Թեմա 3***՝ Գիպսե գլուխ տարբեր նյութերի կիրառմամբ /սանգինա,պաստել,սեպիա,Ա2/: ***Թեմա 4***՝ Մարդու մարմնի գիպսե մասեր /ձեռք,ոտք/:***Թեմա 5*** ՝ Մարդու գիպսե իրան, տարբեր նյութերի կիրառմամբ /սանգինա,պաստել,սեպիա,Ա1,Ա2/: ***Թեմա 6***՝ Պլեներ/Ա2,Ա3,Ա4/:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B15.** *«ԳՈՒՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-3 *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(4 դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Առարկայի նպատակն է կատարելագործել գուաշով աշխատելու տեխնիկան՝ անհրաժեշտ համադիր, հակադիր գունային կոլորիտներ ստանալու համար: Ուսանողների մոտ ձևավորել ուրույն և կազմակերպված վերաբերմունք բնության երևույթների վերաբերյալ, կոմպոզիցիայի ծավալային և տարածական խնդիրների հանդեպ՝ վերլուծական մոտեցում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. կկարողանա հասնել վրձնահարվածների վարպետության,
5. կհասկանա գունային համադրությունների համատեղելիության խնդիրները,
6. կկարողանա ստեղծել սեփական ոճ:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նկարել նատյուրմորտ՝ մրգերով, սկուտեղով, սափորով, դդումով, սեխով կամ ձմերուկով (լուսավոր, նարնջագույն, դեղին ֆոնի վրա), (Ա2, գուաշ, ջրաներկ, յուղաներկ 50X60): ***Թեմա 2***՝ Պլեներ/Ա2,Ա3,Ա4/: ***Թեմա 3***՝ Նկարել նատյուրմորտ՝ սենյակային բույսերով, մրգերով, սպիտակ կտորի ծալքերով (Ա2, գուաշ, ջրաներկ, յուղաներկ 50X60): ***Թեմա 4***՝ Պլեներ: ***Թեմա 5***՝ Նկարել նատյուրմորտ՝ գիպսե զարդանախշով, մուգ կտորի ծալքերով, նարնջով, լիմոնով, սափորով, սկուտեղով կամ ափսեով, փայտե գդալով (Ա2, գուաշ, ջրաներկ, յուղաներկ): ***Թեմա 6*** Կատարել ստեղծագործական կոմպոզիցիոն աշխատանք(Ա2, գուաշ, ջրաներկ, պաստել, յուղաներկ 50X60)):

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B16.** ***«ՀԵՌԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*** *(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(8 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *3–րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Առարկայի նպատակն է ուսուցանել պատկերի կառուցողական առանձնահատկությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. կկարողանա Դյուրերի մեթոդով համաչափորեն մեծացնել և փոքրացնել պատկերները,
5. կկարողանա հեռանկարի միջոցով իր աշխատանքների մեջ հասնել առավել ճշգրտության և արտահայտչականության,
6. կկարողանա իր նկարների մեջ գույնի, տոնի միջոցով ստանալ տարածականության պատրանք:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Հեռանկար՝ ցանցի մեթոդով (Դյուրերի մեթոդ): ***Թեմա 2***՝ Հեռանկարչությունը գեղանկարչության մեջ: ***Թեմա 3***՝ Հեռանկարչությունը գրաֆիկայի մեջ: ***Թեմա 4***՝ Հեռանկարչությունը ինտերյերում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 9 միավոր արժեքով:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Դիտում քննություն: Միավորների քայլը 2.25 է:

***2-րդ ստուգում*** : Դիտում քննություն :Միավորների քայլը 2.25 է:

Նախատեսված եզրափակիչ ստուգարք, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում–քննություն:

**0404/B17.** ***«ԴԻԶԱՅՆԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ»***-1 *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(16 դասախոսություն, 48 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *3–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Պատրաստել կենցաղային /ինդուստրիալ/ դիզայնի մասնագետներ, որոնք կարող են արագ և նպատակասլաց կատարել գեղարվեստական բարձր մակարդակի նախագծեր ու կենցաղային իրերի էսքիզներ: Հատուկ ուշադրություն դարձ-

նել գեղագիտական, գեղարվեստական գիտելիքների ուսուցմանը, կոմպոզիցիոն ձևաստեղծմանը, սիմետրիայի ու ասիմետրիայի ճիշտ կիրառելիությանը:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի կոմպոզիցիոն ձևաստեղծման հնարքներին, կենցաղային իրերի չափագրման հնարավորություններին
2. կհասկանա գույնի և ձևի կիրառման հնարավորությունները
3. կկարողանա ստեղծել տարբեր տեսակի կոմպոզիցիաներ և դրանք օգտագործել հիմնական էսքիզներում կամ հետագա կենցաղային իրերի նախագծերում:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Ծանոթություն առարկայի, նրա նպատակների ու խնդիրների, ինչպես նաև տեխնիկական միջոցների հետ: ***Թեմա 2***՝ Ասիմետրիկ և սիմետրիկ կոմպոզիցիաների կառուցում, դրանց գունային լուծումներ: ***Թեմա 3***՝ Ստատիկ և դինամիկ կոմպոզիցիաների կառուցում, դրանց գունային լուծումներ: ***Թեմա 4***՝ Գրենական պիտույքներով ասիմետրիկ կոմպոզիցիայի կառուցում և գունածավալային մշակում: ***Թեմա 5***՝ Գրենական պիտույքներով խառը և ասիմետրիկ կոմպոզիցիայի կառուցում և գույնով մշակում: ***Թեմա 6***՝ Հատակագծի և դրա չափագրման տեխնիկայի ուսումնասիրում: ***Թեմա 6***՝ Բջջային հեռախոսի չափագրություն և աքսոնոմետրիայի կառուցում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսվածեն 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչքննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0104/B18.** ***«ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԱ»-2*** *(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 3 ժամ *( 48 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3-րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Պատրաստել համակարգչային գրաֆիկական ծրագրերով աշխատող և ստեղծագործող մասնագետներ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի համակարգչային գրաֆիկական ծրագրերով /Adobe Photoshop և Corel Draw/ աշխատելու հմտությունների
2. կհասկանա երկչափ գրաֆիկական կոմպոզիցիաներ և նյութեր ստեղծելու հմտությունները
3. կկարողանա ստեղծել տարբեր տեսակի կոմպոզիցիաներ և դրանք օգտագործել հիմնական էսքիզներում: Կկարողանա գրաֆիկական ծրագրերի

կիրառմամբ ստեղծել կոմպոզիցիոն հետաքրքիր լուծումներով պոստերներ, աֆիշներ, շապիկների, գրքերի և ազդագրերի էջեր:

Բովանդակությունը.

***Թեմա 1*`** Adobe Photoshop և Corel Draw ծրագրերի խորը ուսումնասիրում: ***Թեմա 2*`** Պոստերի էսքիզներ և վերջնական նախագիծ: ***Թեմա 3*`** Գրքի կազմի ձևավորում: ***Թեմա 4*`** Անհատական պորտֆոլիոյի նախագծում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ-դիտում քննություններ, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B19.** *«ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ»*-2 *(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(2 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *3–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Ուսանողներին սովորեցնել ստեղծել ծավալների շոշափելի և իրականակերպ դրսևորումներ, որոնք հնարավորություն կտան դիտողին ծավալներն ընկալել տարբեր դիտակետերից: Հիմք ընդունելով հայկական զարդանախշային արվեստի ավանդույթները կատարել ուսումնասիրական աշխատանքներ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. Ուսումնասիրել խաչքարային զարդանախշերի տեսակները:
5. Տարբերակել խորաքանդակը, հարթաքանդակը և բարձրաքանդակը խաչքարային արվեստում:
6. Դասական խաչքարերի ուսումնասիրություն / Ճարտարապետ Մոմիկ, վարպետ Պողոս /

Բովանդակությունը.

***Թեմա 1*`** Բուսական և կենդանական մոտիվների արծարծումը դեկորատիվ կիրառական արվեստում / բարձրաքանդակ /: ***Թեմա 2*`** Խաչքար՝ ճակտոնի և կենտրոնական հատվածի ձևավորում: ***Թեմա 3*** Խաչքար՝կողային զարդաժապավեններ:
`

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B20.** *«ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-4 *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(4 ժամ դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *4–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Հատուկ ուշադրություն դարձնել տարբեր դիրքերում գտնվող մարդու մարմնի պատկերումներին՝ առանձնակիորեն շեշտադրելով գլխի և իրանի, ձեռքերի և ոտքերի ներդաշնակ փոխհամաձայնեցվածությունը ընդհանուր շարժման մեջ: Դասական օրինակների տեխնիկական հնարքների հետևողական ուսումնասիրություն:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

3. կկարողանա քննարկել կառուցման տեղադրման հարցերը,
4. կուսումնասիրի և կհամատեղի տարբեր նյութերով աշխատելու տեխնիկաները, ձեռք կբերի տարածական մտածելակերպ:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նկարել գիպսե գլուխ դետալների վերլուծական աշխատանքով(Ա2,Ա3,Սոկրատ,Սենեկա,Գատամելատ):***Թեմա2***՝ Գիպսե /տղամարդու կնոջ/ իրան/Ա2/: ***Թեմա 3***՝ Մարդու գիպսե իրան տարբեր նյութերի ուսումնասիրում՝ պաստել, սանգինա, ածուխ,սեպիա/Ա1,Ա2/:***Թեմա 4***՝ Պլեներ,բնության ձևերի ուսումնասիրում/Ա2 Ա3,Ա4/:***Թեմա 5***՝ Բնորդ՝ դիմանկար կարճատև, ուսումնասիրությամբ /տարբեր նյութերի ուսումնասիրում՝ սանգինա,պաստել. ածուխ, սեպիա, Ա1,Ա2/: ***Թեմա 6*** ՝ Պլեներ,բնության ձևերի ուսումնասիրում/Ա2,Ա3,Ա4/:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B21.** *«ԳՈՒՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-4 *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(4 ժամ դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *4–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

ՈՒսանողին սովորեցնել յուղաներկով աշխատելու տեխնիկան և ստատիկ ու դինամիկ կոմպոզիցիաներ պատկերելով՝ կատարել ինքնուրույն էտյուդներ: ՈՒսումնասիրել առարկաների գունավորման վրա լույսի ունեցած ազդեցու-

թյունը, ձևավորել անհատական մոտեցում՝ տարբեր արտահայտչականություն ստանալու համար, կատարել մեկ գույնի երանգներով (գրիզալ) առաջադրանքներ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

3. կկարողանա գույները գեղեցիկ համադրել,
4. կկարողանա տիրապետել դասական արվեստի ավանդույթներին:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նկարել նատյուրմորտ՝ կարպետով, ծղոտե ափսեով, մրգերով, գունեղ կտորի ծալքերով (Ա1,Ա2, ջրաներկ,գուաշ,ակրիլ,յուղաներկ 50X60): ***Թեմա 2***՝ Նկարել նատյուրմորտ գիպսե գլուխ,գեղարվեստական իրերով /երաժշտական գործիք,փոքր կճուճ մեջը դրված վրձիններ,բացված գիրք,տարբեր տոնայնության կտորի ծալքեր/:(Ա1,Ա2, ջրաներկ,գուաշ, ակրիլ, յուղաներկ 50X60):***Թեմա 3*** Նատյուրմորտ գիպսե դիմակով,թղթե գլանակ,ցանկացած գրենական պիտույք դրված տարայի մեջ, գունային բարդ և հակադիր կտորի ծալքերով(Ա1,Ա2, ջրաներկ,գուաշ,ակրիլ,յուղաներկ 50X60):***Թեմա 4***՝ Պլեներ, քաղաքային բնանկար (Ա2, ջրաներկ,գուաշ,ակրիլ,յուղաներկ 50X60): ***Թեմա 5***՝ Նատյուրմորտ՝ մրգերով, մետաղյա և թափանցիկ ապակյա առարկաներով, մուգ և լուսավոր կտորի ծալքերով: (Ա2 ջրաներկ, յուղաներկ 50X60): ***Թեմա 6***՝Կատարել կոմպոզիցիոն աշխատանք,դեկորատիվ մոտեցմամբ: (Ա2, ջրաներկ, գուաշ, ակրիլ, յուղաներկ 50X60):

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0404/B22.** ***«ԴԻԶԱՅՆԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ»*** -2*(5 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(8 ժամ դասախոսություն, 56 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Պատրաստել կենցաղային /ինդուստրիալ/ դիզայնի մասնագետներ, որոնք կարող են արագ և նպատակաուղղված կատարել գեղարվեստական բարձր մակարդակի նախագծեր ու կենցաղային իրերի էսքիզներ: Խորացնել գիտելիքները կենցաղային իրեր և կահույք նախագծելու մեջ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի կենցաղային իրեր և կահույք չափագրելու հնարավորություններին

2. կհասկանա կենցաղային իրերի ոճի և ձևի առանձնահատկությունները
3. կկարողանա ստեղծել տարբեր տեսակի նախագիծ-կոմպոզիցիաներ և դրանք օգտագործել հիմնական նախագծերում:

Բովանդակությունը.

***Թեմա 1*** Աշխատանքային գործիքի չափագրություն և աքսոնոմետրիայի կառուցում ***Թեմա 2*** Աշխատանքային գործիքի աքսոնոմետրիայով կամ դիմացի տեսքով հարթային կամ ծավալային կոմպոզիցիայի կառուցում և գույնով /գուաշով/ մշակում ***Թեմա 3*** Կահույքի որևէ հատվածի չափագրում և աքսոնոմետրիայի կառուցում: ***Թեմա 4*** Կահույքի աքսոնոմետրիայի գույնով և ծավալով մշակում /գուաշով/: ***Թեմա 5*** Ցանկացած ոճի և ձևի ֆունկցիոնալ աթոռի կամ սեղանի նախագծում /էսքիզների ընտրությունից հետո/

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչքննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0404/B23.** *«ՄԱՐԿԵՏԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՆՅՈՒԹՈՎ »*-1*(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(4 դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *4–րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*
Ցանոթանալ տարբեր նյութերով մակետներ պատրաստելու հմտություններին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1. կտիրապետի երկրաչափական տարբեր էլեմենտներով մակետներ կառուցելու հմտություններին
2. կհասկանա տարբեր նյութերով մակետներ պատրաստելու հնարավորությունները
3. կկարողանա ստեղծել նախագծերի մակետները ստվարաթղթերով, թղթերով, կոշտ ՊՎԽ-ներով և այլ հնարավոր նյութերով, որոնք անհրաժեշտ կլինեն տվյալ նախագծի մակետը պատրաստելուն:

Բովանդակությունը.

Ներկայացնել յուրաքանչյուր նախագծի մակետային տարբերակը ըստ նախագծի դիզայն առարկայի:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ-դիտում քննություններ, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0104/B24.** *«ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԱ»*-3 *(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *( 32 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *4–րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Խորացնել գիտելիքները համակարգչային երկչափ գրաֆիկական ծրագրերում, ինչպես նաև պատրաստել Adobe Illustrator, Adobe InDesign ծրագրերի մասնագետներ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի համակարգչային գրաֆիկական ծրագրերով /Adobe Illustrator, Adobe InDesign/ աշխատելու հմտությունների
2. կիասկանա երկչափ գրաֆիկական կոմպոզիցիաներ և նյութեր ստեղծելու հմտությունները
3. կկարողանա ստեղծել տարբեր տեսակի կոմպոզիցիոն լուծումներով գեղարվեստական պատկերազարդ գրքեր

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Adobe Illustrator, Adobe InDesign ծրագրերի խորը ուսումնասիրում: ***Թեմա 2***՝ Գրքի թեմայի ընտրություն, էսքիզների մշակում և վերջնական նախագիծ: ***Թեմա 3***՝ Գրքի վերջնական մակետավորում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ-դիտում քննություններ, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B25.** *«ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-5 *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(4 ժամ դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *5–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Առարկայի նպատակն է ուսանողին ծանոթացնել մարդու և շրջապատող առարկաների փոխհամակցված կապը համադրել տարածական վերլուծությամբ և իմաստավորվածությամբ: Կողմնորոշում խնդրին համապատասխան ատրիբուտիկայի ընտրության հարցում: Տիրապետել դիմանկարի արվեստին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1.Ուսումնասիրել լուսաստվերի առանձնահատկությունները/ընկնող և սեփական ստվերներ,բլիկ,ռեֆլեքս և այլն/:

2. Վարժվել ճեպանկարների կատարման մեջ,որի համար կհանձնարարվեն և լսարանային, և ինքնուրույն անհատական առաջադրանքներ:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նատյուրմորտ՝ զիպսե գլուխ,ժանրային ատրիբուտների տարատեսակ կտորների ծալքերի համադրությամբ/Ա1,Ա2 ֆորմատ/:***Թեմա 2***՝ Պլեներ, բնության ձևերի ուսումնասիրում/Ա2,Ա3,Ա4/: ***Թեմա 3***՝ Գիպսե տորս՝/ինտերիերում, Ա1,Ա2 ֆորմատ/: ***Թեմա 4***՝Պլեներ, բնության ձևերի ուսումնասիրում/Ա2,Ա3,Ա4/: ***Թեմա 5***՝ Բնորդ դիմանկար կերպարային առանձնահատկություններով /զիպսե գլուխ Ա1,Ա2/:***Թեմա 6***՝Բնորդ շարժման մեջ /զիպսե գլուխ՝ Վոլտեր,Սենեկա,Գատամելատ տարբեր նյութերի ուսումնասիրում սանգինա, պաստել, ածուխ,սեպիա Ա1,Ա2/:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B26.** ***«ԳՈՒՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»***-5 *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(4 ժամ դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *5–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Ուսանողների մոտ հիմնավորել ծավալային մտածողությունը, գծի ու գույնի միջոցով պատկերներին դինամիկ արտահայտչականություն տալու ունակություն: Սովորեցնել խառը տեխնիկայի միջոցով արտահայտել տարբեր օբյեկտների տեքստուրան և ֆակտուրան, գունային փոխհարաբերությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

3. կիմանա պատկերվող օբյեկտի դիրքի, գծի և գույնի փոխհարաբերության մասին,
4. կնկալի տարածությունն իր շրջապատով ու գույներով:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նկարել նատյուրմորտ՝ կարպետով, մեծածավալ կենցաղային իրերով, դդումով, մրգերով (Ա2, ջրաներկ, գուաշ,ակրիլ, յուղաներկ 50X 60): ***Թեմա 2***՝ Պլեներ,բնության ձևերի ուսումնասիրում /ճարտարապետական կառույցների համադրությամբ Ա2,Ա3,Ա4 ջրաներկ, գուաշ,ակրիլ, յուղաներկ 50X 60/ : ***Թեմա 3***՝ Նկարել նատյուրմորտ՝ զիպսե կիսանդրիով, չորացրած փշերով, սափորով (Ա2,

գուաշ, ջրաներկ, ակրիլ, յուղաներկ 50X 60)։ ***Թեմա 4***՝ Պլեներ, բնապատկերի ուսումնասիրում /մարդու ֆիգուրայի համադրությամբ Ա2,Ա3,Ա4 ջրաներկ, գուաշ,ակրիլ, յուղաներկ 50X 60/ ։ ***Թեմա 5***՝ Նկարել նատյուրմորտ՝ մի քանի հարթությամբ դրված կենցաղային իրերով (փոքր աթոռ, մրգեր, հակադարձ տոնի կտորներ), (Ա1,Ա2, ջրաներկ,գուաշ,ակրիլ,յուղաներկ 50X 60)։ ***Թեմա 6***՝ Կատարել կոմպոզիցիոն աշխատանք,դեկորատիվ մոտեցմամբ։ (Ա2, ջրաներկ, գուաշ, ակրիլ, յուղաներկ 50X 60)։

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով։ Միավորների քայլը 0,5 է։

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով։ Միավորների քայլը 0,5 է։

**0404/B27.** *«ՄԱՐԿԵՏԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՆՅՈՒԹՈՎ»*-2 *(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(64 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *5–րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

*Պատրաստել ապագա դիզայներ-նախագծողներին սեփական նախագծերի մակետները պատրաստելու հմտությունների հետ։*

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի մակետ պատրաստելու հմտություններին
2. կհասկանա ինչպես նախագիծը վերածել մակետի մասշտաբային չափերով
3. կկարողանա ստեղծել տարբեր նախագծերի մակետներ զանազան նյութերից՝ ստվարաթուղթ, ՊՎԽ, գիպս, պոլիէթիլեն, կավ, ապակի և այլն։

Բովանդակությունը.

Դիզայն-նախագիծ և համակարգչային գրաֆիկա առարկաների առաջադրանքներին զուգահեռաբար ստեղծել և նախագծել մակետներ՝ կենցաղային իր, սարք-սարքավորում, գիրք և այլն։

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ-դիտում քննություններ, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով։ Միավորների քայլը 0,5 է։

***0404/B28. «ԴԻԶԱՅՆԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ»-3*** *(5 կրեդիտ)*

Շաբաթական՝ 6 ժամ *(6 ժամ դասախոսություն, 90 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *5–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*
Խորացնել գիտելիքները դիզայն-նախագծում: Պատրաստել գիտակ և հմուտ դիզայներ-նախագծողներ:

***Կրթական արդյունքները***
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1. կտիրապետի դիզայն-նախագծման բարդ մեխանիզմներին ու գիտելիքներին
2. կհասկանա իրական կենցաղային և ֆունկցիոնալ իրեր նախագծելու հմտությունները
3. կկարողանա ստեղծել տարբեր տեսակի գրենական պիտույքների, շշերի փաթեթներ /տուփեր/, ինչպես նաև բազմաֆունկցիոնալ կահույքի նախագիծ

Բովանդակությունը.
***Թեմա 1***՝ Բազմաֆունկցիոնալ թղթապանակի դիզայն-նախագիծ: ***Թեմա 2***՝ Խմիչքի շշի փաթեթավորման դիզայն-նախագիծ: ***Թեմա 3***՝ Բազմաֆունկցիոնալ կահույքի դիզայն նախագիծ /աշխատասեղան, բազմաֆունկցիոնալ աթոռ, մանկական գրասեղան, մանկական մահճակալ և այլն/:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***
*Ընթացիկ քննություններ*
Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:
*Եզրափակիչ քննություն*
Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0202/B29.** *«ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»*-1*(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *5–րդ, եզրափակիչ գնահատմամբ*
*Նպատակը.*

**Դասընթացի նպատակը**
Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել համաշխարհայի արվեստի պատմությանը, նրա զարգացման հիմնական փուլերին, կարևոր ստեղծագործություններին, հաղորդակից դարձնել նախնադարյան արվեստին, Հին Եգիպտոսի, Միջագետքի, Իրանի, Հին Հռոմի և Հունաստանի մշակույթների պատմության, կրոնա–դիցաբանության, արվեստի առաջացման, զարգացման օրինաչափությունների հետ: ՈՒսանողների մոտ ձևավորել գիտելիքներ վերածննդի ժամանակաշրջանի, XVII դարի եվրոպական առաջատար

գեղարվեստական դպրոցների, XVIII-XIX դդ. եվրոպական և ռուսական արվեստների և արվեստի ուղղությունների մասին: Իլյուստրատիվ նյութի և տեսաֆիլմերի հիման վրա ուսանողներին կներկայացվի համաշխարհային արվեստի տվյալ շրջանների առավել հայտնի ստեղծագործությունները, կձևավորվի արվեստի գործերի գիտական վերլուծությունների մասին պատկերացում:

*Կրթական արդյունքները*

*Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.*

1.կիմանա համաշխարհային արվեստի պատմության օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները, կծանոթանա հնագույն և հին շրջանի ,միջնադարի, վերածննդի դարաշրջանի և XVII- XVIIIդ.դ. եվրոպական արվեստի առավել հայտնի հուշարձաններին և հայտնի վարպետների ստեղծագործություններին:
2.կկարողանա ծանոթանալ արվեստի կարևոր հուշարձաններին իլյուստրատիվ նյութի և տեսաֆիլմերի հիման վրա

3.կկարողանա կատարել ճշգրիտ վերլուծություններ համաշխարհային արվեստի և նրա առաջադրած խնդիրների շուրջ:

**Բովանդակությունը**
**Թեմա 1՝** Ներածություն. Նախնադարյան արվեստ: **Թեմա 2՝** Հին քաղաքակրթությունների արվեստների ընդհանուր բնութագիրը և հիմնական հուշարձանները. Հին Եգիպտոս, Հին Միջագետք, Աքեմենյան Իրան, Էգեյան աշխարհ **Թեմա 3՝** Հին Հունաստանի և Հռոմի արվեստի հիմնական շրջանները և հուշարձանները: **Թեմա 5՝** Միջնադարյան արևելաքրիստոնեական և արևմտաքրիստոնեական արվեստ..Բյուզանդական արվեստ, Ռոմանական և Գոթական արվեստ. Կիևյան Ռուսիայի արվեստը: **Թեմա 6՝** Հարավային և հարավ-արևելյան Ասիայի երկրների հին և միջնադարյան արվեստը: **Թեմա 7՝** Վերածննդի արվեստը Իտալիայում: **Թեմա 8՝ Թեմա** XVII դարի արվեստի ընդհանուր բնութագիրը.Իտալական, ֆրանսիական, ֆլամանդական, հոլանդական, իսպանական դպրոցները: **Թեմա 9՝** XVIII – XIX դդ եվրոպական և ռուսական արվեստների ընդհանուր բնութագիրը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 8 առաջադրանք, յուրաքանչյուրը 0.5 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0104/B30.** *«ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՌԱՉԱՓ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ»*-1 *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(8 ժամ դասախոսություն, 56 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *5– րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսուցանել վեկտորային և կետային կողմնորոշված գրաֆիկայի մշակումը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. կիմանա համեմատման արդյունքում զանազանել կետային և վեկտորական գրաֆիկան,
5. կտիրապետի գրաֆիկական խմբագրերի գործիքներին,
6. կկարողանա կիրառել գրաֆիկական խմբագրերը եռաչափ մոդելներ ստեղծելու և խմբագրելու համար:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1***՝ Կետային գրաֆիկա ***Թեմա 2***՝ Երկրաչափական պատկերների նկարում: ***Թեմա 3***՝ Մակետի պատրաստում: ***Թեմա 4***՝ Շերտերով աշխատանք ***Թեմա 5*** Մասշտաբավորում: ***Թեմա 6***՝ Գրաֆիկական օբյեկտի խմբագրում: ***Թեմա 7***՝ Գույն, գրաֆիկական ոճեր: ***Թեմա 8***՝ Աշխատանքը ֆայլերի հետ: ***Թեմա 9***՝ Վեկտորական գրաֆիկա: ***Թեմա 10***՝ 3D-եռաչափ մոդելավորում: ***Թեմա 11***՝ Օբյեկտների ստեղծում և խմբագրում: ***Թեմա 12***՝ Սցենարի կոմպոզիցիայի ստեղծում:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

*1-ին ստուգում.* Պրակտիկ աշխատանք կետային գրաֆիկայով: Միավորների քայլը 0.5 է:

*2-րդ ստուգում.* Պրակտիկ աշխատանք վեկտորական գրաֆիկայով: Միավորների քայլը 0.5 է:

Գնահատվում է մոդելի որակը, սցենարի կոմպոզիցիան,մասշտաբավորումը,գունա-գրաֆիկական ոճերը, շերտերի և ֆայլերի հետ աշխատանքը :

**0403/B31.** *«ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-6 *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(4 ժամ դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *6–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Ուսանողին սովորեցնել մարդու մարմնի անատոմիական կառուցվածքն ու համաչափությունները, զգալ պլաստիկան՝ գծի և տոնի ընկալմամբ: Տիրապետել դիմային բնութագրի ընթերցմանը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

3. կկարողանա ուսումնասիրել մարդու անատոմիական մարմինը, կունենա տոնի, գծի ձևավորված կուլտուրա,
4. կտիրապետի նյութականության ստացման եղանակներին:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նկարել զիպսե տորս /դիմանկար,վերլուծական մոտեցմամբ Ա1,Ա2/: ***Թեմա 2***՝ Նկարել զիպսե անատոմիական մարմին կամ բնորդ /Ա1,Ա2/: ***Թեմա3***՝Նկարել բնորդ կամ գիպսե մարմին /Ա1,Ա2/:***Թեմա 4***՝ Պլեներ բնությանձևերի ուսումնասիրում /կոմպոզիցիա դեկորատիվ մոտեցմամբ Ա2,Ա3,Ա4/:***Թեմա 5***՝ Նկարել բնորդ կամ գիպսե մարմին /տարբեր վերլուծական խնդիրներով Ա1,Ա2/: ***Թեմա 6***՝ Պլեներ բնության ձևերի ուսումնասիրում /կոմպոզիցիա,ստեղծագործական աշխատանք տարբեր գրաֆիկական նյութերի ուսումնասիրմամբ/:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B32.** *«ԳՈՒՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-6 *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(4 ժամ դասախոսություն, 60 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *6–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

ՈՒսանողներին սովորեցնել համատեղել տարբեր նյութերի տեխնիկաները և դրանց միջոցով պատկերել բնապատկերների հարաձուն փոփոխությունները, կենդանի և անշունչ առարկաների ստատիկ ու դինամիկ վիճակները, հոգեբանական կերպարներ: Կատարել էտյուդներ (նյութի ազատ ընտրություն) պլեներում և բնորդից:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

3. կիմանա գծանկարի կոնստրուկցիայի ճիշտ օգտագործումը՝ գունանկարի առանձնահատկություններից ելնելով,
4. կկարողանա համատեղել տարբեր նյութերի տեխնիկաները:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նկարել նատյուրմորտ՝ դդումով, սենյակային բույսերով, կավե անոթներով (Ա2, ջրաներկ, գուաշ,ակրիլ,յուղաներկ 50X 60): ***Թեմա 2***՝ Նկարել բնորդ ( Ա1, Ա2,խառը տեխնիկա): ***Թեմա 3***՝ Նկարել նատյուրմորտ՝ մի քանի պլանով դրված ապակյա անոթներով, տարբեր տոների մուգ ու բաց կտորներով, գունավոր հեղուկով լի շշով (Ա1,Ա2, ջրաներկ,գուաշ,ակրիլ, յուղաներկ 50X 60): ***Թեմա4***՝Պլեներ,բնության ձևերի ուսումնասիրում /կոմպոզիցիա,

ստեղծագործական աշխատանք, Ա2,Ա3,Ա4 ջրաներկ, գուաշ,ակրիլ,յուղաներկ 50X60/: ***Թեմա 5՝*** Կատարել կոմպոզիցիոն աշխատանք(կտավ, յուղաներկ 50X60,դեկորատիվ մոտեցում): ***Թեմա 6՝*** Պլեներ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0202/B33.** *«ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»*-2 *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն,16 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *6–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել XIX-XX դդ. արևմտաեվրոպական և ռուսական արվեստների գեղարվեստական ուղղությունների և խմբավորումների հետ /ռեալիզմ, իմպրեսիոնիզմ, պոստիմպրեսիոնիզմ, սիմվոլիզմ, մոդեռն ոճ, էքսպրեսիոնիզմ, կուբիզմ, աբստրակցիոնիզմ, ֆովիզմ, ֆուտուրիզմ, դադաիզմ, սյուրռեալիզմ, պոստմոդեռնիզմ/:

Ծանոթացնալով հայ արվեստի պատմությանը, նրա զարգացման հիմնական փուլերին, կարևոր ստեղծագործություններին և արվեստագետներին, ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ սփյուռքում՝ ուսանողները կկարողանան ներկայացնել հայ արվեստի տեղը համաշխարհային արվեստի համատեքստում, բացահայտել հայ արվեստի կապերը հունական, հռոմեական, բյուզանդական, պարսկական, արաբական, ռուսական, եվրոպական արվեստների հետ:

Իլյուստրատիվ նյութի և տեսաֆիլմերի հիման վրա ուսանողներին կներկայացվի համաշխարհային և հայ արվեստի առավել հայտնի ստեղծագործությունները, կձևավորվի արվեստի հուշարձանների գիտական վերլուծությունների մասին պատկերացում:

***Կրթական արդյունքները***

***Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.***

1. Կծանոթանա XIX-XX դդ. արևմտաեվրոպական և ռուսական արվեստների գեղարվեստական ուղղությունների և դրանց առավել հայտնի ներկայացուցիչների ստեղծագործություններին:
2. Կիասկանա հայ արվեստի պատմության օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները
3. Կճանաչի հայկական կերպարվեստի և ճարտարապետության ստեղծագործությունները:

**Բովանդակությունը**

**Թեմա 1**՝ XIX դարի վերջին. ռուս ռեալիստ նկարիչները /պերեդվիժնիկներ/: **Թեմա 2**՝ Ֆրանսիական արվեստը XIX դարի վերջին /իմպրեսիոնիզմ, պոստիմպրեսիոնիզմ/: **Թեմա 3**՝ XX դարի մոդեռնիստական ուղղությունները: **Թեմա 4**՝ Հին հայկական և ուրարտական արվեստ :
**Թեմա 5**՝ Հելլենիստական Հայաստանի արվեստը: **Թեմա 6**՝ Միջնադարյան հայ արվեստ: **Թեմա 7**՝ Կիլիկիայի հայկական թագավորության արվեստը: **Թեմա 7**՝ Հայկական գաղթօջախների արվեստը/ XI- XVIII **դդ./**: **Թեմա 8**՝ Հայ կերպարվեստագետները 19-րդ դ. և 20-րդ դարի 1-ին կեսին : **Թեմա 9**՝ Հայաստանի XX դարի երկրորդ կեսի արվեստը: **Թեմա 9**՝ Սփյուռքահայ նկարիչներ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 8 առաջադրանք, յուրաքանչյուրը 0.5 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0104/B34.** ***«ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՌԱՉԱՓ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ»-2****(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(8 ժամ դասախոսություն, 56 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *6–րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսուցանել AUTOCAD և/կամ 3Ds MAX համակարգով հարթ և եռաչափ օբյեկտների պատրաստում և մշակում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա AUTOCAD և/կամ 3Ds MAX համակարգով աշխատանք սկսելու հիմնադրույթները
կտիրապետի հարթ և եռաչափ օբյեկտների ներկայացման ձևերին:
կկարողանա ստեղծել AUTOCAD-ի ֆայլ, որը կպարունակի գրաֆիկական եռաչափ պատկեր, տեքստ, տիտղոսագիր:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1***՝ Ծանոթություն AUTOCAD-ին և/կամ 3Ds MAX-ին: ***Թեմա 2***՝ Գծագրական գործիքացանկ: ***Թեմա 3***՝ Օբյեկտների ընտրություն և ձևափոխություն: ***Թեմա 4***՝ Կոորդինատներով աշխատանք ***Թեմա 5*** Խմբեր և բլոկներ: ***Թեմա 6*** 3D-եռաչափ մոդելավորում: ***Թեմա 7*** Չափադրում և նրա ձևերի սահմանումը: ***Թեմա 8***՝ Աշխատանքը ֆայլերի հետ: ***Թեմա 9***՝ Հոծ մոդելավորում: ***Թեմա 10***՝ 3D-եռաչափ գծագրերի պատրաստում: ***Թեմա 11***՝ Հատույթներ: ***Թեմա 12***՝ Մոդելների երանգավորում:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

*1-ին ստուգում.* Պրակտիկ աշխատանք՝ AUTOCAD-ով և/կամ 3Ds MAX-ով, կոորդինատային համակարգերի, խմբերի, բլոկների հետ աշխատանքներ, Միավորների քայլը 0.5 է:

*2-րդ ստուգում.* Պրակտիկ աշխատանք՝ 3D-եռաչափ գծագրերի, հատույթների պատրաստում, մոդելների երանգավորում: Միավորների քայլը 0.5 է:

**0404/B35.** *«ՄԱՐԿԵՏԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՆՅՈՒԹՈՎ »*-3 *(3 կրեդիտ)*
Շաբաթական՝ 3 ժամ *( 48 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *6–րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

*Պատրաստել ապագա դիզայներ-նախագծողներին սեփական նախագծերի մակետները պատրաստելու հմտությունների հետ:*

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

կտիրապետի մակետ պատրաստելու հմտություններին

կիասկանա ինչպես նախագիծը վերածել մակետի մասշտաբային չափերով

կկարողանա ստեղծել տարբեր նախագծերի մակետներ զանազան նյութերից՝ ստվարաթուղթ, ՊՎԽ, գիպս, պոլիէթիլեն, կավ, ապակի և այլն:

Բովանդակությունը.

Դիզայն-նախագիծ և համակարգչային գրաֆիկա առարկաների առաջադրանքներին զուգահեռաբար ստեղծել և նախագծել մակետներ՝ կենցաղային իր, սարք-սարքավորում, գիրք և այլն:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ-դիտում քննություններ, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0404/B36.** *«ԴԻԶԱՅՆԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ» -4 (5 կրեդիտ)*
Շաբաթական՝ 6 ժամ *(6 ժամ դասախոսություն, 90 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *6–րդ,  եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Պատրաստել դիզայներ-նախագծողներ, որոնք կնախագծեն  էլեկտրական սարք-սարքավորում, տաքացուցիչ , բազմաֆունկցիոնալ էլեկտրական կամ գազով ջեռուցման սարք-սարքավորումներ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի դիզայն-նախագծման էլեկտրական սարք-սարքավրումներ կամ տաքացուցիչներ նախագծելու հմտություններին
2. կիասկանա կենցաղային և էլեկտրական բարդ սարքավորումները հետազոտելու հմտությունները
3. կկարողանա ստեղծել նոր և հետաքրքիր լուծումներով էլեկտրական կամ գազով աշխատող ջեռուցման համակարգ:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Ուսումնասիրել առօրյայում առկա բազմաթիվ էլեկտրական կամ գազով աշատող սարք-սարքավորումները: ***Թեմա 2***՝ Նախագծել հետաքրքիր լուծումներով էլեկտրական սարք-սարքավրում կամ գազով աշխատող որևէ բազմաֆունկցիոնալ համակարգ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B37.** *«ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-7 *(6 կրեդիտ)*

Շաբաթական՝ 6 ժամ *(6 ժամ դասախոսություն, 90 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *7–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Գծանկարչության նպատակն է ինտենսիվ աշխատանք բնորդի հետ և օգտվելով կատարված աշխատանքների արդյունքներից ուսանողին ուղղորդել կոմպոզիցիայի ճիշտ և գրագետ կազմակերպման:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

3. Ուսումնասիրել մարդու ֆիզիկական դիրքերը՝ եւնելով նրա հոգեվիճակից:
4. Վերլուծել ստատիկ և դինամիկ վիճակներում գտնվող մարդու մարմնի պատկերման առանձնահատկությունները;

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Նկարել դիմանկար բնորդից կամ գիպսե գլուխ/Ա1,Ա2/:***Թեմա 2***՝ Պլեներ /Ա2,Ա3,Ա4/: ***Թեմա 3***՝ Բնորդ կամ գիպսե դիմաքանդակի պատկերում կոմպոզիցիոն նատյուրմորտի տեսքով /Ա1 ֆորմատ /:***Թեմա 4***՝ Պլեներ: ***Թեմա 5***՝ Նկարել բնորդ կամ գիպսե տորս/Ա1,Ա2/: ***Թեմա 6***՝ Պլեներ / կոմպոզիցիա

Ա2,Ա3,Ա4/: ***Թեմա 7՝*** Նկարել բնորդ կամ գիպսե ֆիգուրա /տարբեր գրաֆիկական նյութերի ուսումնասիրմամբ/Ա1,Ա2/:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B38.** *«ԳՈՒՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»*-7 *(5 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(4 ժամ դասախոսություն , 60 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *7-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Ուսանողների մոտ ձևավորել իրականությունը պատկերելու իրենց ուրույն ձեռագիրը, ոճը և վերաբերմունքը՝ որպես արտահայտչամիջոց ընտրելով կազմակերպված և իմաստավորված գույնը, որը տալիս է ոչ միայն իրականության ռեալ գունապատկերը, այլև օժտված է զգայական ներգործության մեծ ուժով: Զարգացնել ուսանողի ինքնուրույն գունազգացողությունը, գույնի և գծի փիլիսոփայությունը, գույնի միջոցով հույզ և տրամադրություն արտահայտելու ընդունակությունը, ձևավորել գեղագիտական բարձր ճաշակ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. կիմանա կերպարվեստի տարբեր տեսակների մասին,
5. կկարողանա զուգորդել գիծը և գույնը,
6. կկարողանա գույնով արտահայտել ճաշակ, ռիթմ, հույզ և տրամադրություն:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Նկարել նատյուրմորտ՝ փայտե իրերով, գրքերով, թղթերով, ջութակով, թռչնի խրտվիլակով, կարմիր և բաց գույնի երանգներով կտորների ծալքերով (Ա1,Ա2, գուաշ, ջրաներկ, յուղաներկ 50X60): ***Թեմա 2՝*** Պլեներ/կոմպոզիցիոն աշխատանք Ա2,Ա3,Ա4/: ***Թեմա 3՝*** Նկարել բնորդ կամ նատյուրմորտ՝ ծաղիկներով, սափորով, տնային բույսերով կիտրոնով գիպսե մարմնի և կտորի համադրությամբ (Ա1,Ա2, գուաշ, ջրաներկ, յուղաներկ 50X60): ***Թեմա 4՝*** Պլեներ: ***Թեմա 5՝*** Նկարել նատյուրմորտ՝ գիպսե գլխով, երաժշտական գործիքներով (շեփոր, ջութակ, քամանչա և այլն), բաց մոխրագույն կտորի ծալքերով (Ա1,Ա2, ջրաներկ,գուաշ, ակրիլ, յուղաներկ 50X60): ***Թեմա 6՝*** Կատարել կոմպոզիցիոն աշխատանք, դեկորատիվ մոտեցմամբ (Ա1,Ա2, ջրաներկ,գուաշ,ակրիլ, յուղաներկ 50X60):

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0403/B39.** ***«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ»*** *(2կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(8 ժամ դասախոսություն , 24 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *7–րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ*

***Նպատակը.***

Ուսանողին սովրեցնել ձևավորել նախագծային մասնագիտական պլանշետներ:Ուսանողի մոտ ձևավորել մտածողության նոր որակներ՝ տարածական երևակայական մտածելակերպ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1.կիմանա ձևակազմավորել նախագծային և մոդելավորման պլանշետներ,
2. կկարողանա կազել կահույքի և նրա խմբավորումների համալիր գծագրեր,
3.կտիրապետի գեղարվեստական իրերի խմբային նախագծման հիմտություններին և նրանց ցուցադրությունների ոճավորման առանձնահատկություններին:

Բովանդակությունը.
***Թեմա 1***՝ Նախագծային պլանշետների կազմում:***Թեմա 2՝*** Կահույքի և նրա խմբավորումների տեսքերի, համալիր գծագրերի, անհրաժեշտ հատույթների և կտրվածքների կառուցում: ***Թեմա 3***՝ Հանգույցների մասնատում և միացումների պարզաբանում՝ մեծ մասշտաբով առանձին պատկերելու միջոցով: ***Թեմա 4***՝՝ Տեխնիկական գծագրության հնարավորությունների ներդրում կերպարվեստի ստեղծագործական աշխատանքներում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 9 միավոր արժեքով:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 2.25 է:

***2-րդ ստուգում***: Գրավոր հարցում: Միավորների քայլը 2.25 է:

**0404/B40.** *«ՇՐԻՖՏ» (2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(4 ժամ դասախոսություն, 28 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *5–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Առարկայի ուսուցման նպատակն է հայկական տառերը հեռու պահել այլակերպումներից, հաշվի առնելով ժամանակակից տեխնիկական պահանջներն ու հարմարանքները և խուսափելով կրկնություններից, ապահովել էսթե-

տիկական և օպտիկական կողմը, ուսանողներին սովորեցնել տառերի և տառատեսակների կառուցման հիմնական օրենքները:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. կիմանա շրիֆտի կառուցման հատկանիշները և հորինվածքների դաշտը,
5. կծանոթանա հայ ծաղկողների մշակած տառաշարերին և կկարողանա նույնատիպ ոճով ստեղծել իր տառաշարը,
6. կկարողանա ստեղծել գեղարվեստական բարձր մակարդակի ժամանակակից պաստառներ:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Շրիֆտի կառուցման հատկանիշները, հորինվածքի դաշտ: Գրել և գծել հայկական այբուբենի տառատեսակները 3 և 5 շրիֆտով՝ Ա2 ֆորմատի վրա: ***Թեմա 2***՝ Ստանալ սեփական անվան ծավալային տեսքը հարթության, գույների և գծերի միջոցով՝ Ա3 ֆորմատի վրա: ***Թեմա 3***՝ Ստեղծել կոմբինացիա հայկական այբուբենի խառը դասավորվածությամբ՝ Ա2 ֆորմատի վրա: ***Թեմա 4***՝ Ձևավորել անվան առաջին տառերը (լոգոտիպ, բուսական զարդանախշեր, աղվեսատառեր, ստվերներ) և պատրաստել մակետը՝ Ա2 ֆորմատի վրա: ***Թեմա 5***՝ Բուսական և կենդանական տառատեսակներով գրել որևէ հայկական բանաստեղծություն և ձևավորել պաստառ: ***Թեմա 6***՝ Կատարել պատճենահանում հայկական միջնադարյան մանրանկարչության գլխատառերից:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 9 միավոր արժեքով:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Դիտում քննություն: Միավորների քայլը 2.25 է:

***2-րդ ստուգում*** : Դիտում քննություն :Միավորների քայլը 2.25 է:

Նախատեսված եզրափակիչ ստուգարք, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում–քննություն:

**0404/B41.** ***«ԱՐԽԻՏԵԿՏՈՆԻԿԱ»*** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(8 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *7–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

*Ծանոթանալ և ձեռք բերել գիտելիքներ արխիտեկտոնիկայի բնագավառում: Տիրապետել ճարտարապետական կոմպոզիցիայի կառուցման և նախագծման տեսական և գործնական հմտություններին:*

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ճարտարապետական կոմպոզիցիայի կառուցման մեխանիզմները

2. կծանոթանա երկրաչափական պատկերներով ճարտարապետական կոմպոզիցիային
3. կկարողանա ստեղծել հետաքրքիր ճարտարապետական կոմպոզիցիաներ երկրաչափական եռաչափ էլեմենտների պատկերներով

Բովանդակությունը.
***Թեմա 1*** Պատրաստել 30 հատ երկրաչափական որևէ էլեմենտի եռաչափ մակետ:
***Թեմա 2*** Թեմա 1-ում պատրաստված էլեմենտներով պատրաստել հետաքրքիր և դիզայներա-ճարտարապետական լուծումներով կոմպոզիցիաներ, որոնք կհիշեցնեն ճարտարապետական կառույցների: Ստեղծված յուրաքանչյուր կոմպոզիցիան ֆոտոնկարահանել և տպագրել: Ֆոտոների և կոմպոզիցիաների ընդհանուր քանակը՝ 30:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***
*Ընթացիկ քննություններ*
Նախատեսված են 1 ընթացիկ քննություն և 1 վերջնական դիտում-քննություն, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0404/B42.** *«ԴԻԶԱՅՆԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ»* **-5** *(7 կրեդիտ)*
Շաբաթական՝ 6 ժամ *(6 ժամ դասախոսություն, 90 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *7–րդ, եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*
Ուսանողին նախապատրաստել դիպլոմային աշխատանքին: Ճիշտ գտնելու և վերլուծելու դիզայնի ոլորտում առկա խնդիրները և ներկայացնել նախագիծ մասնագիտական հմտությունների կիրառմամբ:

***Կրթական արդյունքները***
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1. կիմանա դիզայնի ոլորտում առկա խնդիրները վեր հանելու և ուսումնասիրելու մեթոդները
2. կծանոթանա դիպլոմային աշխատանքի նախապատրաստմանը
3. կկարողանա դիզայն միջավայրում գտնել և հիմնավորել որևէ առարկայի կամ կոմպոզիցիայի թերությունները և առաջարկել ավելի արդիական և ֆունկցիոնալ նախագիծ

Բովանդակությունը.
Ընտրել դիպլոմային աշխատանքի թեմա: Կատարել ուսումնասիրություններ, վեր հանել առկա խնդիրներն ու էսքիզների միջոցով հիմնավորել դիպլոմային աշխատանքի ճիշտ ընտրությունը: Պատրաստել նաև ռեֆերատային աշխատանք խնդրի ուսումնասիրությունների և աշխատանքի էվոլյուցիայի վերաբերյալ:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

*Նախատեսված է 1 դիտում-քննություն եզրափակիչ գնահատմամբ: Գնահատման առավելագույն միավորը 18:*

**0404/B43.** *«ԴԻԶԱՅՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 3 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապ-մունքներ)*
Կիսամյակը՝ *7–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Ուսումնասիրել և տիրապետել տեսական դիզայնի նյութերին, ինչպես նաև դիզայնի համաշխարհային պատմությանը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա դիզայնի տարբեր տեսակների մասին, դիզայնի համաշխարհային պատմությանն ու տենդենցներին

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Դիզայն թեորայի առաջացումը: ***Թեմա 2՝*** Դիզայնի պատմությունը: Ոճեր: ***Թեմա 3՝*** Դիզայնի պատմության հետազոտությունները: ***Թեմա 4՝*** Բաուհաուսի դպրոց: ***Թեմա 5՝*** Համաշխարհային դիզայնի օրինակների վերլուծություն: ***Թեմա 6՝*** Ռեֆերատային աշխատանք:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0404/B44.** *«ԴԻԶԱՅՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» (2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապ-մունքներ)*
Կիսամյակը՝ *7–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

*Տիրապետել ժամանակակից դիզայնի հիմնախնդիրներին՝ տեսական և գործնական օրինակների ուսումնասիրման էվոլյուցաներին:*

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից դիզայնի հիմնախնդիրներին ու

համաշխարհային դիզայներական նմուշ հանդիսացող նախագծերի վերլուծությունները

2. կկարողանա առանձնացնել և բնութագրել Հայաստանի և համաշխարհային դիզայնի ժամանակակից օրինակների խնդիրների վերլուծությունն ու բնութագրումը:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** "Դիզայն" հասկացությունը": ***Թեմա 2՝*** Դիզայնի ֆունկցիան: ***Թեմա 3՝*** "ԷկոԴիզայն: ***Թեմա 5՝*** Ռեֆերատային աշխատանք

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0201/B45.** ***«ԴԻԶԱՅՆԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»*** *(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 6 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապ-մունքներ)*

Կիսամյակը՝ *8–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

*Ծանոթացնել դիզայն մենեջմենթ հասկացությանն ու դիզայներական գործունեության, ինչպես նաև կառավարման գործնական առանձնահատկություններին:*

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից դիզայնի կառավարման և օգտագործման գրականությունը:
2. կկարողանա բնութագրել և կիրառել դիզայն կառավարման հմտությունները սեփական նախագծերը բնութագրելուց և օրինակները վերլուծելուց:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Դիզայն մենեջմենթի պատմությունը: ***Թեմա 2՝*** Դիզայն կառավարումը ընկերություններում ***Թեմա 3՝*** Դիզայն կառավարման աստիճանները: ***Թեմա 5՝*** Դիզայն կառավարման և կազմակերպման ֆունկցիաները: ***Թեմա 5՝*** Դիզայն մենեջմենթը և լիդերությունը դիզայնում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0303/B46.** *«ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»* *(3 կրեդիտ)*
Շաբաթական՝ 8 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապ-մունքներ)*
Կիսամյակը՝ *8–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին ստեղծագործական գործընթացի օրինաչափությունների, ստեղծագործական մտածողության, ստեղ-ծագործության հոգեբանական տերմինոլոգիայի, ստեղծագործ անձի որակների, ստեղծագործականության (կրեատիվության) հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1.կիմանա և հնարավորություն ձեռք կբերի ուսումնասիրել ստեղծագոր-ծության մեխանիզմներն ու հիմքերը, մոտիվացիան,
2.ծանոթ կլինի ստեղծագործության հոգեբանական վերլուծության ձևերին,
3.կկարողանա հասկանալ, թե ինչպես կարելի է ներդաշնակորեն զարգաց-նել երեխաներին, սեփական հոգևոր կայացման ուղին:

Բովանդակությունը.

*Թեմա 1՝* Ստեղծագործության հոգեբանության առարկան, մեթոդները, այլ գիտակարգերի հետ: *Թեմա 2՝* Ստեղծագործությունը բացատրող հիմնական տեսությունները: Ստեղծագործության հիմնական ձևերը: *Թեմա 3՝* Գիտակցա-կանը, անգիտակցականը, ինկուբացիան և ինտուիցիան ստեղծագործական գոր-ծընթացում: *Թեմա 4՝* Գեղարվեստական ստեղծագործության հոգեբանություն: Ստեղծագործական գործընթաց: *Թեմա 5՝* Գեղարվեստական գործը որպես ար-վեստի կեցության ձև: Հերմենևտիկան և արվեստի ըմբռնումը: *Թեմա 6՝* Գեղար-վեստական ստեղծագործության վերլուծության մեթոդոլոգիան: *Թեմա 7՝* Գե-ղարվեստական ստեղծագործության ձևերը: *Թեմա 8՝* Ստեղծագործ անձի որակ-ները և ստեղծագործական ընդունակություններ: *Թեմա 9՝* Օժտվածություն: Տաղանդ: Հանճարեղություն: Հանճարեղությունը բացատրող տեսությունները: *Թեմա 10՝* Արվեստը որպես կատարսիս: Արտթերապիա: Անձի տրանսֆոր-մացիան գեղարվեստական ստեղծագործության մեջ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրա-քանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ համապատասխանաբար 3, 3, 2, 2 արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

## 3.4. Կամընտրական դասընթացներ

**0404/B47.** *«ՇՐՋԱՊԱՏԻ ԴԻՋԱՅՆ»* -1*(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական պարապ-մունքներ)*
Կիսամյակը՝ *3–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

*Ծանոթացնել շրջապատի կամ միջավայրի դիզայնի հիմնական տարրերին ու դրանց շրջանակներում մարդկությանը շրջապատող հիմնական խնդիրներին, որոնք մերօրյա համաշխարհային մարտահրավերներից են:*

Կրթական արդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1. կիմանա մարդկությանը շրջապատող դիզայներական լուծումներ պահանջող հիմնախնդիրները
2. կկարողանա բնութագրել և վերլուծել շրջապատի կամ միջավայրի դիզայնի հետ կապված համաշխարհային խնդրահարույց օրինակները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ներածություն: Շրջակա միջավայրի դիզայն. ա/ համաշխարհային անտոտվածություն, բ/ էկոլոգիա, գ/ բնակեցում կամ վերաբնակեցում դ/միգրացիա ե/պատերազմներ զ/օրենքի գերակայություն կամ պետական մակարդակի վերահսկողություն ***Թեմա 2՝*** Լանդշաֆտային դիզայնը քաղաքային միջավայրում ***Թեմա 3՝*** Ռեֆերատի պատրաստում շրջակա միջավայրի որևէ տեղական կամ համաշխարհային խնդրի վերաբերյալ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0105/B47.** ***«ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ »*** -1*(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական պարապ-մունքներ)*
Կիսամյակը՝ *3–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Ուսանողին ծանոթացնել օրգանական նյութերի՝ կաուչուկների, պլաստմասաների, պոլիէթիլենային, պոլիստիրոլային,պոլիպրոպիլենային թաղանթների և սոպոլիմերային նյութերի,տեֆլոնի, վիքսինի, պոլիվինիլի քլորիդային նյութերի ստացման եղանակների, հատկությունների և օգտագործման բնագավառների /հատկապես դիզայներական աշխատանքների բնագավառում/ հետ:

Կրթական արդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1. կծանոթանա սինթետիկ ծագումով օրգանական նյութերի, իրերի ստացման եղանակներին,
2. կծանոթանա օրգանական նյութերի, իրերի հատկությունների և օգտագործման բնագավառներին,

3. կկարողանա իր աշխատանքների համար ընտրել համապատասխան տեսակի և որակի օրգանական նյութեր,իրեր:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Առարկան ու նրա նշանակությունը:Հասկացություն օրգանական նյութեր ստացման, նրանց տեսակների կիրառման բնագավառների մասին:***Թեմա 2՝*** Ացետիլենից ստացված օրգանական նյութերի տեսակները և նրանց օգտագործման բնագավառները:***Թեմա 3՝*** Կաուչուկներ, նրանց հատկությունները ու օգտագործման բնագավառները:***Թեմա 4՝*** Պոլիէթիլենի ստացումը, տեսակները և կիրառությունը: **Թեմա 5՝** Հարվածադիմացկուն պոլիստիրոլ: ***Թեմա 6՝*** Պոլիամիդներ: ***Թեմա 7՝*** Պոլիմեթիլմեթակրիլատ՝ օրգանական ապակին նրա տեսակները և կիրառությունը դիզայներական աշխատանքներում և տեխնիկայում: ***Թեմա 8՝*** Վիքսինետ, նրա տեսակները և կիրառությունը քանդակաստեղծման, ձոիլավորման հետ պատրաստելու և շինարարական աշխատանքներում: ***Թեմա 9՝*** Պոլիէթիլենտերեֆտալատ, նրա ստացումը և կիրառությունը ռադիոմասերի,թելերի,պարանների և այլ շինարարական մատերիալների պատրաստման ասպարեզում: ***Թեմա 10՝*** Պոլիտետրաֆտորէթիլեն կիրառությունը դիզայներական աշխատանքներում և տեխնիկայում:***Թեմա11՝*** Պոլիէթիլենօքսիդ նրա տեսակները և կիրառությունը կաշվի և փայտի մշակման համար նիտրոցելյուլյոզաների լուսադիմացկունություն բարձրացնելու համար:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0404/B48.** ***«ՇՐՋԱՊԱՏԻ ԴԻԶԱՅՆ»*** **-2***(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

*Ծանոթացնել շրջապատի կամ միջավայրի դիզայնի հիմնական տարրերին և տեսակներին, դրանց հիմնական խնդիրներին՝ ուսումնասիրելով դրանց լուծման հիմնական մեթոդները:*

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա շրջապատի դիզայնի խնդիրները հաղթահարելու հիմնական տեսական և գործնական մեթոդները
2. կկարողանա հիմնովին վերհանել, բնութագրել շրջապատի դիզայնի խնդիրներն ու ներկայացնել դրանք լուծման նպատակահարմար տարբերակները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Շրջապատի դիզայնի խնդիրների որոնման մեթոդիկան ***Թեմա 2՝***

կենցաղային իրերի էրգոնոմիկական խնդիրները ***Թեմա 3՝*** Ճարտարապետական կառույցները շրջապատում ***Թեմա 4՝*** *Շրջակա միջավայրի դիզայնը Հայաստանում* ***Թեմա 5՝*** Ռեֆերատի պատրաստում Հայաստանում գտնվող որևէ տարածքի, կառույցի կամ լանդշաֆտի ուսումնասիրություն, խնդիրների վերհանում և լուծման իրական տարբերակների մշակում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0105/B48.** ***«ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ »*** **-2***(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Ուսանողին ծանոթացնել սինթետիկ ճանապարհով ստացված օրգանական նյութերի՝ պոլիվինիլկարբազոլների,պոլիվինիլ պիրոլիդոնի, պոլիակրիլատների, վինիլէքսի, ամինոպլաստների, պոլիիզոբութելենի,պոլիկապրոլակտամի, սիլիկաօրգանական պոլիմերային նյութերի հետ, որոնք լայն կիրառություն են գտել տեխնիկայում,ժողտնտեսությունում և հատկապես դիզայներական աշխատանքներում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կծանոթանա սինթետիկ պոլիմերային և ոտպոլիմերային նյութերի ստացման եղանակներին,
2. կծանոթանա սինթետիկ օրգանական բազմաթիվ նոր նյութերի հատկություններին և կիրառությանը,
3. կկարողանա իր դիզայներական աշխատանքների համար ընտրել համապատասխան
   նյութեր նպատակային հատկություններով:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Պոլիվինիլիդենքլորիդ, նրա տեսակները և կիրառությունը մետաղյա իրերի,քիմիապես կայուն իրերի զարդերի տարաների պատրաստման համար:***Թեմա2՝***Պոլիվինիլկարբազոլ, նրա հատկությունները և կիրառությունը ռադիո և էլետրասարքավորումների, զարդերի և քիմիապես կայուն սարքավորումների պատրաստման համար:***Թեմա3՝***Պոլիվինիլ պիրոլիդոն նրա հատկությունները և կիրառությունը դիզայներական աշխատանքներում,դեղագործության շղթաների և ատամի պաստաների պատրաստման բնագավառում:***Թեմա 4՝*** Պոլիվինիլ սպիրտ,հատկությունները և օգտագործումը տնտեսական և շինարարական իրերի, լուսադիմացկուն թաղանթների պատրաստման ժամանակ:**Թեմա5՝**Պոլիակրիլատներ նրանց հատկությունները և կիրառությունը, հատուկ դիմացկուն ապակի և

արհեստական կաշի ստանալու համար: ***Թեմա 6՝*** Վինիֆլեկս, նրա կիրառությունը էլեկտրամեկուսիչ, լաքերի պատրաստման ապարեզում:***Թեմա7՝*** Ամինոպլաստներ, նրանց կիրառությունը դիզայներական աշխատանքներում և ժողտնտեսության սարքավորումների պատրաստման համար: ***Թեմա 8՝*** Պոլիակրիլոնիտրիլ, նրա օգտագործման բնագավառները /ջերմա և ցրտադիմացկուն/ շինարարական զարդեր պատրաստելու համար:***Թեմա 9՝*** Պոլիացեննաֆտիլեն, օգտագործվում է բազմատեսակ ջերմադիմացկուն սոպոլիմեր ստանալու համար,որոնք լայն կիրառություն ունեն տեխնոլոգիայում և շինարարության մեջ: ***Թեմա 10՝*** Պոլիիզոբութիլեն, նրա հատկությունները և կիրառությունը բանձրորակ քուքների յուղերի պատրաստման և էլեկտրամեկուսիչների պատրաստման համար: ***Թեմա11՝*** Պոլիկապրոլակտամ, նրա կիրառությունը ավտոմասերի պատրաստման համար,թելերի և արհեստական կաշվի ստացման համար,տարաների պատրաստման համար:***Թեմա12՝***Սիլիկաօրգանական պոլիմերներպոլիմերային հեղուկներ, պոլիմերային խեժեր, էլաստոմերներ /կաուչուկներ/ նրանց կիրառությունը տեխնիկայում և ժողտնտեսությունում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0404/B49.** ***«ԿԵՐԱՄԻԿԱՅԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ»*** -1*(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(8 ժամ դասախոսություն, 24 ժամ զործնական պարապ-մունքներ)*
Կիսամյակը՝ *5–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Սովորեցնել ուսանողներին սեփական էսքիզների հիման վրա պատրաստել կենցաղային օգտագործման իրեր թրծված կավից՝օգտագործելով նախկին տարիներում ուսումնասիրած կոմպոզիցիայի հիմունքների, գրաֆիկական ձևավորման ու նյութի հետ աշխատելու փորձը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա կենցաղային խոհանոցային իրեր էսքիզավորելու, նախագծելու, նյութից պատրաստելու և դրանց գրաֆիկական տեսք հաղորդելու հմտություններ:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Կեռամիկական նախագծերի ուսումնասիրում: Թրծած կավով իրերի պատրաստման ուսումնասիրում: Ուսումնասիրությունները ներկայացնել ռեֆերատի տեսքով: ***Թեմա 2 ՝*** Դեկորատիվ էլեմենտներով բաժակի էսքիզ-

նախագիծ ***Թեմա 3՝*** Նախագծի հիման վրա առարկայի պատրաստումը կավով՝օգտագործելով դեկորատիվ զարդանախշեր թե նյութով և թե գույնով: ***Թեմա 4՝*** Դեկորատիվ էլեմենտներով ափսեի էսքիզ-նախագիծ ***Թեմա 5՝*** Նախագծի հիման վրա առարկայի պատրաստումը կավով՝օգտագործելով դեկորատիվ զարդանախշեր թե նյութով, և թե գույնով: Ընդ որում այս թեմայում պատրաստվող իրը. տվյալ դեպքում ափսեն, ոճով և գունային ձևավորումներով պետք է համահունչ լինի Թեմա 2-ում նախագծված և պատրաստած բաժակին:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0404/B49.** *«ԳՈՒՆԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(8 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *5–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Առարկայի ուսուցման նպատակն է ուսումնասիրել և բացահայտել գույնի երևույթը: Ստացած գիտելիքները օգտագործել նկարչական վարպետության և ընդհանուր գեղարվեստական մշակույթի բարձրացման համար:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գույնի հատկությունները,
2. կկարողանա աշխատել մեկ գույնի տարբեր տոներով ու երանգներով,
3. կիմանա սպեկտրի գունային հաջորդականությունը:

Բովանդակությունը.

***Թեմա 1***՝ Գունատեսություն՝գեղանկարչության հիմքերը: Ընդհանուր տեղեկություն գույնի մասին: Գույնի ֆիզիկական հիմքերը: Առարկան: ***Թեմա 2***՝ Գունային սպեկտր՝ լուսապատկերներ: Գունային շրջան: Բնական գույների շրջանը Գյոթեի եղանակով: Գունային սպեկտոր: ***Թեմա 3***՝ Քրոմատիկ և աքրոմատիկ գույներ: Ակտիվ և պասիվ գույներ: Երեք երկրաչափական մարմիններով /եռանկյուն, շրջան, քառակուսի/ թղթի ամբողջ մակերեսով ստեղծել կոմպոզիցիա: ***Թեմա 4***՝ Գույնի ընկալում: Ինչպես է մարդու վրա ազդում գույնը: Որոշակի գույների հոգեբանական և ֆիզիկական ազդեցությունը երկար օգտագործելու ժամանակ: Լուսապատկեր և երանգ: Երանգ: Շրջանագծից գույնի օգնությամբ ստանալ գունդ:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 9 միավոր արժեքով:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Դիտում քննություն: Միավորների քայլը 2.25 է:

***2-րդ ստուգում.*** : Դիտում քննություն :Միավորների քայլը 2.25 է:

Նախատեսված եզրափակիչ ստուգարք, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում–քննություն:

**0404/B50.** *«ԿԵՐԱՄԻԿԱՅԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ»* -2*(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(8 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *6–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Սովորեցնել ուսանողներին սեփական էսքիզների հիման վրա պատրաստել կենցաղային օգտագործման իրեր թրծված կավից՝օգտագործելով նախկին տարիներում ուսումնասիրած կոմպոզիցիայի հիմունքների, գրաֆիկական ձևավորման ու նյութի հետ աշխատելու փորձը: Խորացնել գիտելիքները նույն ոճով սպասք նախագծելու և թրծած կավից կամ կերամիկական նյութից պատրաստելու մեջ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա կենցաղային խոհանոցային իրերի խումբ էսքիզավորելու, նախագծելու, նյութից պատրաստելու և դրանց գրաֆիկական տեսք հաղորդելու հմտություններ:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Խոհանոցային կամ ճաշասենյակային սպասքի հավաքացուի էսքիզային-նախագիծ ***Թեմա 2՝*** Նախագծի մշակում նյութով: Ընդ որում նախագիծը պետք է պարունակի առնվազն 3 էլեմենտ. օրինակ սկուտեղ, խորը ափսե, գավաթ: Նախագիծը պետք է ներկայացվի վերջնական տեսքով գրաֆիկական ձևավորմամբ՝օգտագործված գրաֆիկական կամ դեկորատիվ տարրերով: ***Թեմա 3՝*** Ազատ թեմա հետևյալ նյութերից՝թրծած կավ, կերամիկական նյութ, մշակվող քար, ապակի:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

**0404/B50.** *«ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»-(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(8 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *6–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*
Պատրաստել հմուտ և վարժ գեղարվեստական լուսանկարիչներ:

***Կրթական արդյունքները***
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1. կիմանա ֆոտոսարքերի տեսակները և դրանց օգտագործման հնարավորությունները
2. կկարողանա ժամանակակից ֆոտոսարքերով կատարել գեղարվեստական ֆոտոնկարահանումներ
3. կիմանա ֆոտոյի պատմությունն ու համաշխարհային հայտնի ֆոտոնկարիչներին:

Բովանդակությունը.
***Թեմա 1***՝ Ֆոտոսարքերի-սարքավորումների տեսակները: ***Թեմա 2***՝ Գեղարվեստական լուսանկարչության ուսումնասիրություն՝ տեսական և գործնական: ***Թեմա 3***՝ Գեղարվեստական լուսանկարչության առաջադրանքներ՝ քաղաքային, ինտերիերային և այլն: ***Թեմա 4***՝ Գեղարվեստական լուսանկարչությունը ինտերնետում, մամուլում, գրքերում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***
*Ընթացիկ քննություններ*
Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

## 4. ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՄՈԴՈՒԼՆԵՐ

### 4.1. «Կիրառական արվեստ» մասնագիտություն

*Ուսումնական պրակտիկա –1 (2 կրեդիտ)*
*2 շաբաթ տևողությամբ, 2–րդ կիսամյակ, ստուգարք*
*Նպատակը.*
Պրակտիկայի նպատակն է բնության ձևերի ուսումնասիրությունը: Ուսանողները կուսումնասիրեն բնության էլեմենտները, դրանց համատեղումները, փոխհարաբերությունները, նույն էլեմենտի տարբեր տարիքային առանձնահատկությունները և կատարեն ճեպանկարներ: Հավաքված նյութերից մշակել և ստեղծել զարդանախշեր կարպետի, գորգի, ասեղնագործության և հեյունագործության համար:

***Կրթական արդյունքները.***
Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.
1. կկարողանա արագ ու հմտորեն կատարել ճեպանկարներ,

2. կկարողանա աշխատել տարբեր միջոցներով (մատիտ, կավիճ, ածուխ, սանգինա, գրիչ),
3. կկարողանա ոճավորել ճեպանկարները՝ էսքիզներում օգտագործելու համար:

***ՈՒսումնական պրակտիկա – 2*** *(2 կրեդիտ)*
*1 շաբաթ տևողությամբ, 4–րդ կիսամյակ, ստուգարք*
*Նպատակը.*

ՈՒսումնառության ընթացքում ուսանողը կարողանա աշխատել պլեներում՝ սկսելով կարճատև գունային էտյուդներից, աստիճանաբար անցնելով ամբողջական բնանկարների:

***Կրթական արդյունքները.***

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.
1. կկարողանա ընտրել տարբեր տեխնիկական միջոցներ (ջրաներկ, գուաշ, յուղաներկ)՝ ցանկալի արդյունք ստանալու համար,
2. կկարողանա ուսումնասիրել լույսի ազդեցությունը օբյեկտի վրա օրվա տարբեր ժամերին,
3. կկարողանա ստեղծել բնանկարներ:

***ՈՒսումնական պրակտիկա – 3*** *(2 կրեդիտ)*
*1 շաբաթ տևողությամբ, 8–րդ կիսամյակ, ստուգարք*
*Նպատակը.*

***Արտադրական պրակտիկա*** *(2 կրեդիտ)*
*1 շաբաթ տևողությամբ, 6–րդ կիսամյակ, ստուգարք*
*Նպատակը.*

Պրակտիկայի նպատակն է ուսումնառության ընթացքում ուսանողի ստացած գիտելիքների ստուգումը և դրանց կիրառումը արտադրության մեջ:

***Կրթական արդյունքները.***

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.
1. կկարողանա ծանոթանալ արտադրական պրոցեսին՝գործնականորեն կիրառելով ստացած տեսական, մասնագիտական գիտելիքները,
2. կկարողանա խորացնել ստացած տեսական, մասնագիտական գիտելիքները:

***Կուրսային աշխատանք – 1*** *(2 կրեդիտ)*
*4–րդ կիսամյակ, հանրագումարային*
*Նպատակը.*

***Կուրսային աշխատանք – 2*** *(2 կրեդիտ)*
*6–րդ կիսամյակ, հանրագումարային*
*Նպատակը.*

***Ամփոփիչ ավարտական քննություն*** *(4 կրեդիտ)*

*8–րդ կիսամյակ, հանրագումարային քննություն*

***Ավարտական աշխատանք*** *(20 կրեդիտ)*
*8–րդ կիսամյակ, հանրագումարային քննություն*

## 4.2. «Դիզայն » մասնագիտություն

***Ուսումնական պրակտիկա –1*** *(2 կրեդիտ)*
*2 շաբաթ տևողությամբ, 2–րդ կիսամյակ, ստուգարք*
*Նպատակը.*

Պրակտիկայի նպատակն է բնության ձևերի ուսումնասիրությունը: Ուսանողները կուսումնասիրեն բնության էլեմենտները, դրանց համատեղումները, փոխհարաբերությունները, նույն էլեմենտի տարբեր տարիքային առանձնահատկությունները և կատարեն ճեպանկարներ: Հավաքված նյութերից մշակել և ստեղծել զարդանախշեր կարպետի, գորգի, ասեղնագործության և հելյունագործության համար:

***Կրթական արդյունքները.***
Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.

4. կկարողանա արագ ու հմտորեն կատարել ճեպանկարներ,
5. կկարողանա աշխատել տարբեր միջոցներով (մատիտ, կավիճ, ածուխ, սանգինա, գրիչ),
6. կկարողանա ոճավորել ճեպանկարները՝ էսքիզներում օգտագործելու համար:

***Ուսումնական պրակտիկա – 2*** *(2 կրեդիտ)*
*1 շաբաթ տևողությամբ, 4–րդ կիսամյակ, ստուգարք*
*Նպատակը.*

Ուսումնառության ընթացքում ուսանողը կարողանա աշխատել պլեներում՝ սկսելով կարճատև գունային էտյուդներից, աստիճանաբար անցնելով ամբողջական բնանկարների:

***Կրթական արդյունքները.***
Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.

1.կկարողանա ընտրել տարբեր տեխնիկական միջոցներ (ջրաներկ, գուաշ, յուղաներկ)՝ ցանկալի արդյունք ստանալու համար,
2.կկարողանա ուսումնասիրել լույսի ազդեցությունը օբյեկտի վրա օրվա տարբեր ժամերին,
3.կկարողանա ստեղծել բնանկարներ:

***Արտադրական պրակտիկա*** *(2 կրեդիտ)*
*1 շաբաթ տևողությամբ, 6–րդ կիսամյակ, ստուգարք*
*Նպատակը.*

Պրակտիկայի նպատակն է ուսումնառության ընթացքում ուսանողի ստացած գիտելիքների ստուգումը և դրանց կիրառումը արտադրության մեջ:

***Կրթական արդյունքները.***

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.

1.կկարողանա ծանոթանալ արտադրական պրոցեսին՝ գործնականորեն կիրառելով ստացած տեսական, մասնագիտական գիտելիքները,

2.կկարողանա խորացնել ստացած տեսական, մասնագիտական գիտելիքները:

***Կուրսային աշխատանք*** *(2 կրեդիտ)*
*6–րդ կիսամյակ, հանրագումարային*
*Նպատակը.*

***Ամփոփիչ ավարտական քննություն*** *(4 կրեդիտ)*
*8–րդ կիսամյակ, հանրագումարային քննություն*

***Ավարտական աշխատանք*** *(20 կրեդիտ)*
*8–րդ կիսամյակ, հանրագումարային քննություն*

# ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## Մաս I.

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Կիրառական արվեստի ֆակուլտետը մագիստրոսի կրթական մակարդակում կազմակերպում է ուսուցում ,, Կիրառական արվեստ ,, ծրագրով.

### 3. ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Մագիստրոսի պատրաստման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասերից՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են նախանշված ուսումնական

կիսամյակներում ուսումնական և հետազոտական կառուցամասերի կրեդիտներով արտահայտված ծավալների հետևյալ համամասնությամբ.

***«Կիրառական արվեստ» մասնագիտություն***

| ԿՐԹԱՄԱՍ | ԿՐԵԴԻՏՆԵՐ | ԴԱՍԸՆԹԱՑ – ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ |
|---|---|---|
| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ | | |
| Լրացական դասընթացներ | 0 | 2 |
| Ընդհանուր կրթամաս | 6 | **2** |
| Մասնագիտական պարտադիր կրթամաս | 57 | 14 |
| Կամընտրական դասընթացներ | 9 | 6 |
| ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ | | |
| Գիտական սեմինար | 12 | 4 |
| Գիտահետազոտական աշխատանք | 18 | 3 |
| Գիտահետազոտական պրակտիկա | 3 | 1 |
| Գիտամանկավարժական պրակտիկա | 3 | 1 |
| Մագիստրոսի ատենախոսության պաշտպանություն | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 120 | 34 |

| Կիսամյակ | I | II | III | IV | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| Ուսումնական կառուցամաս,կրեդիտ | 27 | 24 | 21 | 0 | 72 |
| Հետազոտական կառուցամաս,կրեդիտ | 3 | 6 | 9 | 30 | 48 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ, կրեդիտ** | 30 | 30 | 30 | 30 | 120 |

Ուսումնական կիսամյակի համար սահմանված է 20-շաբաթյա տևողությունը, որից 16-ը հատկացվում է տեսական ուսուցման, իսկ 4-ը՝ քննաշրջանին: Ծրագրի առաջին երեք կիսամյակների սկզբում մեկ շաբաթ հատկացվում է մագիստրանտի անհատական ուսումնական ծրագրի ձևավորմանը:

Ուսանողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունը կազմում է 1,5 կրեդիտ (24 կրեդիտ / 16 շաբաթ = 1,5),կամ 45 ժամ, իսկ ուսումնական կրեդիտի ժամային համարժեքը՝1 կրեդիտ = 30 ժամ: Ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատածավալը համապատասխանում է 120 կրեդիտի:

## 4. ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### Ուսումնական կառուցվածք

Ծրագրի ընդհանուր կառուցվածքը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝ **լրացական դասընթացներ, ընդհանուր կրթամաս, մասնագիտական պարտադիր կրթամաս և կամընտրական դասընթացներ:** Առաջին երկուսը ծառայում են մագիստրոսի կրթական աստիճանի ընդհանուր հենքի ապահովումը կամ համալրմանը, երրորդ կրթամասը կազմում է մագիստրոսի ծրագրի բովանդակային էությունը, որն ապահովում է մասնագիտական գիտելիքների և կարողությունների անհրաժեշտ հենքը, իսկ չորրորդը՝ ծրագրի անհատականացված ուսուցման մասն է:

### Լրացական դասընթացներ

Լրացական դաընթացների բաղադրիչն ուղղված է նախորդ կրթական աստիճանի պահանջներն անհրաժեշտության դեպքում լրացնելուն (մասնագիտության փոփոխության դեպքում կամ օտար լեզուների իմացության ոլորտում): Նկատի ունենալով մագիստրոսների՝ մասնագիտական և հետազոտական աշխատուժի միջազգային շուկայում ազատ տեղաշարժն ու պահանջվածությունն ապահովելու անհրաժեշտությունը, որպես պարտադիր լրացական դասընթաց՝ ծրագրում ընդգրկված է անգլերենը: Մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, գիտական ղեկավարի երաշխավորությամբ ուսանողի անհատական ուսումնական պլանում որպես լրացական դասընթաց կարող է ներառվել նաև օտար այլ լեզու: Բաղադրիչը յուրաքանչյուր մագիստրոսական ծրագրում նախատեսվում է մինչև 3 լրացական դասընթացի առկայություն: Լրացական դասընթացները կրեդիտատար չեն:

***«Կիրառական արվեստ» մասնագիտություն***

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրե-դիտ | Լսարանային ժամ (դ/գ/ս/լ)[14] | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|---|---|---|---|---|---|
| 1602/B01 | *Անգլերն լեզու* | *0* | *64* | *1* | *ստուգարք* |
| | *Լրացուցիչ նշանակվող* | *2* | *32(24/0/8/0)* | *1* | *ստուգարք* |
| | *Դասընթաց/կոմպոզիցիա-2 –րդ մակարդակ/* | | | | |

### Ընդհանուր դասընթացների կրթամաս

Ընդհանուր կրթամասի աշխատածավալը 6 կրեդիտ է: Ընդհանուր դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը ապահովելուն: Այն ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաները

[14] Այսուհետ՝ *դ* - դասախոսություն, *գ* - *գործնական, ս - սեմինար պարապմունք, լ* - լաբորատոր աշխատանք:

մասնագիտական հետազոտություններում» և «Մասնագիտության արդիական հիմնախնդիրները»: Առանձին դեպքերում, մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, մասնագիտական *պարտադիր կրթամասին* հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է նաև ընդհանուր այլ դասընթացներ:

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրե-դիտ | Լսարանային ժամ (դ/գ/ս/լ) | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|---|---|---|---|---|---|
| 0101/M00 | *Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում* | *3* | *4/28/0* | *1* | *Քննություն* |
| *0402/* M00 | *Մասնագիտության արդիական հիմնախնդիրները* | *3* | *32/0/0* | *1* | *Քննություն* |

**Մասնագիտական պարտադիր կրթամաս**

Մասնագիտական պատադիր կրթամասն ընդգրկում է 8-ից մինչև 16՝ երեք կամ վեց կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթացներ: Կրթամասի ընդհանուր աշխատածավալը ծրագրում սահմանված է 57 կրեդիտ: Սա մագիստրոսական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

Մագիստրոսական ծրագիր՝

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրե-դիտ | Լսարանային ժամ (դ/գ/ս/լ) | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|---|---|---|---|---|---|
| 0402/M | *Կոմպոզիցիա-1* | *9* | *0/64/0* | *1* | *Քննություն* |
| *0402/*M | *Աշխատանք նյութի վրա-1* | *9* | *0/64/0* | *1* | *Քննություն* |
| *0101/*M | *Համակարգչային նախագծում-1* | *3* | *8/0/24* | *1* | *Քննություն* |
| *0402/*M | *Կոմպոզիցիա-2* | *8* | *0/64/0* | *2* | *Քննություն* |
| *0402/*M | *Աշխատանք նյութի վրա-2* | *8* | *0/64/0* | *2* | *Քննություն* |
| *0101/*M | *Համակարգչային նախագծում-2* | *3* | *8/0/24* | *2* | *Քննություն* |
| *0402/*M | *Դասավանդման մեթոդիկա* | *2* | *24/8/0* | *2* | *Քննություն* |
| *0402/*M | *Կոմպոզիցիա-3* | *6* | *0/64/0* | *3* | *Քննություն* |
| *0402/*M | *Աշխատանք նյութի վրա-3* | *6* | *0/64/0* | *3* | *Քննություն* |
| *0202/*M | *Կիրառական արվեստի պատմություն* | | *24/8/0* | *3* | *Քննություն* |

**Կամընտրական դասընթացներ**

Կամընտրական դասընթացներն ընտրվում են ԵՊՀ այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու ավարտական ատենախոսությունը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատածավալը ծրագրում սահմանափակված է 9 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջդիսցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 2-ից մինչև 4-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատածավալը պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի;

Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

Մագիստրոսական ծրագիր՝

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրե-դիտ | Լսարանային ժամ (դ/գ/ս/լ) | Կիսամյակ | Գնահատ-ման ձևը |
|---|---|---|---|---|---|
| 0402/M | *Արխիտեկտոնիկա և էրգոնամիկա* | *3* | *16/16/0* | *2* | *Քննություն* |
| 0402/M | *Հեռանկարչություն* | *3* | *16/16/0* | *2* | *Քննություն* |
| 0402/M | *Արվեստի ոլորտի կառա-վարում* | *3* | *32/0/0* | *3* | *Քննություն* |
| 0402/M | *Դիցաբանություն* | *3* | *32/0/0* | *3* | *Քննություն* |
| 0402/M | *Գեղագիտություն* | *3* | *32/0/0* | *3* | *Քննություն* |
| 0402/M | *Խորհրդանիշը արվեստում* | *3* | *32/0/0* | *3* | *Քննություն* |

### a. Հետազոտական կառուցամաս

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ **գիտական սեմինար, գիտահետազոտական աշխատանք, գիտահետազոտական պրակտիկա ,** և **մագիստրոսական ատենախոսություն:**

***Գիտական սեմինարը*** ծրագիրն իրականացնող կառույցի ( ֆակուլտետ, ամբիոն, կենտրոն և այլն) կողմից կազմակերպվող կանոնավոր գործող սեմինարների շարք է , որի կայացման ժամանակացույցը սահմանվում է մագիստրոսական ծրագրի տվյալ կիսամյակի դասացուցակով: Գիտական սեմինարի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու հմտություններ :

***Գիտահետազոտական աշխատանքի*** բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական ատենախոսության թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն

կազմակերպվում է ուսումնառության 2-րդ, 3-րդ և 4-րդ կիսամյակներում՝ ընդհանուր 18 կրեդիտ աշխատածավալով :

***Գիտահետազոտական պրակտիկան*** կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ արվեստանոցի գիտական թեմաների շրջանակներում: Ունի 3 կրեդիտ աշխատածավալ :

***Գիտահետազոտական պրակտիկան*** կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Նախատեսվում է բակալավրիատում սեմինարների և գործնական պարապմունքների անցկացում, կուրսային աշխատանքների գրախոսում: Այն ևս ունի 3 կրեդիտ աշխատածավալ :

***Մագիստրոսական ատենախոսության*** կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է , որն իրականացվում է 4-րդ կիսամյակում: Ատենախոսության կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 12 կրեդիտ աշխատածավալ :

# Մաս II.

# ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

## ՏԵՂԵԿԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

*Դասընթացների տեղեկագիրքը* նախատեսված է կիրառական արվեստի ֆակուլտետում իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես առանձին մասնագիտությունների ուսումնական ծրագրերի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

**Լրացական դասընթացներ**
«*Անգլերեն լեզու* » (0 կրեդիտ )
Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ,ստուգարք

**Նպատակը.**
Դասընթացի նպատակն է ուսուցանել ակադեմիական անգլերեն կիրառական արվեստի ֆակուլտետում:
**Կրթական արդյունքները.**
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1. կտիրապետի գրավոր և բանավոր խոսքին՝ արվեստի աշխարհի հետ ազատ շփվելու համար,
2. կկարողանա մասնագիտական երկխոսության մեջ մտնել օտարերկրացի գործընկերների հետ,
3. կկարողանա պատշաճ մակարդակով մասնագիտական զեկուցում պատրաստել և մասնակցել միջազգային ցուցահանդեսներին:

**Բովանդակությունը**
***Թեմա 1՝*** Գրավոր խոսքի զարգացում, համառոտագրության ուսուցում: ***Թեմա 2՝***Միջազգային ցուցահանդեսների համար զեկուցում պատրաստելու հիմնական դրույթները: ***Թեմա 3՝*** Արվեստի մասին բանավեճի մասնակցելու տեխնիկայի ուսուցում:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***
Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

«*Ստեղծագործական հոգեբանություն* » (0 կրեդիտ )
Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ,ստուգարք

**Նպատակը.**
Դասընթացի նպատակն է մագիստրոսների մոտ ձևավորել պատկերացում ստեղծագործական հոգեբանության տեսական հիմնահարցերի մասին, բացահայտել նրանց ստեղծագործական ընդունակությունները հոգեբանական թեստերի կիրառման միջոցով. քննարկել անձի հոգեբանական առանձնահատկությունները ստեղծագործական գործընթացում: Վերլուծել արվեստի ոլորտում տաղանդաշատ և հանճարեղ մարդկանց ստեղծագործությունները և հոգեբանական առանձնահատկությունները:
**Կրթական արդյունքները.**
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1.կծանոթանա ստեղծագործական հոգեբանության առարկայի հիմնախնդիրների սկզբունքներին,
2.կկարողանա զարգացնել ստեղծագործական կարողությունները ու հմտությունները, ապահովել հոգեկան առողջությանը:

**Բովանդակությունը**
***Թեմա 1՝*** Ստեղծագործական հոգեբանության ներածություն: ***Թեմա 2՝***Հոգեկան երևույթների ստեղծագործական բնույթ: ***Թեմա 3՝*** Ստեղծագործությունը որպես անձի գործունեություն: ***Թեմա 4՝***Ստեղծագործող անձի հոգեբանական առանձնահատկությունները: ***Թեմա 5՝*** Արվեստը որպես կատարսիս:

*Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

## Ընդհանուր դասընթացներ

«***Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում***» (3 կրեդիտ )
Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ,քննություն

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պատկերացում էլեկտրոնային ինֆորմացիայի հավաքման, առաքման և պահպանման արվեստի մասին և սովորեցնել սեփական մասնագիտական հետազոտություններն էլ.փոստով և լոկալ ցանցի միջոցով համատեղ քննարկել, նրանց ներկայացնել կոշտ կրիչի վրա, այլ աղբյուրներից ինֆորմացիան տեղափոխել համակարգիչ, պատրաստել ներկայացումներ/ պրենզենտացիա/:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1.կկարողանա տեղեկատվական դաշտում կողմնորոշվել, կատարել նպատակային փնտրումներ,

2. փնտրումների ընթացքում կզարգանա դիտողականությունը, բացի բուն նպատակից կկարողանա հետևել նորություններին:

**Բովանդակությունը**

***Թեմա 1՝*** Տեղեկատվական տեխնոլոգիաները և համակարգիչը: Լոկալ ցանցերը և նրանց հետ աշխատանքը: ***Թեմա 2՝*** Համացանց, նրա հնարավորությունները: Internet Explorer ծրագրի ինտերֆեյսը, մենյուն, գործիքները, կարգավորումները: Փնտրում համացանցում: Հասցեների փնտրում համացանցում: Համատեղ աշխատանք փաստաթղթերի հետ: ***Թեմա 3՝*** Էլեկտրոնային փոստ, նրա հնարավորությունները: Անհատական հասցեի կազմակերպում, փոստի առաքում և ստացում: Ծառայողական ծրագրերի փաթեթի բեռնավորում և ծրագրային թարմացումներ: Տեղեկատվության ավտոմատ ստացում:***Թեմա 4՝***Գրաֆիկական ֆայլերի տիպերը: Արխիվատորներ: Մուլտիմեդիա ֆայլերն համացանցում: Տեղեկտվության կարգավորումը և պահպանումը տարբեր կրիչների վրա: ***Թեմա 5՝*** Ներկայացումների պատրաստում: NOf PowerPoint ծրագիրը: Աշխատանք սկաների հետ: Adobe Reader ծրագիրը: Աշխատանք տպիչ սարքի հետ: Տպիչի կարգաբերում: Իլյուստրացիաների տպում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից մեկը անցկացվում է գրավոր աշխատանքի,իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1միավոր:Միավորի քայլը 0,5 է :

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2.5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

«*Մասնագիտության արդիական հիմնախնդիրները*» (3 կրեդիտ )
Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ,քննություն

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել ժողովրդական արհեստների և արվեստների վերհանման, ազգային ոճի պահպանման և վերարտադրության տեսակետից կիրառական արվեստի ստեղծագործությունների և դրանց ակունքների, ծագումնաբանության, անցած երկարատև ուղու ուսումնասիրության մշակույթ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1.կծանոթանա կիրառական արվեստի նմուշների՝ որպես առաջնակարգ արտահանվող առևտրի առարկա լինելու կենտրոնների, վաճառահանման շուկաների, տնտեսական եկամտաբերության բարձր մակարդակին,

2.կծանոթանա կիրառական արվեստների առանձին տեսակներին:

**Բովանդակությունը**

***Թեմա 1՝*** Առարկայի նպատակը և խնդիրները:Հայկական կիրառական արվեստի ուսումնասիրությամբ զբաղվողների և այլոց ուսումնասիրությունների արժևորումը: ***Թեմա 2՝*** Գործվածք: Հայկական գործվածքի արժևորումը հայ մատենագրության մեջ: Գործվածքի տեսակները:***Թեմա3՝***Դիպակ: Մետաքսագործություն: ***Թեմա***4Դաջազարդություն:***Թեմա5՝*** Ասեղնագործություն: ***Թեմա 6՝***Ժանեկագործություն: ***Թեմա 7՝***Հայոց գորգագործական մշակույթը: ***Թեմա 8՝*** Կարպետագործական մշակույթը Հայաստանում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրն անցկացվում է բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունն բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5միավոր:Միավորի քայլը 0,5 է :

**Մասնագիտական պարտադիր դասընթացներ**

«***Կոմպոզիցիա -1***» (9 կրեդիտ )
Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, հանրագումարային քննություն

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել հայկական զարդարվեստում կենդանական, բուսական և մարդկային ֆիգուրների ոճական առանձնահատկությունները, ուսումնասիրել թվային շարժման առանձնահատկությունները:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կսովորի ստեղծել ոճավորված պատկերներ և ֆիգուրներ ու դրանցով ստեղծել շարժուն խմբավորումներ,
2. կկարողանա ստեղծել գեղագիտական բարձր արժեք ունեցող գոբելեններ:

**Բովանդակությունը**

***Թեմա 1՝*** Կատարել մարդկանց, կենդանիների, թռչունների, բնության ճեպանկարներ և ստեղծել այդ պատկերումների ոճավորված խմբավորումները: ***Թեմա 2՝***Ստեղծել բարդ թեմատիկ, բազմաֆիգուր գոբելենների էսքիզ-նախագծեր տաբեր ոճերով՝ ինտերյերի համապատասխան ընտրությամբ:

*Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Հանրագումարային քննությունն անցկացվում է դիտում-քննության տարբերակով՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

«***Կոմպոզիցիա -2***» (8 կրեդիտ )

Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, հանրագումարային քննություն

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել հայկական ծեսերին, տոներին, ավանդույթներին, մեկնաբանել դրանց խորհուրդները:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա մտահղացումը իրականացնելու համար ընտրել տարբեր արտահայտչամիջոցներ,
2. կսովորի ժողովրդական ծեսերը, տոները, արարողությունները արտահայտել դեկորատիվ մեկնաբանությամբ:

**Բովանդակությունը**

***Թեմա 1՝*** Ստեղծել բարդ կոմպոզիցիոն թեմատիկ էսքիզներ տարբեր ծեսերի, տոների, ավանդույթների դեկորատիվ մեկնաբանությամբ: ***Թեմա 2՝***Ստեղծել գորգի, կարպետի, գոբելենի, բատիկայի էսքիզներ/մագիստրոսի ընտրությամբ/ ընտրված կոնկրետ ինտերյերի համար:

*Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Հանրագումարային քննությունն անցկացվում է դիտում-քննության տարբերակով՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

«***Կոմպոզիցիա -3***» (6 կրեդիտ )

Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, հանրագումարային քննություն

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել ուսումնասիրել հայկական գորգերի և կարպետների պահպանված նմուշները, ինչպես նաև դեկորատիվ կիրառական արվեստի ժամանակակից նկարիչների ստեղծած գորգերի էսքիզները:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կսովորի աշխատել տարբեր ոճերով՝ ստեղծելով դասական ոճի ժամանակակից գորգեր,
2. կկարողանա ստեղծել գորգերի տեխնիկական նկարներ՝ կատարելով անհրաժեշտ տեխնիկական հաշվարկները և գունազարդարման խնդիրները:

**Բովանդակությունը**

***Թեմա 1***՝Ստեղծել գորգի կոմպոզիցիոն պատկերներ՝ինտերյերի համապատասխան ընտրությամբ: ***Թեմա 2***՝Ստեղծել գորգերի տեխնիկական նկարները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Հանրագումարային քննությունն անցկացվում է դիտում-քննության տարբերակով՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

«*Աշխատանք նյութի վրա-1*» (9 կրեդիտ )

Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, հանրագումարային քննություն

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել վերանայել նախկինում կատարված աշխատանքները, քննարկել դրանց որակը, էսքիզները և ընտրել համապատասխան բարդության էսքիզ՝ գործելու նպատակով: Ծանոթանալ այլ ստեղծագործողների գոբելենների հետ: Անհրաժեշտության դեպքում օգտագործել այլ նյութեր՝ աշխատանքն առավել արտահայտիչ դարձնելու համար:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկատարելագործվի գոբելենագործության մեջ,
2.կկարողանա նյութի վրա իրականացնել իր ստեղծած ամենաբարդ էսքիզները,
3. կիմտանա ֆակտուրաներ ստանալու տեխնիկայի մեջ:

**Բովանդակությունը**

***Թեմա 1***՝ Հենքի նախապատրաստում: ***Թեմա 2***՝Գործել բարդ բազմաֆիգուր թեմատիկ գոբելեն:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Հանրագումարային քննությունն անցկացվում է դիտում-քննության տարբերակով՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

«*Աշխատանք նյութի վրա-2*» (8 կրեդիտ )
Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, հանրագումարային քննություն

**Նպատակը.**
Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել տարբեր բարդությամբ էսքիզների տեխնիկական նկարների ուսումնասիրությունը:
**Կրթական արդյունքները.**
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1. կկարողանա աշխատել տարբեր մասշտաբի տեխնիկական նկարներով,
2.կսովորի աշխատանքի վրա պահպանել պատկերների էսքիզում ստացած համաչափությունները,
3. կտիրապետի հաշվարկային գոբելենի տեխնիկային:
**Բովանդակությունը**
***Թեմա 1՝*** Հենքի նախապատրաստում: ***Թեմա 2՝***Գործել բարդ թեմատիկ հաշվարկային գոբելեն, գորգ, կարպետ, բատիկա:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***
Հանրագումարային քննությունն անցկացվում է դիտում-քննության տարբերակով՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

«*Աշխատանք նյութի վրա-3*» (6 կրեդիտ )
Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, հանրագումարային քննություն

**Նպատակը.**
Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել ներկերով աշխատելու նրբություններին, սովորեցնել տարբեր գործվածքների տեխնիկական հատկություններին և որոշել դրանց օգտագործման նպատակահարմարությանը:
**Կրթական արդյունքները.**
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1. կկարողանա աշխատել ներկերով,
2.կսովորի աշխատել տարբեր ոճերով:
**Բովանդակությունը**
***Թեմա 1՝*** Աշխատանքային մակերեսների նախապատրաստում: ***Թեմա 2՝***Գոբելենի, գորգի, կարպետի տեխնակայով պանոների ստեղծում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***
Հանրագումարային քննությունն անցկացվում է դիտում-քննության տարբերակով՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

«*Համակարգչային նախագծում- 1*» (3 կրեդիտ )
Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, քննություն

**Նպատակը.**

Դասընթացում ընդգրկված են համաշխարհային լայն տարածում ունեցող գրաֆիկական Corel Draw Adobe p ծրագրերը: Դասընթացի ընթացքում ուսանողը սովորում է առաջադրանքների, խնդիրների և անհատական նախագծային առաջադրանքների ֆոնային իրականացում:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կծանոթանա Corel Draw/CD/ և Adobe p/PhShop/ ծրագրերի գործիքների և օբյեկտների հետ, կկարողանա կատարել նախնական աշխատանք Corel Draw/CD/ և Adobe p/PhShop/գրաֆիկական ծրագրերի հետ,

2.կտիրապետի PhShop կետային և վեկտորային գործիքներին, կկարողանա ստանալ Corel Draw կորերը, շերտերը:

**Բովանդակությունը**

***Թեմա 1՝*** Կետային և վեկտորային գրաֆիկա: Գծի և գույնի հարաբերությունը: ***Թեմա 2՝*** Corel Draw/CD/ վեկտորային գրաֆիկայի համակարգի աշխատանքային միջավայրը և ինտերֆեյսը: ***Թեմա 3՝*** CD-ի գործիքները: Օբյեկտ: PhShop-կետային գործիքները: ***Թեմա4՝***CD-կորեր,հանգույցներ:PhShop-վեկտորային գործիքները: Ստեղծագործող անձի հոգեբանական առանձնահատկությունները: ***Թեմա 5՝*** Օբյեկտների կարգավորում:Պատուհանների տիպերը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրն անցկացվում է համակարգչով՝յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1միավոր:Միավորի քայլը 0,5 է :

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունն գրավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5միավոր: Միավորի քայլը 0,5 է :

«***Համակարգչային նախագծում- 2***» (3 կրեդիտ )

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, քննություն

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել, թե ինչպես է կատարվում կետային պատկերների վերականգնում և կորեկցիա, ուսուցանել նկարչություն, մակետների նախագծում, ձևավորման և տպագրական աշխատանքներ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ձեռք կբերի գույնի ընկալում,տեքստային աշխատանքի և պատկերների մշակման ունակության, կծանոթանա Corel Draw/CD/ և Adobe p/PhShop/ ծրագրերի գործիքների և օբյեկտների հետ, կկարողանա կատարել նախնական աշխատանք Corel Draw/CD/ և Adobe p/PhShop/ գրաֆիկական ծրագրերի հետ,

2.կիմտանա տարբեր ծրագրերի համատեղ կիրառման գործում, կսովորի աշխատել տպիչ սարքի և սկաների :

**Բովանդակությունը**

***Թեմա 1՝*** Աշխատանք գույնի հետ: Գունային ներկապնակները և մոդելները:***Թեմա 2՝*** PhShop-կանալները: CD-կոնտուրները, CD-արտիստիկ և հասարակ տեքստ: Տեքստը և կորը: ***Թեմա 3՝*** PhShop-տոնային և գունային կորեկցիա: PhShop-տպում և գունանջատում:***Թեմա4՝***CD-լուսաբանումների արտածումը: Փաստաթղթերի ձևավորում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրն անցկացվում է համակարգչով՝յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1միավոր արժեքով:Միավորի քայլը 0,5 է :

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունն բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր: Միավորի քայլը 0,5 է :

**«*Դասավանդման մեթոդիկա*»** (2 կրեդիտ )

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, քննություն

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել հանրակրթական դպրոցում գոյություն ունեցող մեթոդական ձեռնարկներին, աշխատանքային պլանների տարբերակներին, սովորեցնել վերլուծել դասաժամերի կազմակերպման խնդիրները, մեկնաբանել առաջադրանքների մատուցման մատչելի ձևերը:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա մատչելի ձևով մեկնաբանել նյութը,
2. կսովորի պլանավորել աշխատանքը:

**Բովանդակությունը**

***Թեմա 1՝*** Ստեղծագործական աշխատանքի առանձնահատկությունները: Աշխատանքային արվեստանոցի ձևավորում: ***Թեմա 2՝*** Դիդակտիկ նյութերի ձեռքբերում և օգտագործում: Դիաֆիլմերի ու կինոֆիլմերի օգտագործումը դասերի ժամանակ:***Թեմա3՝***Գիտահանրամատչելի գրականության օգտագործում: Ուսումնական աշխատանքների պլանավորում:***Թեմա 4՝*** Դասաժամերի ռացիոնալ օգտագործում: Մեթոդական ցուցումներ դասերի վերաբերյալ: Էքսկուրսիաների կազմակերպում: ***Թեմա 5՝***Արտադասարանային աշխատանքների կազմակերպում: Աշակերտների գիտելիքների ստուգում ու

գնահատում: ***Թեմա 6՝*** Դասերի նպատակահարմար և արդյունավետ կազմակերպում: Առաջադրանքների մատչելի ձևակերպում և մեկնաբանում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրն անցկացվում է բանավոր, յուրաքանչյուրը՝ 4միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունն բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր: Միավորի քայլը 0,5 է :

«***Կիրառական արվեստի պատմություն***» (3 կրեդիտ )

Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, քննություն

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել հայկական դեկորատիվ կիրառական արվեստի ծագման, զարգացման օրինաչափություններին, սովորեցնել ուսումնասիրել կիրառական արվեստի տարբեր ճյուղեր, տարբերակել դեկորատիվ կիրառական արվեստի երկու հոսանքները՝ ժողովրդական և պրոֆեսիոնալ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1.կիմանա հայկական կիրառական արվեստի պատմության օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները,

2. կծանոթանա կիրառական արվեստի ավանդական ճյուղերին:

**Բովանդակությունը**

***Թեմա 1՝*** Ներածություն: Թանգարաններում պահպանված հետուրարտական շրջանի/մթաV-IIIդդ/ դեկորատիվ և կիրառական արվեստի մնուշներ: ***Թեմա 2՝*** Հելլենիստական Հայաստանի /մթաIII- IVդդ/ խեցեղենը, դրամները, գեմմաները և կամեոնները: Խճանկարչությունը:***Թեմա3՝***Հայաստանի վաղ միջնադարի դեկորատիվ կիրառական արվեստը /IV-VIIդդ/: Խճանկարի արվեստի զարգացումը, պահպանված բեկորները, ձեռագիր գրքերը, «Էջմիածնի Ավետարան»-ի փղոսկրյա կազմը:***Թեմա 4՝*** Հայաստանի զարգացած միջնադարի դեկորատիվ կիրառական արվեստը/IX-XVդդ/: Փայտի գեղարվեստական փորագրում, ձեռագիր մատյաններ, մատյանների կաշվե կազմեր, մետաղի գեղարվեստական մշակում, խեցեգործություն, շողյունապատ և գունավոր թափանցիկ ջնարակապատ հախճապակի, խեցեգործության խոշոր կենտրոնները գաղթավայրերում:***Թեմա 5՝*** Հայկական գորգարվեստ: Գորգի ծագումն ու տարածումը, միջնադարյան հայկական գորգ, հայկական գորգերի գեղարվեստական հատկանիշները, ավանդական զարդամոտիվներն ու սիմվոլիկան: Հայկական կարպետ:***Թեմա 6՝***Գոբելենատիպ գործվածքներ, եկեղեցիների հյուսածո գոբելենատիպ գործվածքներ, դաջածո վարագույրեր: Ասեղնագործություն, ժանյակ և դրանց հայտնի դպրոցները: Հայկական տարազ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրն անցկացվում է թեստերով, 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստերը պարունակում է 4 թեմա, 8 ենթաթեմա, յուրաքանչյուր ենթաթեմա՝ 0,5, յուրաքանչյուր թեմա՝ 1 միավոր է: Ուսանողը միավոր ստանում է թեմայում ընդգրկված 2 ենթաթեմայի հարցերին ճիշտ պատասխանելու դեպքում: Միավորի քայլը 0,5 է :

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունն բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր: Միավորի քայլը 0,5 է :

**Կամընտրական դասընթացներ**

«***Արխիտեկտոնիկա և էրգոնոմիկա***» (3 կրեդիտ )

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, քննություն

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել քննարկել մարդուն անհրաժեշտ տարածություն և դրա մեջ հարմարավետություն ստեղծելու խնդիրները: Ուսումնասիրել մարդու մարմնի համաչափությունները տարբեր դիրքերում ըստ սեռական պատկանելիության և տարիքային առանձնահատկության:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1.կսովորի ժամանակակից կոնստրուկցիաների ձևերի ընձեռնված հնարավորություններն օգտագործել ինտերյերի ձևավորման համար,

2.կհասկանա տարածական-ծավալային կոմպոզիցիաների դեկորատիվ կիրառական նշանակությունը:

**Բովանդակությունը**

***Թեմա 1՝*** Ներածություն: Մարդաչափական տվյալներ: Մարդու մարմնի համաչափությունները կանգնած դիրքում և նստած դիրքում: Տղամարդու և կնոջ որոշ համաչափությունները կանգնած դիրքում: ***Թեմա 2՝*** Մարդու անհրաժեշտ տարածությունը տարբեր չափերի սարքավորումների և կահույքի միջև: ***Թեմա3՝*** Մարդու անհրաժեշտ տարածությունը մարմնի տարբեր դիրքերի դեպքում: Մարդկային խմբերի զբաղեցրած տարածության չափերը:***Թեմա 4՝*** Նախադպրոցական տարիքի և դպրոցական տարիքի երեխաների հիմնական մարդաչափական տվյալները:***Թեմա 5՝*** Տարածական ծավալային կոմպոզիցիա մեկ կրկնվող էլեմենտից /կոնուս,պրիզմա,բուրգ/: Տարածական ծավալային կոմպոզիցիա մեկ կրկնվող գնդաձև էլեմենտից:***Թեմա 6՝*** Ոսկյա հատվածքները բնության մեջ և արվեստում: ***Թեմա 7՝*** Առարկայի ձևերի կախվածությունը օգտագործվող մատերիալներից, կոնստրուկցիայից և արտադրության տեխնոլոգիայից: Զրույց ժամանակակից կոնստրուկցիաների ձևերի մասին: ***Թեմա 8՝***Տարածական ծավալային կոմպոզիցիա խառը երկրաչափական

էլեմենտներից:***Թեմա 9՝***Մաթեմատիկական ***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 9 միավոր արժեքով:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 2,25 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 2,25 է:
և երկրաչափական համաչափություններ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսվում է հանրագումարային քննություն՝ դիտում- քննության տարբերակով՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

«*Հեռանկարչություն* » (3 կրեդիտ )

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, քննություն

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել հեռանկարչություն՝ արտահայտված գծով, գույնով և տոների միջոցով, հեռանկարի ստացման ձևերը, ծավալների պատկերման տարբեր միջոցները: Ծանոթացնել հեռանկարի կառուցման շառավղային /Դյուրերի մեթոդ/ եղանակին՝ ինտերյերի համար, զարգացնել տեսողական հիշողությունը:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1.կսովորի հեռու և մոտիկ առարկաների չափերի կրճատման առանձնահատկությունները,

2.կկարողանա առաջին և երկրորդ պլաններում գույների և տոների միջոցով ստեղծել տարածական պատրանք:

**Բովանդակությունը**

***Թեմա 1՝*** Գծային, գունային, տոնային հեռանկար: Ծավալային պատկերումը հեռանկարում:***Թեմա 2՝*** Գեղանկարի կառուցում հեռանկարում, երկրաչափական մարմինների և նատյուրմորտների կառուցում հեռանկարում:***Թեմա3՝*** Գիպսե սիմետրիկ և ասիմետրիկ զարդաքանդակների պատկերումը հեռանկարում: ***Թեմա 4՝*** Նկարել կահույքի խմբավորումներ բնօրինակից:***Թեմա 5՝*** Նկարել տարբեր սենյակների գծանկարներ/3-4 օրինակ/ բնօրինակից: Նկարների մի մասը կրկնել հիշողությամբ:***Թեմա 6՝*** Կատարել ճաշասենյակի տոնային երկարատև գծանկար բնօրինակից: Կրկնել նկարը հիշողությամբ:Կրկնել նկարը հիշողությամբ հակառակ դիրքից:***Թեմա 7՝*** Քաղաքային բնանկար ծառերով:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված է հանրագումարային քննություն՝ դիտում-քննության տարբերակով՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

«*Արվեստի ոլորտի կառավարում*» (3 կրեդիտ )
Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, քննություն

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել մշակութային քաղաքականության կիրառվող մեխանիզմներին, սովորեցնել իրավական պետության սկզբունքները և կառավարման մեթոդները, ընդհանրական պատկերացում ստեղծել մշակույթի ոլորտում մենեջմենթի յուրահատկությունների մասին, ծանոթացնել մշակութային քաղաքականության գոյություն ունեցող մոդելներին և հայեցակարգերին, ժամանակակից զարգացած եվրոպական պետությունների մշակույթի կառավարման պրակտիկային:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1.կկարողանա առանձնացնել մշակույթի մենեջմենթի խնդիրները,

2.կիմանա մշակութաբանության խնդիրները տնտեսության իրական դաշտում, մշակույթի կառավարման ոլորտում:

**Բովանդակությունը**

***Թեմա 1`*** Մշակույթային քաղաքականության և մենեջմենթի ծրագիր: Ազգային շահերը մշակույթի ոլորտում:***Թեմա 2`*** Մշակութային քաղաքականության օրենսդրական և գործադիր ճյուղերը: Մշակութային քաղաքականության տնտեսական ասպեկտները:***Թեմա3`*** Հասարակական կազմակերպությունները մշակույթի ոլորտում: Պետական և հասարակական կառույցների փոխհամագործակցությունը:***Թեմա 4`***Մենեջմենթը որպես մշակույթի ոլորտում կառավարման տեսություն:***Թեմա 5`*** Մենեջմենթի առանձնահատկությունները մշակույթի ոլորտում:***Թեմա 6`*** Մենեջմենթի տեխնոլոգիայի էվոլյուցիան:***Թեմա 7`*** Ռազմավարական կառավարումը մշակույթի ոլորտում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրն անցկացվում է թեստերով, 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստերը պարունակում է 4 թեմա, յուրաքանչյուր թեմա`2 ենթաթեմա: Յուրաքանչյուր ենթաթեմա գնահատվում է 0,5միավոր, յուրաքանչյուր թեմա`1 միավոր:Ուսանողը միավոր ստանում է թեմայում ընդգրկված 2 ենթաթեմային միաժամանակ ճիշտ պատասխանելու դեպքում: Միավորի քայլը 0,5 է :

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունն բանավոր է` 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը` 2,5 միավոր: Միավորի քայլը 0,5 է :

«***Դիցաբանություն***» (3 կրեդիտ )
Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, քննություն

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել հայկական և այլ ժողովրդների դիցարանները, որոնք առնչվում են կրոնի, ծիսակարգի հետ, համեմատել հունական, հնդկական, չինական, հռոմեկան և այլ դիցարանները, վերլուծել առասպել-ծիսակարգ փոխառնչությունները, քննարկել առասպելների ծագման ժամանակը:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա դիցաբանություն առարկայի ուսումնասիրության հիմնական ուղղությունների էությունը,

2.կծանոթանա հայկական և այլ ազգերի դիցարանների էությանը:

**Բովանդակությունը**

***Թեմա 1՝*** Դիցաբանություն/առասպելաբանություն/ առարկան: Կրոնի ծագումը և կառուցվածքը: Կրոնի նախնական ձևերը/ֆետիշիզմ,տոտեմիզմ,անիմիզմ/:***Թեմա 2՝***Նեոլիթյան հեղափոխությունը. Դիցարանների ձևավորումը: Աշխարհաստեղծման /կոսմոգոնիական/ առասպելները:***Թեմա3՝***Մեռնող և հարություն առնող աստվածությունների մասին առասպելները:***Թեմա 4՝***Հին Հնդկաստանի կրոնական համակարգերը /վեդայական կրոն բրահմայականություն, բուդդայականություն, հինդույականություն/:***Թեմա 5՝*** Հին չինական դիցաբանությունը: Զրադաշտականությունը: Հունական դիցաբանությունը: Հունական դիցերգությունների կառուցվածքը:***Թեմա 6՝*** Էտրուրիայի կրոնը: Հռոմեական կրոնը: Հռոմի մասին առասպելը: Հայկական լեռնաշխարհի կրոնական համակարգերը:***Թեմա 7՝*** Վաղնջահայկական առասպելաբանությունը: ***Թեմա 8՝***Դևապաշտությունը Հայաստանում /հայկական դեմոնիզմը/: ***Թեմա 9՝***Հին հայկական դիցաբնությունը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրն անցկացվում է թեստերով, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստերը պարունակում է 4 թեմա, յուրաքանչյուր թեմա՝ 2 ենթաթեմա: Յուրաքանչյուր ենթաթեմա գնահատվումէ 0,5 միավոր, յուրաքանչյուր թեմա՝1 միավոր: Ուսանողը միավոր ստանում է թեմայում ընդգրկված 2 ենթաթեմային միաժամանակ ճիշտ պատասխանելու դեպքում: Միավորի քայլը 0,5 է :

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունն բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր: Միավորի քայլը 0,5 է :

«***Գեղագիտություն***» (3 կրեդիտ )

Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, քննություն

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել արվեստաբանությանը, փիլիսոփայությանը, սոցիոլոգիային, մշակութաբանությանը, գեղագիտական ծագման մանրամասերին, ընբռնել արվեստի հոգևոր դերն ու նշանակությունը:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կծանոթանա արդի նկարչության և դիզայնի պատմությանը,
2. կհասկանա գեղագիտության դերը մարդու զարգացման գործընթացում և կծանոթանա գեղագիտության ժամանակակից մեթոդներին:

**Բովանդակությունը**

***Թեմա 1՝*** Գեղագիտություն առարկան և նրա կատեգորիաները: Գեղագիտության զարգացման ընթացքը: ***Թեմա 2՝***Արդի նկարչության պատմություն: Դիզայն, դիզայնի պատմություն: ***Թեմա3՝***Մշակույթ,մշակույթի թեորիան անտիկ ժամանակներից մինչ կլասիցիզմ:***Թեմա 4՝***Բնությունը որպես գեղագիտության ամենակարևոր գործոն: Մարդկության հայացքների կենտրոնացումը դեպի բնություն: ***Թեմա 5՝*** Վարվեցողություն և գեղագիտություն: Գեղագիտության և վարվեցողության դերը մարդու կյանքում և նրա զարգացման ընթացքը:***Թեմա 6՝*** Արվեստի փիլիսոփայություն: Գեղագիտության կարևորությունը մարդկության կյանքում: Ֆրանկֆուրտյան դպրոց:***Թեմա 7՝*** Գեղագիտությունը որպես ժամանակակից գիտելիքների հիմք: Գեղագիտության երեք մասերը՝ դասական, ոչ դասական և հետ ոչ դասական գործոններ: Գեղագիտության հարաբերակցությունը իրականության նկատմամբ:Արվեստը որպես հոգևոր վերարտադրման հատուկ ձև: Գեղագիտությունը որպես մշակութաբանության հումանիտար գիտության կենտրոն:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրն անցկացվում է թեստերով, յուրաքանչյուրրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստերը պարունակում է 4 թեմա, յուրաքանչյուր թեմա՝ 2 ենթաթեմա: Յուրաքանչյուր ենթաթեմա գնահատվում է 0,5 միավոր, յուրաքանչյուր թեմա՝ 1 միավոր: Ուսանողը միավոր ստանում է թեմայում ընդգրկված 2 ենթաթեմային միաժամանակ ճիշտ պատասխանելու դեպքում: Միավորի քայլը 0,5 է :

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունն բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր: Միավորի քայլը 0,5 է :

« ***Խորհրդանիշը արվեստում*** » (3 կրեդիտ )

Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, քննություն

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել զարդանախշերի հիմնական ձևերին և դրանց կառուցման առանձնահատկություններին, զարդերի, գաղափարանշանների և խորհրդանիշերի ծագումնաբանությունը և իմաստաբանությունը հետ: Ինչպես նաև հայկական տառերի թվային արժեքների և դրանցով զարդեր ստեղծելու համակարգին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կծանոթանա զարդարվեստի հիմնական ձևերին,

2.կկարողանա տառերի թվային արժեքներով ստեղծել գաղափարների երկրաչափական մոդելը:

**Բովանդակություն**

***Թեմա 1***՝ Հայկական զարդարվեստը, նրա տեղն ու դերն արդի ժամանակներում: Արարման և մարդու աշխարհընկալումների մոդելավորում: Գաղափարագրերի ծագումը և իմաստավորումը:***Թեմա 2***՝Ծաղիկները և վարսանդա-պտղային օրգանները զարդարվեստում: Հատիկա-սերմային մոտիվները զարդարվեստում:***Թեմա3***՝Չորս էլեմենտները և նրանց հետ կապված մոտիվները զարդարվեստում :Ծնող-զույգի, զավակի և նրանց հետ կապված մոտիվները զարդարվեստում:***Թեմա 4***՝Տոհմա-ընտանեկան հարաբերությունների արտացոլումը զարդարվեստում: Դուալ և ֆրատրիալ կազմավորումների հետքերը զարդարվեստում:***Թեմա 5*** Մուտք, խորան, սյուն, մատուռ, գմբեթ, աշտարակ, տաճար, զավազան, տարազ և նրանց զարդերը***Թեմա 6***՝ Տոնահանդեսների, ծեսերի, միստերիաների հետ կապվող մոտիվները և թատերական տեսակները զարդարվեստում:***Թեմա 7***՝ Պայքարի մոտիվները և վիշապամարտի դիցաբանությունը զարդարվեստում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրն անցկացվում է թեստերով, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստերը պարունակում է 4 թեմա, յուրաքանչյուր թեմա՝2 ենթաթեմա: Յուրաքանչյուր ենթաթեմա գնահատվումէ 0,5 միավոր, յուրաքանչյուր թեմա՝1 միավոր: Ուսանողը միավոր ստանում է թեմայում ընդգրկված 2 ենթաթեմային միաժամանակ ճիշտ պատասխանելու դեպքում: Միավորի քայլը 0,5 է :

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունն բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր: Միավորի քայլը 0,5 է :

## ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսումնական օրացույցը բակալավրիատի և մագիստրատուրայի համար 2012 / 2013 ուսումնական տարի

*Աշնանային կիսամյակ*

| **01 սեպտեմբերի 2013թ.–22 հունվարի 2014թ.** | |
|---|---|
| Ուսուցման սկիզբը | 03 սեպտեմբերի |
| 1-ին փուլի ընթացիկ ստուգումներ | 15 -27 հոկտեմբերի |
| 1-ին փուլի ընթացիկ քննություններ | 15-27 հոկտեմբերի |
| 2-րդ փուլի ընթացիկ ստուգումներ | 10-22 դեկտեմբերի |
| 2-րդ փուլի ընթացիկ քննություններ | 10-22 դեկտեմբերի |
| Ստուգարքների հանձնում | 17-29 դեկտեմբերի |
| Ուսուցման ավարտը | 22 դեկտեմբերի |

| | |
|---|---|
| Քննաշրջան | 08 հունվարի -23 փետրվարի |
| Ձմեռային արձակուրդներ | 29 հունվարի-07 փետրվարի |

*Գարնանային կիսամյակ*

| 08 փետրվարի 2014թ.–30 հունիսի 2014թ. | |
|---|---|
| Ուսուցման սկիզբը | 08 փետրվարի |
| 1-ին փուլի ընթացիկ ստուգումներ | 21 մարտի-02 ապրիլի |
| 1-ին փուլի ընթացիկ քննություններ | 21 մարտի-02 ապրիլի |
| 2-րդ փուլի ընթացիկ ստուգումներ | 16 -30 մայիսի |
| 2-րդ փուլի ընթացիկ քննություններ | 16-30 մայիսի |
| Կուրսային աշխատանքների և ստուգարքների հանձնում | 30 մայիսի-04 հունիսի |
| Ուսուցման ավարտը | 04 հունիսի |
| Քննաշրջան | 06-25 հունիսի |
| Պետական մասնագիտական քննություն և ավարտական աշխատանքի պաշտպանություն | 25 ապրիլի-31 մայիսի |
| Ամառային արձակուրդներ | 30 հունիսի-31 օգոստոսի |

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԱԽԱԲԱՆ ........................................................................................3
ԲԱԺԻՆ I. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ...........................................5
1. Ընդհանուր դրույթներ.................................................................6
2. Կրեդիտային համակարգի ընդհանուր նկարագիրը..........................6
2.1.Կրեդիտային համակարգի հիմնադրույթները..............................6
2.2.Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները....................8
2.3.Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը .................................................................9
3. Դասընթացները և կրթական մոդուլները ......................................9
4. Կրեդիտների հատկացումը............................................................. 10

5. Կրթական ծրագրերի ավարտական պահանջները ........ 10
5.1. Բակալավրի ծրագիր ........ 10
6. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը ........ 11
6.1. Համակարգի հիմնադրույթները ........ 11
6.2. Գնահատման մեթոդաբանությունը ........ 12
6.3. Ընթացիկ և եզրափակիչ գնահատման կազմակերպումը ........ 15
6.4. Գնահատման սանդղակը և նշագրումը ........ 15
6.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը ........ 16
6.6. Ուսման առաջադիմությունը ........ 17
7. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը ........ 18
8. Դասընթացների տեղեկագիրքը ........ 20
9. Կրթական ծրագրերի եզրափակիչ ատեստավորումը ........ 20
9.1. Բակալավրի ծրագիր ........ 20
10. Կրեդիտների փոխանցումը ........ 22
11. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը ........ 22
12. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները ........ 23
13. Եզրափակիչ դրույթներ ........ 23
**Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր ........ 24**
**ԲԱԺԻՆ II. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ........ 31**
*Մաս I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ* ........ 32
1. Ուսումնական ծրագրի կառուցվածքը ........ 33
2. Ծրագրի բովանդակությունը ........ 33
2.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս ........ 33
2.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս ........ 34
2.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս ........ 35
2.4. Կրթական այլ մոդուլներ ........ 36
***Մաս II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ ........ 38***
1. Տեղեկագրքի նպատակը ........ 39
2. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ ........ 40
2.1. Պարտադիր դասընթացներ ........ 40
3. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ ........ 48
3.1. Պարտադիր դասընթացներ ........ 48
4. Ընդհանուր մասնագիտական դասընթացներ ........ 49
4.1.«Կիրառական արվեստ» մասնագիտություն ........ 49
4.2. Կամընտրական դասընթացներ ........ 93
5. Կրթական այլ մոդուլներ ........ 102
5.1.«Կիրառական արվեստ» մասնագիտություն ........ 102
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսումնական օրացույցը ........ 104